


■ ... Հայը պիտի ապրի՝ հակառակ դահիճներուն, եւ հակառակ իր առիւծի աչքին տակ բուսած կորեկին: Հայը պիտի ապրի ժողովուրդներու սիրապօղ մէկ ոսկի օղակն ըլլալու համար: Այս է մեր բոլորիս յոյսը, յոյս մը՝ զոր մուրճով կռեցինք ինչպէս մեր պապերէն մէկուն նիպակը՝ որ նպատակին կը դիմէր օդին եւ արեւուն մէջ երգելով:

■ ... Ճշմարիտ բանաստեղծութիւնը մարտիրոսութիւն մ'է՝
ամէն բառի մէջ սրտին կաթիլ - կաթիլ արիւնումն է ստեղծելը:

■ ... Անպատճառ
ամբողջ Հայաստանը
պէտք է տեսնել:
Կ'ուզեմ համբուրել այն
տեղերը՝ ուր նահատակ
մը ինկառ կամ հերոս մը
կոխեց: Մենք այնքան
մեծ ենք, որքան որ
հողէն կը խմենք մեր
զգացումները: Ամէն
ինչ հող է: Գէպի մեր
պապերուն: Որ է՝ դէպի
աստուածները:

Գ. ՎԱՐՈՒԺԱՆ



ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

1.-	***	Վարուժանի բնձամ, մեր փառքը
3.-	***	Ա. Շարուրեանի «Տարեգրութիւն»ը
4.-	***	Դ. Վարուժանի՝ թուականներով եր թիւերով
29.-	Մ. ԻՇԵԱՆ	«Լոյսը»
31.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Լոյսը
33.-	Յ. ԳԵՂԱՐԴ	Դամիէլ Վարուժանի՝ հայ լեզուի ու ոգիի բարեկարգումը
51.-	Ս. Պ. ՏԱՏՈՅԵԱՆ	Դամիէլ Վարուժանի՝ իմացական-գեղարքի- տական դրոշմը իրրու հակաթեղ համայնապաշտօնական
60.-	Ս. ՏԱՐՕՆՅԻ	Դամիէլ Վարուժան
60.-	Լ. ՄԻՆԱՍ	Քերթազ մեծ
61.-	Ն. ԳԻՄԱՔՍԵԱՆ	Ազգային՝ մշակոյթ թէ մշակութային ազգ
72.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Առաջին ծիլեր
73.-	D. V.	Les Premiers Germes (Traduit par Luc-André Marcel)
73.-	Լիւի-ԱնՏՐԷ ՄԱՐՍԵԼ	«Հայրի երգը»
74.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Կուրբու գիշեր
75.-	D. V.	La nuit sur L'aire (Traduit par Vahé Godé)
78.-	Վ. ՆՈՐԾՆՅ	Դամիէլ Վարուժան
78.-	ԼՈՒԿՎԻԿ ԴՈՒՐԵԱՆ	Դամիէլ Վարուժան
79.-	Յ. ԿԱՐԱՊԵՆՆՅ	Հագի եւ լոյսի երգիչը
83.-	ՅԱԿԱՆ ՇՈՂԵՆՅ	Դամիէլ Վարուժան
86.-	Փ. ՃԵՐԱՆԵԱՆ	Նրգիմ արձագանգը
87.-	Յ. ՕՇԱԿԱՆ	Օրն օրերուն
91.-	Յ. ՄԱՆՈՒԿԵԱՆ	Կնոթական դիմապատկերը Վարուժանի ֆերթադութեան մէջ
99.-	ՎԱՀԱԳՆ ԿՈՐԵՆՅ	Վարուժանին
101.-	Վ. ԹԵՔԵԱՆ	Իրրու արդի եւ Յայտաւայր
109.-	Ե. ՉԱՐԵՆՅ	Մահուան տեսիլ (Հասարակած)
111.-	Մ. Ս. ՀԵՐԿԵԼԵԱՆ	Հեքիմաստար
114.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Կակաչներ
115.-	D. V.	Mohnblumen (Aus dem Armenischen von Raffi Kantian)
116.-	Ա. ՇԱՐՈՒՐԵԱՆ	Վարուժանի «Տարեգրութիւն»էն
118.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Կարմիր հողը
119.-	D. V.	The Red Soil (Translated by Diana Der Hovanesian)
124.-	Մ. ՎԵՍՊԵՐ	Կերթաւ ազբիրը լոյսին
125.-	Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ	Վարուժանի՝ մեր դասականը
142.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Հայկոյանք
145.-	Դ. ՎԱՐՈՒԺԱՆ	Օրհնութիւն

ՃՇԳՈՒՄՆԵՐ, ՀԱՍՏԱՏՈՒՄՆԵՐ, ՄՏԱԾՈՒՄՆԵՐ

Էջ՝ 47, 48, 50, 58, 71, 72, 76, 77, 84, 98, 100, 105, 106, 108, 110, 117,
122, 123, 140, 141

Տեղի անձկութեան պատճառով՝ մերկայ բացառիկին համար սմբատ-
ւած ու պատրաստուած Մարգար Աւետիսեանի, Սուրեն Աղաբաբեանի, Վագ-
գէն Շուշանեանի, Սարգիս Կիրակոսեանի, Պողոս Սմապեանի գրութիւնները
իմչպէս նաեւ Վարուժանի վաստակին անընչազ շարք մը նշանակելի հար-
կադրաբար յետաճեցեցին մեր յաջորդ թիւերուն:

Բազմ

ԱՅՍԱԳԻՐ ԳՐԱԳԱՆՈՒԹԵԱՆ Ե ԱՐՈՒԵՍՅԻ

Գ. ՅԱՐԻ, ԲԻԻ Է-Ց ԱՊՐԻԼ - ՄԱՅԻՍ 1955 ՎԵՐՈՒՄ

ՎԱՐՈՒԺԱՆԻ ԸՆԾԱՆ, ՄԵՐ ՓԱՌԲԸ

Ըսած էինք, որ «Բազմ» Դանիել Վարուժանին հանդէպ ունեցած իր պարտքը պիտի կատարէ՝ մեծ բանաստեղծի ծննդեան 100ամեակը միացնելով նահատակութեան 70ամեակին, Ապրիլ ամսոյն, անոր խորհրդանշական անձնատրութեան ընդմէջէն ընծայելով նաեւ մեր յարգանքը իր գրչի հարիւրաւոր ընկերներուն ու բիւր բիւրոց նահատակներուն:

Ներկայ թիւը խոստացուած այդ ձեռնարկին իրագործումն է, որ ընթերցողին կը ներկայանայ ամսով մը ուշ, հասկնալի պատճառներով:

Մինչ այդ սակայն, եայրենի երկինքին սակ թէ Սփիւռքի տարածքին Դանիել Վարուժանի ծննդեան 100ամեակին առիթով մեր ժողովուրդը վարուեցաւ այնպէս՝ ինչպէս արժանի էր բանաստեղծը ինք, եւ ինչպէս վայել էր իրեն՝ հայ ժողովուրդին:

Սկսեալ անցեալ տարուան Ապրիլէն՝ պետական, կուսակցական, մշակութային ու հայրենակցական բոլոր մեղաքոյակներուն վրայ, ամէնուն մօտ ու ամէնուրեք, Վարուժանի անունն էր, վարուժանեան վերիբառարկութիւն, վարուժանեան հանդիսութիւն, վարուժանեան բացառիկ, կարճ կամ երկարաչունչ մենագրութիւններ, համընդհանուր թարմացումը՝ Վարուժանի, համընդհանուր թարմացում մը՝ Վարուժանով:

Մեծարանքի ընթացիկ գեղում չէր, ուրիշ բան էր ինչ որ տեղի ունեցաւ Վարուժանի առիթով անցնող տասներկու ամիսներուն ընթացքին, մեծագործութեան նախնայնորով ոգոյութիւն տարի էր կարծէք, գեղեցկութեամբ արբեմալու տարի, ցեղային խորհուրդին հաղորդուելու տարի, լինելութեան տարբերակները վերանորոգելու հաւատախոր տարի:

Երբէք հատոր ու եռամեծ փառք մը, որուն շառայներուն մէջ միշտ մենք եմք ու մենք, խաղաղատենչ մեր ժառանգու-

10097-86

թեան, յուսարագ՝ մեր ըղձաւորութեան, ապստամբ մեր հոգիին, լծընկէց մեր կամքին, այլասիրութեան ու բաշխուելու ընդոծիմ մեր ձգտումներուն բոլոր երեսներով:

Դանիել Վարուժան քրքրեց աւերակները ու աւերումէ գերծ գեղեցկութիւններ ընծայեց ժողովուրդին վայելումին, տարտղնեց մոխիրները ու ամմարելի կրակներ կտակեց, փարատեց հայոց երկինքին վրայ կուտակուած ամպերը ու լռյս հեղեղեց, ջարդը երգեց ու արիւնու մոյմ իրադարձութեան ընդմէջէն առաւ վարդահեղեղ արշալոյսին ոտնաձայնը եւ յուսարեկութեան փոխարէն արութեան բոցերով ողողեց վերապրողներուն հոգին, միշտ հաւատարմարծ եղանակով մը, իրաւութեամբ, խորութեամբ, քրմական պերճութեամբ մը, մոզութեամբ:

Նկատուած է ու նկատողներէն առաջ ընթերցողը արդէն ամձամբ ճշդած, որ Վարուժանի միւթերը բանաստեղծութիւն ըլլալէ առաջ կեանք էին իր մէջ. անցած զարգացման բարդ հանրավոյթներէ, երկար ժամանակի մը վրայ:

Ամիսփենք մէկուն մախապատմութիւնը, շագախուած՝ իր կերպընկալ տարիներուն, — ամբողջ վեց տարի՝ հօրը կարօտը, երկրորդ վեց տարի մը՝ հօրը իջեւանած խանին մէջ պանդուխտներուն անհանգչելի կարօտին հուրը ջիղերուն վրայ, մօրը կարօտը՝ վեցնտիկի մէջ, հայու կարօտը՝ Կանտի, հայրենիքի կարօտը՝ ամէն քայլի ու ամէն վայրկեան ու... «կարօտի նամակ»ը: Վարուժանի բոլոր հանգամանաւոր կտորները կարելի է դիտել այս օրինակին վրայ: Աչքով, մորթով, նեարդներով, էութեան բոլոր լարերով ծանօթ էր թուղթին յանձնուած միւթերուն, ապրած էր անոնց դողը, ճաշակած թոյնը, գիմին, մէ՛ն մի սարսուռը: «Մի կեանքէս ընտրուած կտորներս, — կ'ըսէ տեղ մը իմէ, — ապահով եղէք, որ միշտ ապրուած են, գէթ մասամբ, եթէ ոչ չեմ գրէր, կամ չեմ կրնար գրել»:

Աւելցնենք ու ըսենք, որ Վարուժանի հոգիին վերանոյ կեանքը միայն տեսանելի ու միայն շօշափելի չէր, այլեւ երեւակայութեամբ ընկալուածը, այլեւ հետուէն իմացածը: Յատկանըշական է Ատանայի ջարդին առիթով կատարած իր մէկ խոստովանութիւնը, մարդկային, աստուածային.

«Լուրերը այնքան գէշ ազդած են վրաս՝ որ կը ցաւիմ Ատանա չգտնուելու համար»:

Ահա՛ մարդը:
Մարդերուն ամէնէն ընտիր տեսակը:
Ուրիշին տառապանքը բաժնելու աստուածային շագախով ծնած արին:
Հայրենանուէր խառնուածքը:
Ո՛րճը:

Ամ՝ որ գրասեղանին վրայ դրուած այն մը հոգին մէջ ամբողջ ազգ մը կը տեսնէր, ամ՝ որուն ափ մը սրտին մէջ մոյմ ազգը տեսաւ իր նակատագրին ու անհատականութեան մայր գիծերը, մեծ ցաւին հետ՝ իր ծլարձակ գեղեցկութիւնը, սէրերուն հրայրքը, ապրումներուն պապալալուն կշռոյթը, արութեան արակը:

Վարուժանի ընծան, մեր փառքը
digitised by A.R.A.R.@

1984ին, Հայաստանի գիտությունների ակադեմիայի գիտության բաժանմունքի որոշումով լրջա տեսակ հայրենի երես ժողովուրդի անդամները Եւրոպայի Եւրոպայի պատրաստում էրանիլ Վարուժանի կամիի եւ տեղեկագրութեան տարեգրութեանը առեւտրական աշխատանքները, որ կ'ընդգրկէ ժեռ բանաստեղծի կեանքը, մեռելէ մինչեւ նախաստեղծի սրբի:

Գրեթէ ըսեմք անմիջապէս, որ ժեռի երես լէ մեր մեծանուն գրողներէն մէկուն կենսագրութեան նուիրուած ամբողջական հասար մը, որ ունենար Արեւրս Եւրոպայի պատրաստում ճշտութեամբ արեւելքի մարտիկներէն առաջինը, Հայրենի մատուցանի պատրաստում այս աշխատութեան մէջ ընթացող կը գտնէ երեսուն տարիներու զբաղման վարուժանի ոչլ առեւտրական, առեւտրութեան ստեղծագործութեան կազմում արեւ մտերմանութիւններով, որոնք նոյն տան կ'ուրուագծեն տակաւ շրջանը, լրջանի մեծ երազարմութիւնները, վերակառարները:

Ըսինք, որ ճշտագրութեանը կ'ընդգրկէ Վարուժանի կեանքը մինչեւ մահ: Ընթացողը երախտագիտութեամբ լեզուելով հանդերս այս կերտական աշխատանքին հանդէպ, կարտը կը զբաղ Վարուժանի յիմանու. կենսագրութեան, որ հասարար մաս կը կազմէ Եւրոպայի նախանման ինչիս ու իրանման մատարանի կեանքի նոր ծրագրերը...

Կենսագրական հետազայ կ'ընուն ինչստեղ անիլ տեղոսը մեծ ամբողջութեան յիշում գրութի:



ՀԱՅՍՏԱՆԻ ՍՍՀ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
Մ. ԱՄԵՆԱՆԻ ԱՆՎԱՆ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

Ա. Ս. ՎԱՐՈՒՅԱՆ

ԳԱՆՆԵԼ ՎԱՐՈՒՅԱՆԻ
ԿԵՆՍԱԳՐԱԿԱՆ ՎԵՐԱԳՐՈՒԹՅԱՆ
ՏԱՐԵԳՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՍՏԱՆԻ ՍՍՀ ԳԱ ՀՐԱՏԱՌԱՎՈՐԹՅՈՒՆ
ԳՐԵՎԱՆ 1984

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ
թուակաճներով
եւ
թիւերով



1884

Գրիգոր Չպուգեարեանի եւ Թագուհի Պաղտիկեանի ժողովուրդներէն երեք տարի ետք, Սեբաստիոյ Բրգնիկ գիւղին մէջ, 21 Ապրիլին կը ծնի իրենց անդրանիկ զաւակը: Հայրը լուրջ կ'իմանայ եկեղեցւոյ մէջ, Դանիէլ մարդարէի աւետարանը մտիկ ըրած պահան եւ ճիշդ այդ պատճառով նորածինը կը մկրտեն Դանիէլ:

Մանուկը իր չորս տարին գեռ չընդունած՝ հայրը կը պանդխտէ Պոլիս, ուր կը դառնայ խանի մը պահակ:

1894-95

Պը յաճախէ Բրգնիկի դպրոցը:

Բրգնիկը էութեան հիմնարկը իր կողմէն իր մտերմութեամբ հպարտ մէջ անձան էն եւ իր ծոթիտարոյր կաւը առյաւէտ ուղեգիր ամենաշեղծ փոքր պիտի յորինեն (Շնամակամիտ, Երեւան, 1935):

ԴԱՆԻԷ ՎԱՐՈՒԺԱՆ



Հ. Արիստակէս Քասազանդեան

Նոր Մկրտիչ Պէտկեթալեան մը
կը գրենք, զաւ հայեցէք (Շէտ-
միտիմա, 1968, Ը.):

Վ. ԱՐԻՍՏԱԿԵՍ
ՔԱՍԱԶԱՆԵԱՆ

Ոչ մէկ հայերէնի վարժարան
իմ վրայ այնքան ազդած չէ, որ-
քան Նուբ. Միլոսեանի գասերը
ինքի սովորացնել գիտնայ, Զե-
րինեանի՝ ասեղծել (Շումակա-
նիս, 8 Փետրուար 1908):

ԳԱՆՆԵԼ ՎԱՐՈՒՓԱՆ



Դ. Վարուժանի ծննդավայրը՝ Բրզճիկ

1896

Բրզճիկի մէջ հազիւ զբն-կարդալ սորված՝
ժօրը հետ ճամբայ կ'ելլէ գէպի Պոլիս, ուր կը
հասնին Օգոստոսին, հոն տեղի ունեցած հայկա-
կան շարժերուն օրօք:

● Պոլսոյ բանտերէն մէկուն մէջ կը գտնէ հայ-
ԸԸ:

1896-97

Դպրոցական տարեշրջանին կը յաճախէ Սա-
ղազ Աղանի Մխիթարեան վարժարանը:

1898

Աշնան կ'ընդունուի Բաղկեդոնի Վենետիկի
Մխիթարեան վարժարանը, ուր իբրեւ Հայերէն
լեզուի ուսուցիչ կ'ունենայ Հ. Արիստակէս Քաս-
զանդեանը:



Մանուկ Դանիէլը մօրը եւ քօրեակալ կազմէ
մեծ եօր ու մեծ քօր եւս 1894ին

1890

Յունիսին կը փոխադրուի Գ. Ղասարան:

1900

Կը ծնի եղբայրը՝ Վահան:

1901

Կը կատարէ բանաստեղծական անդրանիկ փորձերը:

● 24 Մարտին կը գրէ «Հրաժեշտ» բանաստեղծութիւնը, որ կ'երեւի «Արձագանգ Մոտայի» աշակերտական թերթին մէջ:

● 28 Ապրիլին՝ Եղիշ արքեպիսկոպոս Դուրեան կ'այցելէ Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանը եւ այդ առիթով Դանիէլ կը գրէ արձակ ձօն մը, որ նոյնպէս կ'երեւի «Արձագանգ Մոտայի» աշակերտական թերթին մէջ:

● Նոյն տարին կը գրէ ուրիշ ուր բանաստեղծութիւններ եւ Մխիթարեան միաբանութեան 200ամեակին առիթով Նորհաւորական ռզոյն մը, որ 1910 կը տեսնէ յոբելանական հատորին մէջ (1901), ստորագրութիւն՝ Դանիէլ Գ. Ձպուգֆեարեան Բրզնիկցի, Քաղկեդոնի Մխ. վարժարանի ուսանող:

1902

«Մեմուար այսպար» հայաստան տանկերէն թերթին մէջ կը տպագրուի «Թատրոնիմ շուրջը» վերնագրով յօդուածը, Դանիէլ Գ. Ձպուգֆեարեան ստորագրութեամբ: Նոյն թերթին մէջ 1910 կ'ընծայէ 4 յօդուած եւս:

● Կը գրէ չորս բանաստեղծութիւն եւ արձակ էջ մը:


● Կ'աւարտէ Քաղկեդոնի Մխիթարեան վարժարանի բարձրագոյն կարգի Զ. Ղասարանը եւ Լ.



Գ. Վարուժանի դաջմկերտ ու մտերիմը՝ Դեբեմիկ ձիգնեան

Մեզի հայերէն կ'աւանդէր Լ. Օհան Աւչեկեան, որ միաժամանակ դպրոցին ուսումնապետն էր: Այս փոքրահասակ վարդապետը զպրոցի ձեկատալին վրայ էր տնօր պղծեցութիւնը պիտի ունենար: Լ. Օհան որեւէ համակրութիւն չդրուէր աշակերտներու մտա: Մասնաւոր ջանք ճշ կը զբնդէր Դանիէլի շարագրութիւնները քննադատելու:

Օր մը ըսի Դանիէլին, որ



Մուրատ Թափայլիւսի վարժարան

Արիստակէս Քասզանտիլեանի միջամտութեամբ
կը պատրաստուի մեկնել Վենետիկ, Մուրատ
Բախայեան վարժարանին մէջ ուսանելու:

● Յուլիսի վերջաւորութեան կը կազմէ «Մազ-
կեփու» կամ բրգմիկցիի մը մուագմերը ժողո-
ւածուն, Ա եւ Բ մասերէ բաղկացած: Առաջին
մասին մէջ կ'ամփոփէ տասներկու բանաստեղծու-
թիւն, իսկ երկրորդին՝ քսան շափածոյ եւ երկու
արձակ բանաստեղծութիւն:

● Կը մտադրէ հրատարակել կազմած Հատորը,
որուն յառաջարանը կը գրէ Հ. Արիստակէս Քաս-
զանտիլեան: Ձեռագիրը կը ներկայացուի դրա-
մենութեան, կ'արածուի անոր հրատարակութիւ-
նը, բայց Հատորը լոյս չի տեսներ:

● Կը լուսանկարուի ծնողներուն եւ եղբորը՝
Վահանին հետ:



Գ. Վարուժան ծնողներուն եւ կրտսեր եղբորը՝
Վահանի հետ, 1902ին, Պոլիս



Գ. Վարուժան
Մուրատ Բախայեանի
վարժարանի սուսանդ

պատրաստէ երկու շարագրու-
թիւն. մին էրն պահեց, միւրը
տուաւ ուրիշ ընկերոջ մը: Հ. Օ-
ւան չտու իր սովորութեան ծանօ-
թեան հետեւեալ ինքնակազմ Վա-
րուժանի դրամները, սակայն
զովասանցով խոսեցաւ Վարու-
ժանի գրած եւ մեր ընկերոջ կող-
մէն ներկայացուած շարագրու-
թեան մասին:

Այսպէս՝ զայոցի աւակներան-
քու մեծ մասին կողմէ սկսաւ
լուս առաջարկ մը Հ. Օւանի դէմ:
Այն աստիճան զրգոտուած էինք,
որ այլեւս ամէն բան այց տան-
լով պարզեցինք յեղափոխութեան
դրօշը: Վարուժանը եւ եւ պայ-
քարին գեկովարներն էինք:

Դասերը զարկեցան. իտալացի
դասատուները չէին զար գաս-
անդիտու: Հ. Օւան Ազգերեան
իւր սենեակէն դուրս չէր ելլեր:
Տեսուչը՝ Հ. Մանուկեան Մարեան
հագիւ կ'երեւար, խմբովին կը
սկսէինք երգել «Դաշնակցական
խումբ, զիմմի մենի՛ Սասուն» եւ
իւրեք Հ. Մանուկեանը՝ յուսուստ՝
կը վերադառնար իր սենեակը
(«Երանելի Վարուժան», Գաւերէ,
1956):

ԴԻՐՄՆՆԻԿ ՃԻՋՄԻՃՆԱՆ

- 27 Յունիսին՝ շոգենաւով կը մեկնի Վենետիկ, Հ. Արխատկէս Փառաստիչեանի յանձնարարական նամակով:

- Օգոստոսի սկիզբը կը հասնի Վենետիկ, կ'աշտցնէ Ալիշանի գերեզմանը ու կը գրէ Նահապետին նուիրուած բանաստեղծութիւնը՝ «Բամաստեղծիմ մահը» խորագրով:

- Սեպտեմբերին կը սկսի հետեւիլ Մուրատ Թումաշեանի վարժարանի դասընթացներուն՝ Վաւրամ Փափազեանի, Դերենիկ Ճիզմէնեանի եւ ուրիշ հինգ դասընկերներու հետ:

- Կը գրէ երկու բանաստեղծութիւն:

1903

Կը գրէ տասնիմէջ չափածոյ եւ տասը արձակ գրութիւններ:

- Դպրոցական տարեմուտին, ուսումնապետութեան պաշտօնի կողքին՝ հայերէնի դասընթացը կը ստանձնէ Հ. Յովհան Աւզերեանը, որ անբարեացակամ վերաբերում մը կը ցուցաբերէ ուսանողներուն եւ, յատկապէս՝ Վարուժանի նկատմամբ:

1904

Կը գրէ քսանվեց բանաստեղծութիւններ, ի շարքս որոնց՝ «Նիկիա Տօնի» դիւցազնավէպը, «Մատնիչը», «Վեմետիկը» եւ «Աստուծոյ լացը»:

- Իր 22 Մայիս համարին մէջ, «Բազմավէպ» լոյս կ'ընծայէ «Բամաստեղծ-Նահապետի շիրիմիմ աղբն» բանաստեղծութիւնը, որ կը հանդիսանայ իր տպագիր առաջին չափածոն:

- Նոյեմբերի սկիզբը կը սկսի կազմել «Փուշի սիօսներ» ժողովածուն, ուր կ'ամփոփէ 20 Ապրիլ

Վարուժան Գանիէլ, որուն մտաքը հայ գրականութեան մէջ աշխարհ համակրանքով ոչնչացուցաւ գրողիտաց կողմէ, ի լոյս կ'ընծայէ իր բանաստեղծութեանց առաջին հատորիչը: «Սարսուռները զգացուած են արտասարգ հոգի մը՝ Ազգայի անորոշութեանց, շեղութեան Խորհուրդներու եւ մարդկային Տառապանքի առջև: Գրութեան եւ դարձիթի մեղեդիները ծննդեան տարեթիւը էր կրնն իրենց մէջ՝ ներգաշնակելով ներկայ սերունդին տրամադրութեանց հետ («Բազմավէպ», Մարտ 1906):

ԲԱԱՄԱՎԷՊ

«Նիկիա Տօնի» ժառանգործի մը յայտնութեան հաղուագէտ անակնկալը կ'ընծայէ («Ներքա», Յունուար 1905):

ՎԱՆԱՆ ԹԵՐԵՆՆ



Վահան Թերենյան

●
«Իսպանիայի տղամեջ բանաստեղծութեան մասին. «Անուշաւար է զբարեսարար եւ լոյս զփռչելի տուէրու հետ՝ ուժի տնայնողներ աջ» («Երբակ», Սեպտեմբեր 1906):

ՎԱԼԱՆ ԹԷՔԵՆԱՆ

●
«Վազուան բարբոսները բանաստեղծութեան մասին. «Հայրենասիրական ներշնչմամբ, զիջազնական շունչով արտօնած, մերթ կուտ, մերթ զգայուն առգերով զհեղեղի գերթուած մը» («Երբակ», 1906):

ՎԱԼԱՆ ԹԷՔԵՆԱՆ

●
Դանիէլ Վարուժան, որուն մէկ հայակաղ գերթուածը կը հրատարակենք մեր այս թիւով, է լոյս ընծայած է բանաստեղծութեանց հատորիկ մը, որ սրան շարժման պիտի կարգուցուի: Վարուժան հայ բանաստեղծութեան ամէնէն ինքնատիպ եւ հզոր զէմփրին մին շուտաւ հոշուած է («Ամսօր», 20 Փետրուար 1906):

«ԱՄԱԿՆՑ»



Ս. Գոյանեան

1901էն մինչեւ 4 նոյեմբեր 1904 զբոս՝ Բաղուստինոսը բանաստեղծութիւնները:

● 21 նոյեմբերին կը կազմէ «Արքայաշնչ կայծուղիներ» ժողովածուն, ուր կ'ամփոփէ 20 Ապրիլ 1901էն մինչեւ 21 նոյեմբեր 1904 զբոս յիսուսինոսը բանաստեղծութիւնները:

● Պոլսոյ մէջ կը ծնի էր հրկորոզ եղբայրը՝ Պետրոս:

1905

Վահան Բէզէկեանի խմբադատ «Երբակ» հանդէսին մէջ լոյս կը տեսնէ «Նիկիա Տօնէլ» զիտադադակէպը:

● Կ'աւարտէ Մուրաւ Թափայէլեան վարժարանը:

● Փափաջ կը յայտնէ աւտուժ շարունակել ժընեւի կամ Լոզանի համալսարանը:

● Յուլիան Սեպտեմբեր կը կազմէ ու սպասարութեան կը պատրաստէ «Ասարուներ» հատորը:

● Կը գրէ «Ինչ կամուխ», «Վազուան բարբոսներ», «Կուտի երբ», «Վերածնութեան երգը», «Արծիւներու կարուսանը» եւ «Իսպանիայի տղամեջ բանաստեղծութիւնները»: Վերջինը լոյս կը տեսնէ «Բագմակէպ» մէջ:

● Սեպտեմբերին՝ Հ. Սիմոն Երեմեանի նախաձեռնութեամբ կ'որոշուի տպագրել «Ասարուներ» զիտուսին հանդէսին մէջ եւ միատեմանակ առանձին հատորով:

● Հոկտեմբերի վերջաւորութեան կը մեկնի Պէլճիքա եւ Կանսի համալսարանին մէջ կ'արձանադրուի «Փիլիսոփայութեան թիկնաճութիւն» բաժնին մէջ, կը մտերմանայ Փիլէա Մաէսի եւ Հանրի Խոլուար փիլէսփի հետ:

● «Բագմակէպ» նոյեմբերեան համարին մէջ լոյս կը տեսնեն «Սալիմ», «Յիսուսի պատմութեան պատմութիւն» եւ «Նպասակին» բանաստեղծութիւնները:

ները, որոնց տակ առաջին անգամ ըլլալով կ'երևուի ԴԱՆԻԷԼ ՎԱՐՈՒԹԱՆ ասորագրութիւնը:

● 2. Կարապետ Տէր-Սահակեան Վենետիկէն Վարուժանին կը գրէ, թէ «Նպատակին» ոտանաւորին հրատարակութիւնը «գայթակղութիւն մ'նշաւ մեր կրօնատարաց, ուստի զգուշութեամբ պիտի հրատարակեմ միւս մնացած ռուսաւարները»:

● 18 Գեղտեմբերին նամակ՝ Արշակ Զօպանեանին. «Եթէ լաւ վարժիմ գաղիքի՞նի, մտադիր եմ հետ ազգերմաւ վերաքերեալ մերք-մերք ճաւեր արտասանել, եթէ այս Ոշմայից մը օգտակար ըլլայ մեզի, ուրայն պիտի ըլլամ»:

● Գեղտեմբերին յոյս կը տեսնէ «Սարաւոնի» հատորը, որ կը մէկտեղէ առ այդ պատրաստուած բանաստեղծութիւններուն մէկ մասը: Այդ հանգամանքը պատճառ կը դառնայ Վարուժանի գանգատներուն: Նոյն ամսոյն 21ին, Հ. Աթանաս Տէրոյեանէն նամակով մը կը խնդրէ «Սարաւոնի» գործ մնացած բանաստեղծութիւնները հրատարակել առանձին հատորով՝ «Մաշած լար» վերնագրով:

● Տարեմերթին՝ Կոնստէնտին կը բանախօսէ Հայկական Հարցին մասին:

1906

Յաջորդաբար կը գրէ «Վերաւորը», «Ծեր կաւմը», «Անիի աւերակներուն մէջ», «Ապրիլ», «Երեքնիկը», «Հօրս բանտին մէջ», «Լուսադարաւուն», «Ենթադամ միջատը», «Առաջին մեղքը» եւ «Մարած օնայթը»:

● Վահան Թէքէեանին ուղղուած նամակով մը կը յայտնէ, թէ «Վերջերս սկսած եմ ամբողջովին Հայաստանի վրայ հետար մը պատրաստել»:

● Յրաններէն լեզուով կը սկսի դասախօսութիւններ տալ Հայ ժողովուրդի մասին:

● 19 Փետրուարին կը գրէ «Վարմիր հողը» բանաստեղծութիւնը:

● Ընդառաջելով Տըքթ. Ռաֆայէլ Գաղարձեանի խնդրանքին՝ Ապրիլ 3 թուակիր նամակով կը

Հատորիկը այնպէս ինչպէս կու գայ ներկայանալ հասարակութեան, ինքնին աղուոր ամբողջութիւն մըն է: Դեռ անհասարկ իր արտայայտութեան մէջ, պատանեկան անփորձութիւնն ու հուզեկոյն զիւ ոչ բարձր մտայնագրութեամբ, Վարուժանի ճարտար ամենամեծ յատկութիւնն ունի ինքնայատուկ հեղինակութեամբ ըլլալու, ու հոն, ուր ուր մէկ կը թրթոյս՝ ուժը կը ձգտի զէպի մեզ բարձունքներն ու մերթ կը հասնի շքեղ թռիչով մը... Իր սկզբնաւորութիւնը մին է ամէնէն շքեղներէն, որ Հայոց մէջ յայտնուած ըլլան («Առաջնութիւն», Փոստոստ 1906):

ԱՐՇԱԿ ԶՕԳԱՆԵԱՆ

Ձեր մէջ կը տեսնեմ աւելի Հայ, աւելի հայաստանցի Սիրմանթօ մը եւ բոլոր հոգիովս կը հետեւիմ Ձեր յաջողութիւններուն ու հասարեւոյթութեան (Երևանիցի, 5 Նոյեմբեր 1907):

ՌՈՒԲԵՆ ԶՈՐԻԱՐԵԱՆ



Ռուբէն Զորյարեան



Գ. Վաքուժով
Կամոսի ուսուցիչ

Ճակատին երկտասարդ, բայց արդեն ժամանակակից հայ բանաստեղծութեան մէջ կը զբաղէ ուսային տեղերէն մէջը... Իր բանաստեղծութեան զրոյժը կը կազմեն քնարական բարձր եւ հովաներգական քնքոշ ներշնչութիւն, պատկերներու հարազատութիւն ու փորձաժողովին եւ լեզուի կատարելութիւն (Վեպրատ, Գ. գիրք, 1914):

ՌՈՒՌԵՆ ԶԱՐԿԱՐԵԱՆ

...Ճնշուած տիրույթ մասնութեանց բնական սակ, ինչ որ զեռ զեղեցիկ հայ Վարուժանի բանաստեղծութեան մէջ՝ իր կորովն է, արտաթիւնը, յոյժը, իրօտ շնչաբեր, իրակներեւելն յաղթանակ է, բայց ոչ ընկճուած եւ սիգ կ'ընէ, կը բողբոջի ու կը կոտորէ երբ նշխարի բոլոր հասանքն իրեն հակասակ կ'ընթացայ... (Վեպրատ, Մայիս 1906):

Հ. ՆԵՐՍԷՆ ԱՆԴՐԻԿԵԱՆ

Ղրկէ «Հայ բժիշկը» բանաստեղծութեան Ֆրանսերէն թարգմանութիւնը, յայտնելով նոյն տունն, որ իր բանաստեղծութիւններէն քանի մը հետը Ֆրանսերէն թարգմանութեամբ ի մօտոյ լոյս կը տեսնեն Կանտի համալսարանի տարեգիրքին մէջ:

- Մայիսի սկիզբները կ'այցելէ Անվերո եւ Պրիւքսէլ, ուր կը ծանօթանայ Ռուպէնի, Վան-Տեքի, Իորդանի կտաններուն ու հարտարարական կոթողներուն:
- Յունիսի սկիզբը, քանի մը օրով, կ'երթայ Հոլանտա:
- Յունիսի կէսերուն, Իտալիոյ համբուն վրայ, կանգ կ'առնէ Ժընեւ, ուր առաջին անգամ ըլլալով կը հանդիպի Սիմանթոյին:
- Նոյն ամսոյն կ'այցելէ Ազոլո, ուրկէ համալսարանական իր բարեկամներէն էջուար Փիէ-ռին կը զբէ, թէ կ'աշխատի հայկական շարքերը նկարագրող վիպերդին վրայ, զոր մտադիր է նաեւ Ֆրանսերէնի վերածելու ու հրատարակելու:
- Օգոստոսին կ'աւարտէ վերը ուրուագծուած վիպերգը («Ջարդը» — 1895-1896):

1907

Յաջորդաբար կը զբէ «Հայրենիքի ոգին», «Օձը», «Հայնոյանք», «Աւաքեալը», «Էփուս», «Օրինեալ եւ դու ի կահայ», «Արմենալիմ» եւ «Վերջին յոյսը»:

- Կանտի համալսարանի տարեգիրքին մէջ լոյս կը տեսնէ «Հայկականերու որդանը» բանաստեղծութեան Ֆրանսերէն թարգմանութիւնը:
- Ճրանսերէնով նամակ մը կը զբէ անձանօթ կնոջ մը:
- Օգոստոսի կէսերուն, Իտալիա մեկնելու համար նիւթական միջոցներէ զուրկ ըլլալով, արձակուրդը կ'անցընէ Կանտի մօտերը եւ կ'ապրի տաղանապարհ օրեր, սիրային կապի մը հետեւանքով: Հետագային այդ տաղանապարհ կը պատկերացնէ «Տրուանք» բանաստեղծութեան մէջ:

- Դերենիկ Ճիզմէճեան Վարուժանը կը հրատարակէ Քուրէն, ուր երկու բարեկամները իրարու կը միանան Օգոստոսի վերջերը: Հոն, գրատունէ մը ասնելով՝ կը կարդայ «Անստաս», «Ռամայանաս» եւ «Վրտաներ»էն քանի մը հատուածներ:

- Հոկտեմբերի սկիզբը, Ճրահայի ճամբով՝ Քուրէնէն կը մեկնի Կանա: Երկու օր Փարիզ կը մնայ, կը փորձէ տեսնել Արշակ Զօպանեանը, բայց չի յաջողիր:

1908

- Յունուարի կէսերուն «Անահիտ» հանդէսին մէջ լոյս կը տեսնէ «Ջարդը», իսկ ամիս մը ետք՝ ասանէին զբնօրէնով, 16 էջ, տպաքանակ՝ 450:

- Յաջորդաբար կը գրէ «Տղարմուրիւն», «Վահագն», «Կարօտի նամակ», «Մատնիչը», «Նեմեսիս», «Գազգոթայի ծագիկներ» շարքը, «Գիրքերուս մէջ» եւ «Մեծաւոր» անուն բանաստեղծութիւնները:

- Մարտի կէսերուն կը գրէ «Վան Արդիւնդի արձանիկ» Փրանսերէն արձակ բանաստեղծութիւնը, որ լոյս կը տեսնէ Կանաի համալսարանի տարեգրքին մէջ:

- Մայիս 25 թուակիր նամակով մը Արշակ Զօպանեանին կը յայտնէ. «Արդէն ծրագիր դրած եմ



Դ. Վարուժան Կանաի համալսարանի իր դասընկերներուն հետ, 1908ին, նստած՝ ձախիմ առաջինը



Ալեքան Տատուրեան

- «Արմենուէի» դիցազնոյցալեզու մասին. «Քեյթուածդ հոյակապ է եւ լուսագրքուտ արեւելեան երկինքն է արաւոյտներու մէջ լիւզ եկած, երգ-երգոցն հելտ օւ հուազ յարախում մըն է հարեմի աղչիկներուն դուտաներգութիւնը՝ Հայունէիկն աստուածագնչութեան լուրջը հիւսուած» («ԳԱԹ. ԴՎՊ», թիւ 287, 18 Մայիս 1909):

ԱՀԱՐՈՆ ՏՏՏՈՒՐԵԱՆ

- «Արմենուէի» դիցազնալեզու մասին. «Ազգիս ազա՛ն, նկարագրականիդ մեկունը անպատ ջլուայ եւ զոգոփարիդ փետուր զլորիւ՛ միւտ ճկուն օւ միւտ հոյատալ... «Անահիտ»ի այս թիւը ընդմով պանծացած է» («ԳԱԹ. ԴՎՊ», թիւ 163, 24 Դեկտեմբեր 1908):

ԹԷՌԻԿ



Մելիքան Կիրանան

ԵՑԻՊԻԱ սիրտը... զորք որ կրակ է, էնոր պէս այրող, էնոր պէս խաշխուղ ու ժրհող, իսկ զԿարմիր հողը՝ վերքերու ըստ դուռի է, էնոր ծակերը կ'ուտին եւ մեր ողջ պատմութիւնը կու ծանկ իր մէջ («Ազատամարտ», 11 Յունիս 1910):

ՄԵԼԻՔԱՆ ԿԻՐԱՆԱՆ

ԵՑԻՊԻԱ սիրտը: Այս է տեսնը ժառանգար զԱզրակայի կրորդ հասարին, զոր երկնան է երկտասարը զերթող Դանիէլ վարուժան եւ որ հրապարակ կըտ երէկ իսկ: ԵՑԻՊԻԱ սիրտըն իւրաքանչիւր էջը մէկն է այն լըքող եւ ուժգին տաղանդին, որ վարուժանինն է: Հայ հողով եւ գտական կտարբերութեամբ երզն է, որ կայ ներդաշնակուան հոն, պերճաշունչ է եւ պէտք է ըսել՝ հայկապ («Ազատամարտ», 14 Յունուար 1910):

«ԱՅՏԱՄԱՐՆ»

բանաստեղծութեանց շարքի մը, բարձրովիմ մտերմակամ եւ ապուամծ»:

● Յունիս 24ին թուրքերոյ մէջ տեղի կ'ունենայ պետական յեղաշրջում: Իշխանութեան գլուխ կու դան Երիտասարդ թուրքերը, որոնք 23 Յուլիսին կը հռչակեն ազդային սահմանադրութիւնը:

● Կ. Պոլսոյ Շիշլիի գերեզմանատան մէջ տեղի կ'ունենայ սգահանդէս նահատակներու յիշատակին: Դերասան Վահրամ Փակագեան կ'արտասանէ «Ձարդը»:

● Օգոստոս 17ին թուրքինն նամակ՝ Հ. Արիտասակէտ Բասագանիլեանին, որմէ կը խնդրէ մեկնեսու մը գաննել իր նոր բանաստեղծութիւններուն ժողովածուն հրատարակելու համար:

● Յնդանմեր 15ին հայրը Պուլէն կը վերադառնայ Բրզճիկ:

● 4 Հոկտեմբեր թուակիր նամակով մը Արշակ Չօպանճանէն կը խնդրէ բանակցութիւններ վարել իր նոր հատորին հրատարակութեան շուրջ: Ահա նարկելով ԵՑԻՊԻԱ սիրտը՝ զորմին՝ կը գրէ. «Այս կատարը իբր լոյս տեսնէ, պիտի սփսիմ կեանքէ գրիլ. լարերս փոխելու վրայ եմ»:

● Ընդատալիւով Թէրեկի խնդրանքին, 1 Նոյեմբեր թուակիր նամակի մը հետ կը գրէ ինքնակենսագրութիւնը, լուսանկար մը եւ զԿարտակ ճամակը բանաստեղծութիւնը:

● Կը ծնի կրորդ եղբայրը՝ Արշակ:

1909

Յաջորդաբար կը գրէ «Վարդեր», «Առանխի մը», «Ինչպիսի մը ասիին» եւ «Պատուէր» բանաստեղծութիւնները, իսկ ասանցմէ առաջ՝ «Վիսնադ» արձակ կատրէ:

● Յունուար 1ին, Ահարոն Տատուրեան Վենետիկէն կը շարհատարէ վարուժանի նոր Տարին,

կ'արտայայտէ իր հիացումը եւ բանաստեղծ իր եղբայրը կ'անուանէ «Գրական Ֆետայի» :

● Ապրիլ ամսոյն առաջին երկու շաբաթներուն Հալէպի եւ Ատանայի վիլայէթներուն մէջ թուրքերու կողմէ կը կազմակերպուին զանգուածային կոտորածներ : Այդ առիթով, Յունիսի սկիզբը կը զբէրէ «կիլիկեան մոխիրներուն» բանաստեղծութիւնը :

● Յունիսի առաջին շաբթուն կ'աւարտէ Կանտի Համալսարանի քաղաքական դիտութիւններու մասնաճիւղը եւ 13ին իտալական Մոնտենեկը շոքեանով կը մեկնի Պոլիս, ուր կը մնայ մինչեւ Օգոստոս 22: Հոն կ'այցելէ «Ազատամարտ»-ի եւ «Ազգակ»-ի խմբագրութիւնները ու կը ծանօթանայ Թուրքի Չարդարեանին, Գեղամ Բարսեղեանին եւ ուրիշ ղէմքերու :

● Պոլսոյ մէջ, «Արծիւ» հրատարակչական ընկերութեան հետ կը պայմանաւորուի «Տեղին սիրտը» հատորը հրատարակել «Ազգակ»-ի մատենաշարով :

● Օգոստոս 22ին՝ Պոլսէն նամբայ կ'ելլէ ղէպէ Բրզնիկ : Ճամբու վրայ, զրոհներու եւ մաւառականներու խուճիկ մը հետ կ'այցելէ Պարտիզակ, ուր բանախօսութիւն մը կու տայ աեղւոյն հասարակութեան եւ կ'արտասանէ «Ձարդը» : Կայցելէ Դեղնիթան աղբիւրը եւ անոր թարմ ապաւորութեան տակ կը յղանայ «Հրաշքին աղբիւր» բանաստեղծութիւնը, զոր կ'աւարտէ Սերաստիոյ մէջ, Հոկտեմբերի կիսուն :

● Սերաստիա կը հասնի 2 Սեպտեմբերին եւ անմիջապէս կը պայմանաւորուի Ուսումնական խորհուրդին հետ՝ Արամեան ազգային երկսեռ վարժարանի բարձրագոյն կարգերուն հայերէն, մատենագրութիւն, Փրանսերէն եւ քաղաքատնտեսութիւն դասաւանդելու համար :

● Հոկտեմբերին, առեւտրական Միհրան Թաշճեանի հրահրով՝ կը դառնայ անոր դստեր՝ Արաքսիի հայերէնի եւ Փրանսերէնի մասնաւոր ուսուցիչը : Ուսուցիչին եւ աշակերտուհիին միջեւ կը սկսի փոխադարձ համակրանք մը, որ կը վերածուի բուռն սիրոյ : Աղլիկան ծնողները, որ հարուստ էին ու լուսաւորչական, եւ իրենց դուստրը արդէն մանկութենէն նշանած ուրիշ մը հետ,



Արտաշէս Թարսիսեան

● Վարուժանի բանաստեղծութեան նկարագրը իրոտ ճոխ է : Պարծառ, հար, լնորհալի եւ առատօրէն սանդղազոր՝ երեւակայութիւն մը, թրթռուն եւ մանկական միամտութեամբ մեծ սիրտ մը՝ իրենց սկունքներու բոլոր արդէնարներու կը զննէ տրամադրութեան տակ՝ դասական մաքրասիրութեամբ կորակած ու իշպիւրկ արուեստի մը, որ մարզուած է եւրոպական հին ու նոր մեծագույն հանարներու մտք՝ եղբայրական երկարատեւ յանձնարով մը մէջ («Ձայն» հայրենաց, 12 Մարտ 1910) :

ԱՐՏԱՇԵՍ ԹԱՐՍԻՍԵԱՆ

● Ինչ պիտի մնայ յաւերճացող զերթող մը իբր զերթողական վերաննունդի հիմնադրներէն մին : Իր հատորը ազամանդի մուրճի հարուածն է՝ մեր նոր բանաստեղծութեան ծոցէն բնօրէնու նոր երգերու աղբիւրներ («Ազատամարտ», 18 Ապրիլ 1910) :

ԼԵՆԻՆ ԽՍՏԱՆԵԱՆ



Վ. Վարտանով, Կամու, 1908

Արեւը արդէն խաւարած էր այն ստեղծին, երբ ժեր քնարաւոր բարեկամը՝ Գանիէլ Վարուժանի կ'ուրարտէր էր աւաւոր զձարզօրն աւաւոր ընթերցումը՝ բառեւորապէս ասելով թէ այն կ'աւելնէ մէջ-մեջը կանգուն իբրեւ անպարտազին Բովանդակին կեդրոնը հոշակաւորաց պատուանդանի մը, ժեր աւաւորաւոր հիացումին եւ անարեկ հորիզոններուն զիմաց եւ ժեր սասնակեց հոգիներովը կիտարուրած մահիկամու (Ազգակն, 28 Օգոստոս 1908):

ՎԱՐՈՒՄ ԹԱՅՈՒՆ

Հանրածանօթ զերթոյ Գանիէլ Վարուժանի 95ի սարսաղացեղի կոտորածներուն վրայ հրաշափործած էր զձարզօր վերնազրով դիւցալներգութիւնը կարողաց աշխարհ առողջ արտաստեութեամբ, ախարս կերթ ձեւորով ու յուզումնալից շնորհով, որ բոլոր ունկնդիրները թովեց ու վրդովեց (Անգարամի, 14 Նոյեմբեր 1908):

ՍՆՆՈՒՆԻՆ

Կ'ընդդիման Արաքսիի եւ Վարուժանի ամուսնանալու մտադրութեան:

• 16 Նոյեմբերին, Բրզնիկէն Գանիէլ Գլըճեանին գրուած նամակով մը ի միջի այլոց կը յայտնէ. «Հացին երգը» գարնան պիտի սկսիմ»:

• 17 Ինկտեմբերին, Սերաստիոյ ազգային լըսարանին մէջ, որբանոցի ուղտին կազմակերպուած հանդէսին՝ կ'արտասանէ Պետրոս Դուրեանի «Տըր-տանդեր»:

• Կանտի համալսարանի սպաս ունկնդիրներու տարեդրբի 25րդ համարին մէջ լոյս կը տեսնէ «Առաջին մեղքը» բանաստեղծութեան ֆրանսերէն թարգմանութիւնը, «Ընկերոջ» Համրի Փիւրիին ձօնով:

1910

14 Յունուարին լոյս կը տեսնէ «Յնդին սրբութ», 42 բանաստեղծութիւն, 152 էջ:

• Յայրգարար կը գրէ «Ականցներուն», «Հեքամասական», «Պատգամաւորներ», «Մեռնող բանուոր», «Իրգանէ», «Հարեր», «Բիզաս», «...Ո՛ր՛կ Լայպէ», «Առկայծ հրագ», «Նիւազը կ'անցնի» եւ շուրուած կոչներ բանաստեղծութիւններ:

• 9 Ապրիլին՝ Արաքսի Թաշեան Վարուժանին կը նուիրէ իր գրած «Յիշէ զիս» բանաստեղծութիւնը:

• 5 Մայիսին՝ Միրիճան Թաշեան կը յայտնէ Վարուժանին, որ դադրեցնէ իր գտեր՝ Արաքսիին ամենորած դասերը: Ի լուր այդ որոշումին, Վարուժան նամակ մը կը գրէ Արաքսիին, ուր կ'ըսէ. «Կ'ըսեմ, քեզ ընդմիջու կը սիրեմ, վասնզի սիրտիս վրայ անբազ տիեզերք եւ Աստուած չի կրնար մնշել»:

• «Ազատամարտ»ի 16 թուակեր համարին մէջ լոյս կը տեսնէ «Պատգամաւորներ» բանաստեղծութիւնը: Օրաթերթի նոյն թիւին մէջ կ'երեւի Սերաստիային զրկուած թղթակցութիւն մը, ուր

Արշալույսին շառաւիղներն վարագեղ,
Թէ շեշտակի գամ գարնուի պտտ'իանիդ,
Եւ անկէ ներս թափանցելով գամ անկախիդ
Եւ վրդովեմ բունդ ու հանգիստդ խոռովին,
Յիշէ զիս:

Եւ միշտ այսպէս դու յիշէ զիս ամէն օր՝
Թէ՛ տխուրքեան, թէ՛ հաճոյքի ժամերուդ.
Մտածէ ինչպէս ես գտնմ եղայ բու սիրայդ,
Երբ ենչէ ժամն հայրենիքիդ, պիտ' գտնուիս.
Մտայիք զիս:

ԱՐԱՔՍԻ ԹԱՇՃՆԱՆ

1909 Հոկտեմբեր

Ի միջի այլոց կ'ըսուի. «Ամերիկեան բարձրագոյն վարժարանի ղեկավարները, ի շարս այլ խոստովաններու, կ'արգիլեն հայ բանաստեղծներու (օրինակ, Գամիլի վարուժանի) գործերը կտրուալ՝ «բարձր է» ըսելով»:

• 28 Յունիսին, վարուժան կը բանախօսէ Սեբաստիոյ վանքին մէջ, ի պատիւ Մուրատի աւանուժանի:

• Յուլիս 14 թուակիր նամակով ձը խորհուրդ կու տայ Արաքսի Թաշնեանին, որ ըլլայ «անվիճեր, բաջ, ճարտար եւ պաղարիւն», իսկ Արաքսի Թաշնեան նոյնպէս նամակով կը հաւաստիացնէ իր սէրը եւ պիտադրելու աննկուն սովորութիւնը:

• Յուլիսի վերջաւորութեան կը լուսանկարուի Արամեան աղջային երկուսն վարժարանի ուսուցչական կազմին եւ շրջանաւարաններուն հետ:

• 11 Օգոստոսին, թորդոմ արքեպիսկոպոս Գուշակեանի միջամտութեամբ՝ Միքիլեան Թաշնեան կը համաձայնի վարուժանին կնութեան ստալ իր դուստրը: Պատկարութեան հանդէսը տեղի կ'ունենայ Օգոստոս 15ին:

• Նոյն օրը կը լուսանկարուին վարուժան եւ Արաքսի ամուլը:



Արամի եւ վարուժան, իրենց ամուսնութեան յաջորդ օրը, 16 Օգոստոս

Ասի ինչ ամուսնութիւնը խորհուրդութեան անձնակազմի կամեն, ինչ ամուսնութիւնը Գուշակեանի Գաղաթիւնի, այլ պէտքովն է գրչին՝ բանաստեղծ վարուժանին նախ, ապա միջին ուղարկող գրչին հետ ու գրչին յաղթանարումը, հայ ազգական պատարճութի մէկ լըշմը, ճըշմիմ բնախօսութիւններու հրատարակը ու գոյք ձը մեծ հասաններու մերձեցման նախապիտ ձը («Էնդրաք», 16 Օգոստոս 1910):

«ԷՆԴՐԱՔ»



Գ. վարուժան եւ կարապետ Պարսամեան («Էնդրաք» խմբագիր) 1910-11ին

Մեզած ժը, երբ չափին տեղի
անձամբերութիւն եւ շարժարու-
թիւն ցոյց կու տայ:

— Վարձած, — ըսի, —
կ'ուզէ՞ս որ փոփոխել տանք Ե-
րասիին զիշերտեց իր հօր տա-
նէն:

— Ու, մէ, — պատասխանեց,
— այդպիսի բայլ ժը ստուեր ժը
զիտի բերէ կուտակցութեանս
վրայ, որուն անգամներէն սմանց
զուցէ ձեզադրանքի տակ մեան
յուլս ժողովուրդին. չեմ փոփո-
չիր, երբեք, որ կուտակցութիւ-
նըս յենարան դարձնեմ իմ որտէ
զորիս (Վնայիթ) ամառներ,
Յուլիոս 1961):

ՅԻՊԻՐԱՆ ՓԻՐԱՆԵՐԱՆ

Գողաքը ամբողջ պատմական
ունէր իրեն Կանդակ: Հաւա-
քայթիւնըս, Կանդակներու իտիին
էր ինքի Դեր անուանք որեւէ յար-
տապրի մէջ, եւ գողաքը ամ-
բողջ էին, ապա, կու գայ, կը
խանութ Կան (Վնայաք, Յ Օ-
գոստոս 1911):

ԿԱՐԱԳՈՏ ՊԱՐՍԱՄԵՐԱՆ

...Այս տաւջին գործով արդէն
իսկ Ուտամ. Կորուրդը ցոյց
կու տայ իր ժառուր կարողու-
թեան չափանիւլը՝ կոչելով ի պաշ-
տան Վարձածին նման բառին ար-
մէնէն լայն տաւամով զիտակեց
դաստիարակ ժը, որ անգուց ի
Փառք ու պարծանք մեր Թոքաւի
հայրութեան, որ պատիւը կ'ունե-
նայ իր պարտքին մէջ անհնախա
զվարձութեան, որուն վրայ անհո-
ւած է ամբողջ ժառուր հայրու-
թեան սւշարթութեան իրր ամէ-
նէն մեծ բանաստեղծը (Վերիտ),
15 Օգոստոս 1911):

ԵԻՐԻՆ

1911

Յաջորդաբար կը գրէ «Մեքենաներ», «Կղե-
պարա», «Մամուս աղօթքը», «Տրտուկեց», «Հա-
նապարի խաչի», «Գեղեցկութեամ արձանից», «Մե-
նած աստուածներուն», «Վամատար», «Կաղար»,
«Բանուարուկից», «Միլոն», «Սրեք քայրեր»,
«Սիրտս է յոգնած, վիրաւոր», «Ո՛ր Տալիդա», «Ա-
րիւնիքամ բաղանիք» բանաստեղծութիւնները, եւ
արձակ հինգ կտոր՝ «Հողաքարի բլրակից», «Հայ
լիզուի խնդիրը», «Ընդհանր», «Կրուագ մը Յաւ-
բարդի յուշերէն» եւ «Տիպարներ»:

● 4 Օգոստոսին կը մեկնի Սերաստիայէն եւ
Շաւարշ ծայրագոյն վարդապետ Սահակեանի հը-
րուէրով կ'անցնի Թոքաւ եւ տեղւոյն վարձարու-
նին մէջ կը ստանձնէ ուսուցչական պաշտօն մը:

● Հոկտեմբերի սկիզբները կը բանաստեղծ Թո-
քաւտի ազգային վարձարանի մեծ արահին մէջ:

● Նոյն շրջանին կը կազմակերպէ գրական ցե-
րեկոյթներ, որոնք տեղի կ'ունենան ամէն Ուր-
բաթ օր, ազգային վարձարանին մէջ:

● Դեկտեմբերի վերջին շաբթուն կը ծնի իրենց
աւղիները՝ վերսնիկ:

1912

Յաջորդաբար կը գրէ «Մարտունակաց», «Ա-
նիշխանակից», «Մայիս մէկ», «Վարձածնակից»,
«Եսփրեմ», «Ընկեցիկը», «Մաղթանք», «Գիմար-
բուհէն վերջ», «Ո՛վ դար, ո՛վ դար», «Անակիտ»,
«Մուսայից», «Արտերուն հրատար», «Մշակները»
եւ «Հարկիք» բանաստեղծութիւնները եւ հրա-
պարակագրական յօդուած մը՝ «Վերքը կ'արիւ-
նի»:

● 5 Փետրուարին, Թոքաւտի ազգային վարձա-
րանի աշակերտները իր ղեկավարութեամբ կը բե-
մադրեն Յակոբ Պարոնեանի «Մեծապատու մու-
րացիանները»:

● «Գեղարուեստ» հանգէսի 1911ի 7-րդ հիւրերն
մէջ կը ապագրուի «...Ո՛վ Լալագէ» բանաստեղ-
ծութիւնը, որ փոթորիկ մը կը ստեղծէ աշխար-
հիկ թէ կրօնական արշը շրջանակներու մէջ:

• Իր Ապրիլ 15 թուակիր համարին մէջ «Իրիս» կը տպագրէ Վարուժանի «Թերգեանի խնդիրը տեղաւայտ մէջ» անուն յօդուածը եւ, միաժամանակ, «Ներգ» բանաստեղծութիւնը՝ Մալլա ստորագրութեամբ:

• «Հորիզոն» թերթը իր Յունիս 8 թուակիր համարին մէջ լոյս կ'ընծայէ Շիրվանզադէի «Անա մի ուրիշը» յօդուածը, որ կը յարձակի «...Ո՛վ լալագէ» բանաստեղծութեան վրայ:

• Մանրեմ շրջանակներու մէջ կը խօսի իր դրական երկու մեծ յղացումներուն մասին, որոնցմէ մէկը պիտի ըլլար «Ալէքրը», «Բնաստեղծութիւն մը, զոր հինգ տարիէն պիտի աւարտէք» եւ «Աստուծոց տուն», «որ իր ամէնէն հոյակապ դործը պիտի ըլլար»:

• Յուլիսի վերջերուն Թոքատէն ընտանեօք կը մեկնի Պոլիս: Զամբու վրայ մէկական օրով կը մնայ Ամասիա եւ Սամսոն: Սամսոնի տնօրէնին մէջ կը բանախօսէ «Փռքը Հայքի ճոր սերունդը» նիւթին շուրջ:

• Պոլսոյ մէջ առաջին հերթին կը հսկէ «Հեքթա»-նու երգերու տպագրութեան:

• Հայ կաթողիկէներու վարչական խորհուրդը կ'որոշէ Թերգեան պատրիարքին կողմէ «կաթողիկոսական դիւանատան» վերածուած Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանի շէնքին տէր դառնալ եւ դասն յատկացնել «հայ հռոմէական տղոց երկրորդական կրթութեան»: Խուժք մը տնձեր կը յայտարարէ «բռնադատելը» վարժարանը եւ տնօրէնութիւնը յանձնել Դանիէլ Վարուժանի:

• «Կարաղիկէ արձագանգ» թերթը Վարուժանը կը մեղադրէ Ս. Գրիգոր Լուսաւորիչ վարժարանի «յափշտակութիւնը» կազմակերպած ըլլալու յանցանքով:

• Նոյն շրջանին կը լուսանկարուի կնոջ հետ:

• Կը քնի իրենց երկրորդ զուակը՝ Արմէն:



Դանիէլ եւ Արաֆոյի վարուժան Պոլիս, 1912

• Երէկ իմ բարեկամներէց մէկը ցուցումով կարգացի մի ուրիշ հայ բանաստեղծի մի աւելի պարելը ստանաւորը:

Այդ «բանաստեղծի» անունն է Դանիէլ Վարուժան, ստանաւորի վերնագիրը «Ո՛վ լալագէ...»:

«Բնաստեղծութեան» անունը...

Եւ այլն:

Դա արդէն պոռնկագրութիւն չէ, այլ կատարեալ պոռնկութիւն: Եւ ահա Դանիէլ Վարուժանի պէս էրոսամանները մեզ իրենց պոռնկութեան նմոյշները Եւրոպա եւ բանաստեղծութեան սեղ եւ «Բնաստեղծութեան» մի անդէս այդ նմոյշները օրը ցերեկով թափաղակ անում մեզ («Հորիզոն», 8 Յունիս 1912):

ՇՆՐԱՍՆԱՍԻԷ

• Բանից գուրս է պալիս, որ «Բնաստեղծութեան» անդէսի հրատարակի Գ. Լեւոնեանը գեղարուեստի դիմակի տակ հրամայում է հայ սերունդին եւ հայ ընթերցողներին ոչ թէ պոռնկագրական, այլ սուղակի պոռնկական զըրանքներ: Օրինակները, որ բերել է Շիրվանզադէին, աւելի քան համոզեցուցիլ են («Մշակ», 10 Յունիս 1912):

«ՄՇԱԿ»

Վարուժանը այսօր այն բանաստեղծն է, որուն ժառին խոսիլու համար զիջ ձը աւելի քրքրութիւն եւ աւելի պատրաստակամութիւն պէտք է: Եւ կը ցուիինք, որ Շերվանդազէ Կլանաւոր Բուսերազիբը, բայց բանաստեղծական կանխացողութենէ բացարձակապէս զուրկ կը թուի («Շնամբ», 1 Օդոտտո 1912):

ՄԵՐՈՒԺԱՆ ՊԱՐՍԱՄԵԱՆ .

Այս գիրքը տեղեւոր բարոյականի երեսը նետուած ներշնչութեան ափ ձը ցեխն է... Քանի ձը արժէքաւոր կտորներու բոժ լիարուտ ցանուած են այնպիսի եւ այնքան լայնի անբարոյական, յետին աստիճանի անբարոյական կտորներ, որ մենք պիտի չկարենայինք ընել Աշքերուժաներ... Ներուի մէջ այնքան լի է սմեակները իրապապա պոզութեամբ եւ զրգոյի նկարագրութեամբ... Ազէս մըն է, սեր մըն է այդ գիրքը («Վարուժանի արձագանգ», 6 Ապրիլ 1913):

«ԿԱՐՈՂԻԿԻ ԱՐՁԱԳԱՆԳ»

Տեսէք զո՞վ գրիւր են Տորէն, այսինքն ազայոց ուսուցման բարոյականին, կրօնքին աւանդական պաշտպան նախնախնայիք, ազայոց հայր եւ խորհրդատու... զո՞վ, գիտէ՞ք, Վարուժանը: Ահա բառ առ բառ, ինչ որ կը տեղեկագրուի մեզ. «Ինչպիսի վարուժան կամ Զարուժանեան ասեմ մը Բրզնիկայ տնօրէն ու վարժապետ, յետոյ անկէ հետացած իր ցայքալցալի բարոյց պատճառաւ, կենսական իրմէ դուռ անցնալ ազգական մը հետ եւ յետոյ անուանացած էջմիածնական պատկով» («Վարուժանի արձագանգ», 6 Հոկտեմբեր 1912):

«ԿԱՐՈՂԻԿԻ ԱՐՁԱԳԱՆԳ»



Վարուժանի գառակները՝ Վերտիկ, Արմէն, Հայկ

1913

Յաջորդաբար կը գրէ «Ապաստում», «Յարիանի ծովեր», «Լուսնից», «Միլոյի Աստղիկից», «Իարձ», «Նաւասարդեան», «Ցան», «Անդապաւիր», «Կակաչներ», «Վեռկր», «Իսպար ճիւղ», «Լոգանէն վերջ», «Ասաչին ծիլեր» եւ «Ակաւբը» բանաստեղծութիւնները եւ երկու արձակ գրութիւններ՝ «Գաղափարի ասպետը» եւ «Բափֆի»:

• Փետրուարի կէսերուն, Յովհաննէս Պալեանի մեկնաստութեամբ՝ լոյս կը տեսնէ «Հեթանոս երգերը», յետեւ բանաստեղծութիւն, 331 էջ:

• Փետրուարին՝ Յակոբ Սիրունիի հետ կը ծրագրէ հրատարակել զեղարուեստական տարեգիրք մը՝ «Նախասարգ» անունով:

• Յ Մարտին կը ժամակցի Լեւոն Շանթի «Հիմ աստուածներ» թատերգութեան ֆենարիման:

• 10 Մարտին կը ժամակցի Սաղաք Աղաճի Ս. Աստուածածին եկեղեցիին մէջ Թերզեան պարիարքին ղէմ կազմակերպուած բողոքի ցոյցին եւ ցուցարարները ոգեշնչող ճառ մը կ'արտասանէ պատրիարքարանի պատուանէն:

• 16 Ապրիլին Էսայեան սանուց միութիւնը կը կազմակերպէ «Հեքամուս Երզնթու» նուիրուած ասուլիս մը: Կը նախադահէ Աղեքսանդր Փանոսեան, կը կարգադրէ Գրիգոր Զօհրապէ բացման խօսքը եւ զեկուցումով հանդէս կու գան Յակոբ Սիրունի, Եղուարդ Գոլանճեան, Տիգրան Զեպուրեան, Արմենակ Բարսեղեան, Ռուբէն Զարարեան եւ Գարեգին Յատակ:

• Մայիսի սկիզբը սանձին զբօսով լոյս կը տեսնէ «Հեքամուս Երզնթու» նուիրուած ասուլիսին զեկուցումները:

• 2 Յունիսին, Սիւմնոն թուրքական զորքին նուիրուած Էսայեան սանուց միութեան ասուլիսին կը ներկայացնէ «Երզնթու» փերթուրիները:

• «Հայ ցրականութիւն» հանդէսը իր 1 Օգոստոս թուակիր համարով կը սկսի հրատարակել Յակոբ Քիւֆէճեանի «Մեր բանաստեղծները — Դանիէլ Վարուժան («Ցեղիմ սիրտը» ու «Հեքամուս Երզնթու») յօդուածաւարքը:

• 13 Հոկտեմբերին, Բերայի Փըթի Շանի թատրոնին մէջ կը բանաստեղծական շաբաթուան զրուցումներուն առիթով:

• 20 Հոկտեմբերին, Բանկայի զերեզմանատան մէջ, Սիւմնոն Զաւարեանի դադաղին վրայ կ'արտասանէ դամբանական մը եւ ժողովուրդին պահանջով կը կարգայ իր «Ասկայծ սրագ» բանաստեղծութիւնը:

• 27 Հոկտեմբերին, Մուրատ Բախալիեան սանուց միութեան կազմակերպած զրական-երաս-



Գ. Վարուժան
Պարտիզակ, 1914ին
(Եմբանկարէ մը ասուած)

Մի ժամեաց Թերզեանի հաշտութիւնը աշխատող մութ ուժերին պայքարը վաղուան յաջողութիւնն է: Եթէ մեր իսկ վրէժ ըտաք սուրհմբու զուրա սարսուռը, զիտէք թէ կամքն ու անհնձեթութիւնը կը խորասկնն պողպատներն անգամ: Անոնք, որոնք այսօր կը կուտին մեղէ ղէմ, վաղը, մեր յաջողութեան ասան, պիտի համարուն, թէ կղերք լի կրնար իր լուծովը ծանրանել մեր վրայ, եւ այդպէս անոնք փճացման խորխորաբայ պիտի դիմեն: Կղերք ուղեց լասթնակա-նութիւն պատուաստել մեղի, բայց մենք հայ ենք ու հայ պիտի մնանք: («Ազատամարտ», 12 Մարտ 1913):

Գ. ՎԱՐՈՒՅԱՆ

Հիմնուս են այդ երգերը, եւ հիմնուս ոչ հոսմեական պերտութեամբ, ոչ յուճական փոփոկութեամբ, այլ լոկ բարեւոյական պղծութեամբ: Ոչ մէկ սրբութիւն, ոչ մէկ նուիրական զգացում յարգուած է հոն. հոն Վարուժան մտայն է բուրսովին ինք-

զննքը, մտցած է ընտանեկան սրբութիւն մ'ունենալը, մտցած է ձեռքին յանձնուած գրգոր հըրելատեղային արտեր ունենալը: Եւ Վարուժան... Հիմա քերականներ կ'ընթացնէ Տոն ժողովի մը ցեխոտ եւ գոյտոտ զարուժիչները («Բազմավեպ», Օգոստոս 1913):

ՅՈՎԱԾԱՆ ԱՒԳԵՐ



Ի կանոնայ միայն մարմնայ հրապարակի զիւր հանուած են իրր կատարելութիւնը եւ նմայթ, յորում է զուր կը փնտռենք աւանց քարոյական եւ յարչ մազը ներառուցիլ յատկութիւնները եւս («Ամսօրնայ անդեկատու», Մարտ 1913):

ՅՈՎԱԾԱՆ ԱՄՏԵՆՆ



«Էնքանու երգերը անգրաւիստ անբարոյութեան եւ նիւթազալս անկրօնութեան գոտարան մըն է («Կոմպոզիվե արձագանգ», 8 Յունիս 1913):

ԲՈՐԱՍԻ



Մայրէ է ծայր ներգաշնակութիւն, շնորհք, դիւս ու նկարագրի գրգորի մը ամբողջ հրաշայիքը, պոնք կը թագնէ, կը յափշտակեն, կը խանդավառեն բոլոր շեթերցողները: «Էնքանու երգերը մեր քերթողական գրականութեան ամենէն եզր արտայայտութիւններէն մին է, եւ ասոյանդատը շեղանկը ջերմապէտ շնորհատրեի է հայ գրականութեան նախնային իր այս թանկագին գանձին համար («Բիւզում-դիտն», 12 Մարտ 1913):

ՔԻՆԻՋԱՆԱԴԻՆՆ

Ճըլտական հանդէսին կը բռնախօսէ Ալիշանի եւ Պէշիկթաշլիանի մասին:

● Նոյեմբերի սկիզբը լոյս կը տեսնէ «Նաւասարդ» տարեգիրքը:

● 15 Դեկտեմբերին, Կոստան վարժարանի սըրահին մէջ կ'ըլթ կ'ունենայ Յակոբ Գուրգէնի հանրային եւ ուսուցչական քառասունամեայ գործունէութեան առթիւ:

1914

Յաջորդաբար կը գրէ «Բարսիմեր», «Հասուն արտ», «Զօն», «Համայնի ազրիւրը», «Արքայից արքան», «Միջօրէ» եւ «Հունգարի կը ժազկեմ» բանաստեղծութիւնները եւ երկու արձակ գրութիւն՝ «Մնումը» եւ «Կծու խօսքեր»:

● Յակոբ Քիւֆէճեանի, Կոստան Չարեանի, Գեղամ Բարսեղեանի եւ Ահարոնի հետ կը ստորագրէ Յունուարի սկիզբը հրատարակ եկած «Մեհեան» հանդէսին «Հաւատոյ հանգանակը»:

● Մարտի կէսերուն Ժան Մինասեանի թարգմանութեամբ Պոլսոյ մէջ Փրանսերէնով լոյս կը տեսնէ «Հարմը»:

● Ապրիլին արեւմտահայ մտաւորականները, Մկրտիչ Փորթուզաւեանի յորեկանին տոթիւ՝ լոյս կ'ընծայեն «Տողովածու» մը, որուն կը մասնակցէ «Թեմիլիւրաները» արձակ կտորով մը:

● 30 Ապրիլին, Թիֆլիսի երաժշտական ընկերութեան դահլիճին մէջ Վահան Տէրեան կը կարգայ «Հայ գրականութեան գալիք օրը» զեկուցում մը, ուր յարձակում կը գործէ «պոլսահայ բոլոր յանկարծակի հեթանոսացած պոետներէ» դէմ:

● Նոյն ամսոյն կը բաժնուի մեհենականներու խումբին:

● 20 Յունիսին՝ Պոլսոյ մէջ Գերմանիոյ եւ Թուրքիոյ միջեւ կը կնքուի դադանի դաշնագիր:

● 20 Հոկտեմբերին Ռուսաստանը պատերազմ կը յայտարարէ Թուրքիոյ դէմ:

• 29 Հոկտեմբերին Թուրքիան կը մտնէ Համաշխարհային Առաջին պատերազմին մէջ՝ գերմանա-աւստրիական խմբաւորման հետ :

• 11 Նոյեմբերին Սուլթանը կը յայտարարէ «Մրբազան պատերազմ» :

• Մկրտիչ Պարտիզեանը կ'այցելէ Վարուժանին ու կ'առաջարկէ անոր ժամանակաւորապէս մեկնել Խալիսա : Կ'առարկէ, թէ չի կրնար ձգել ընտանիքը :

• Կը լուսանկարուի Ռուբէն Սեւակի տան մէջ, Սեւակի կողմէ :

1915

Յաջորդաբար կը դրէ «Գեղօմ Ալիսիմ», «Ապիբա» եւ «Աղօրիք» բանաստեղծութիւնները :

• 10 Ապրիլին Մկրտիչ Պարտիզեան դարձեալ կը հանդիպի Վարուժանին, կ'առաջարկէ իր օգնութիւնը՝ Պուլկարիա անցնելու : Կը մերժուի Պարտիզեանի առաջարկը : Նոյն թիւղղրանքը կ'ընեն իրեն Ջարուհի Գալէմբերեան, Անայիս եւ Յակոբ Սիրունի : Կը մնայ անդրդուելի :

• Ապրիլ 24ի գիշերը, Յովհաննէս Պօղոսեան եւ Սահակ-Մեսրոպ կ'այցելեն իրեն իր բնակարանը ու կը մնան մինչեւ ժամը մէկ : Հիւրերուն մեկնումէն ետք կը ձերբակալուի :

• Ոստիկանութիւնը կը բանագրուէ նաեւ իր ձեռագիրները, ի շարքս որոնց նաեւ «Հացիճ երգը» ժողովածուն :

• 25 Ապրիլին 192 ուրիշ ձերբակալուածներու հետ ոստիկանատունէն կը տանին զինք Պալատ կեդրոնական բանտը :

• Գիշերը, ոստիկանութեան անօրէն Պետրի պէյին եւ բանտի անօրէն Իպրահիմ էֆենտիին



Բ. Բիւփէճեան (Օշկան) Գոլիս, 1914

Ան ունի բանաստեղծի կատարեալ հոգի : Ձեռքը կը տպուորեն նոյն հզօրութեամբ իրերն ու ժարգները, տեսարաններն ու երգերը... Կուսակցութիւնը, քան Դուրեանը, եւսազ արտաքին, քան Մեծարեանը, ունի անոնցմէ աւելի թւիւր : Դուրեան ու Մեծարեանը երգահաններ են, անդուգական գեղաներ հայ բանաստեղծութեան, բայց անոնցմէ Թորոզ ժողովուն գրեթէ միօրինակ է միտ : Վարուժան կ'երգէ ամէն շարժման : Ու ան դաշնակ մըն է, իր շնչոքը բազմապէս, իր ուսման աւելի համարեակ, իր քաղցրութիւնը աւելի կորովի կը գտնուի («Հայ գրականութիւն», 1 Գեղեցիկներ 1913) :

ԵԱԿՈՐ ԲԻՒՓԷՃԵԱՆ

Վարուժանի հօգին քառադրոշմ գրեթէ մէկ է, որուն իւրաքանչիւր կողմէն կը ճառագարին Կեդրոնական, Հանրային, Ուսգի եւ ընկերային Վշտի բայց ու բազմերանգ ճառագայթները («Երկրագնդ», 1 Մայիս 1914) :

Գ. ՄԵՒՐԱՐԵԱՆ



Գ. Վարտանով
Պոլիս, 1914

...Յանկարծ ասե՛ր զուրկ զար-
նուկացու ևս քանի որ Վարտանով
կէս Կոնստանտնուպոլիսէն էր, եւ զայն զու-
րկ բանալու... Գուրու պատիկ ժը
բացի եւ ան Երեք Կողմ զտայ
զրան առջեք: Գուրու Հրեյով
բացին եւ ներս մասն Վարտանով
ուր էն շահով: Երեք ժէկը
յառաջացու զէպի նկարան, ինչ
որ զատ բաժանուած ժըն էր տան
ժէլ. այնպէս կ'երեւէր, որ ժեր
ասան ներքին մասին ծածօթ էին
լիովին: Միւս երկուքը անցան
Վարտանովի գրասենեակը եւ ա-
րին ինչ որ գտան ու լեցուցին
իւրենց սուպրակները: Մինչ այդ
միւս ժարը Վարտանովին հետ
գուրու հկաւ ներթափանչեմ եւ երե-
քը միասին ինձի դարձան ու ը-
սին. Վարտանովին ժէկի հետ պէտք
է դալ, որպէսզի ստորագրէ, թէ
ասանք իր թուղթերն են: (ԵՅՈՒ-
ՂԱՄԱՆԻՍ ԳՅԱՄԻԷՂ ՎԱՐՏԱՆՈՎ-
ՅԻՉ, Փարիզ, 1958):

ԱՐԱՅՍԻ ՎԱՐՏԱՆՈՎ

կարգադրութեամբ, սուրենաւոր ոստիկաններու
հակադրութեամբ կը տարուին Ստաւ Գորնուի նա-
ւամատոյցը, ուրկէ նաւով կը փոխադրուին Հալ-
սար փաշայի երկաթուղային կայարանը: Իսպա-
հիմ էֆենտիին հրահանգով ձերբակալուածները
կը տեղաւորուին շոգեկառքի առաջին եւ երկրորդ
վանդակները եւ Ապրիլ 28ի երեկոյեան կը հասնին
Չանդըրը:

• Մայիսի սկիզբը աքորականներուն կ'արտոն-
ւի սենեակ վարձել քաղաքին մէջ՝ ամէն առաւու
ոստիկանատուն ներկայանալու պայմանով: Վա-
րտանով վարձակալ կը դառնայ հայ ընտանիքի
մը:

• Պուլէն կը խնդրէ ու կը ստանայ «Իլիակա-
Գը»:

• Չանդըրի մէջ կը շարունակէ ստեղծագործել
ու կը լեցնէ վեց տեարակներ, որոնք կը կարծը-
ւի, թէ ոչնչացուած են զինք խոշտանգած դահիճ-
ներուն կողմէ:

• 25 Օգոստոսին կը արուի Վարտանովը, Սե-
ւակը եւ իրենց երեք ընկերները սպաննելու հրա-
հանգը եւ դահիճի գործը կը յանձնուի աւազակա-
պետ Հալուսի:

26ին՝ կառապան Հասանին կը հրամայուի
մահապարտները Չանդըրը կամուրջէն փոխադ-
րել Այաշ: Հինգ-վեց ժամ ետք, թունէի զուր-
վայրին շնորհով, դարանի մտած քիւրտերը, Հա-
լուսի ղեկավարութեամբ կը կեցնեն կառքերը եւ
վար կ'առնեն Վարտանովն ու ընկերները: Մար-
դասպանները ետ կը ճամբեն կառապանը եւ զա-
գանաբար կը սպաննեն Վարտանովը, Սեւակը եւ
իրենց երեք ընկերները:

• Նոյն օրը Պուլսոյ մէջ կը ծնի երրորդ զուա-
կը՝ Հայկ:

ՅԵՏ ՄԱՀՈՒ

1916-1918

Բրզնիկ սպրող բուր Զպուգեհարանները կը ջարդուին, բացի Վարուժանի կրտսեր եղբայր Վահանէն, որ հրաշքով կը ճողուպրի Համասարած սպանդէն:

● Տիկին Վարուժան եւ իր երեք զուակները կը մնան Պոլիս:

1916

Մուկուայի Հայոց Կոմիտէին առաջարկով առաջ նշանաւոր բանաստեղծ Վալերի Բրիտով յանձն կ'առնէ ռուս ընթերցողին ներկայացնել Հայ բանաստեղծութիւնը՝ սկիզբէն մինչեւ իր օրը: Ուրիշ Թարգմանիչներու օժանդակութեամբ՝ Բրիտով կը կազմէ շուրջ 500 մեծադիր էջերէ բաղկացած Հատոր մը, ուր տեղ կը գրաւէ նաեւ Դ. Վարուժան:

1918

Հայ իրականութեան յայտնի կը դառնայ Վարուժանի, Սեւակի եւ իրենց բախտակից երեք Հայերուն նահատակութիւնը, երբ զինադաշարէն ետք զիրենք սպանութեան վայրը փոխադրած Թուրք կառապան Հասան կը կատարէ ականատեսի իր վկայութիւնները:

1919

Պոլսոյ մէջ, էստա վաշայի նախագահութեամբ զամբարուած պատերազմական ատենը Ծ տարի եւ 4 ամսուան Թիսպարտութեան կը դատապարտէ Վարուժանի եւ ընկերներուն սպանութիւնը կազմակերպած Իթիքհատի Չանդըրի պատասխանատու քարտուղար ձեմալ Ուղուզ պէյը, որ ամբաստանուած էր նոյնպէս մեծ զեղծումներու Համար:

● Տիկին Վարուժան կաշառելով զբազննութեան պաշտօնեան, Հայ դրողներէն բռնազրաւուած ձեռագիրներուն ներքնայարկը մտնելով՝ կը յաջողի ձեռք ձգել «Հազին Երզն» շարքին ձեռագիրները:



Զարէն աջ՝ Տիկին Վարուժան, Ժիլայր Արիկիան եւ բանաստեղծին Էդրայրը՝ վստահ Չալագ-Ֆաթիմա, Կանո, 1958

Սերաստացի գեղջուկ մի այր, ազրած ու Հայոց սպան անասնի կենսապայմաններում, ըստեղծում է նորագոյն մի պոետիկ, որի թեմաները սերտորէն մերձենում են եւրոպական եւ ռուսական մտքի ամենալուսատու յայտնութիւններին...

...Այն, ինչ երազում էին լուսադուր սիմֆոնիստները՝ իրեն ժամանակակից պոետիկ բարձրագոյն նուաճում, իրականացրեց սերաստացի գեղջուկը («Գըրական Գերք», ձրեւան, 1984, թիւ 25):

ՍԵՐԳԷՅ ԳՈՐՈՎԵՍՏԻՆ
առաջ բանաստեղծ (1919)

•

Կրթաւորը անխուսափելի էր, եթէ անպատեհի զուգորդութիւններ չնպատեհին անոր փրկուիլուն: — Գրաքննութեան մաս ծառայող տիրաւոյնի հաս- յու մը անմեկնելի պատարտու- կամութիւնը եւ, միւս կողմէ, կատարուած նիւթական որոշ զո- շողութիւն մը յաշտեցան ետ խել աջ զորքը՝ որ մասնաւոր նախնականութիւն մը կը ստա- նար Հեղինակին նահապետու- թեամբ («Հացիմ երգը», Պոլիս, 1921):

«ՆԱԻԱՍԱՐԴ ՄԻՈՒԹԻՒՆ»

•

Բանաւոր ընթերցումներէ ըն- Թացում կուտակած պաշարնե- ռին Պարսը լուսով առեկ նաեւ զբաւար կերպարանը: Նա յո- բարեց «Վարուամի պնդիւմ» ուսումնասիրութիւնը, որը եւ զարմաւ համալսարանի էր ա- ւարտական զիպումային աշխա- տանքը:

Հանրակացարանի վարուսմու- պաշտութեան միջոցառում ճշն- ւեց նաեւ Վահագն Դաւթեանի աւարտական զիպումային աշխա- տանքը, որը նախորտէ էր «Հա- ցիմ երգը» շարքի բովանդակու- թեան եւ մեծ, աշխարհայ- նացումային ուղղութեանի եւ արտայայտած ժողովրդական սիրելիներէ քննութեան («Գրու- կան թերթ», Երեւան, 1934, թիւ 20):

ՕՈՒՐԷՆ ԱՂԱՐԱԲՈՒՆ

• **Հեւոն Էսաճանեան լոյս կ'ընծայէ «Դանիէլ Վարուամ» անուն իր ուսումնասիրութիւնը, Պոլիս:**

1921

Պոլոյ «Նաւասարդ միութիւն» Հրատարակչութիւնը լոյս կ'ընծայէ «Հացիմ երգը», 29 բանաստեղծութիւն, 95 էջ:

1945

Պարոյ Սեւակ Համալսարանի իրրեւ աւարտական թեզ կը ներկայացնէ «Վարուամի պնդիւմ»:

1948

Վահագն Դաւթեան Համալսարանի իրրեւ աւարտական թեզ կը ներկայացնէ «Հացիմ երգը»:

1950

Երուսաղէմի Սրբոյ Յակոբեանց սպարանը լոյս կ'ընծայէ «Վարուամեր» (78 էջ) եւ «Հացիմ երգը» (62 էջ):

1953

Երուսաղէմի Սրբոյ Յակոբեանց սպարանը լոյս կ'ընծայէ «Յեղիմ սիրտը» (257 էջ) եւ «Հեքսնոս երգեր» (297 էջ):

1955

«Յուսարեր» մատենաշարը լոյս կ'ընծայէ Դեռնիկ Ճիզմէճեանի «Դանիէլ Վարուամ — դապրացական կեանքը, սնտիպ նամակները եւ գրականութիւնը», Պահիրէ, 270 էջ:


1956

«Ալիս» պարբերադիրը լոյս կ'ընծայէ Յ. Օւշակեանի «Դանիէլ Վարուամ» մենագրութիւնը յաջորդական հինգ թիւերով (ԺԴ-ԺԸ):

1958

8 Փետրուարին, Կանտի մէջ տեղի կ'ունենայ Վարուժանի կիսնդէին ու գործին նուիրուած երեկոյ մը, ուր զիկուցումով Հանդէս կու գայ Փրանսացի բանաստեղծ Լիւք-Անտրէ Մարսել:


Յաջորդ օրը, Կանտի Համալսարանի Կեդրոնական Մատենադարանի օրա՛հին մէջ տեղի կ'ունենայ Վարուժանի անուան Յուշատփայտակին բացման Հանդէսը, որուն՝ Պելճիբաշի եւ Ֆրանսայի մեր գաղութներուն ներկայացուցիչներուն կարգին՝ կը մասնակցին պելճիբաշի եւ Փրանսացի պետական ու մշակութային անձնաւորութիւններ, իսկ խօսք կ'աւանդեն Պելճիբաշի կրթական նախարարին ներկայացուցիչ՝ արքայական ակադեմիայի անդամ եւ բանաստեղծ Բոժէ Գոտարը, Կանտի Համալսարանի վերատեսուչ վերոֆենէօր Փ. Լամպրէիթ, վերոֆենէօր ճրեւտերիք Մէյոնի, Վարուժանի գասընկեր Փիէռ Մաէս, «Բայէ տը Սիլուանի տնօրէն Ժան Պալար, բանաստեղծ Լիւք-



Բոժէ Գոտար

Վարուժանի սիրային փոթը-ւածները կը դասուին երբեւեցէ գրուած ամէնէն չփոք փոթուածներու շարքին: Մեր այժմեան խարդախ հասարակութեանց մէջ սէրը դարձած է քողարկուած, անձանոթ ստատուած մը: Մտնել Վարուժանի բանաստեղծութեան մէջ՝ կը նշանակէ մտնել աշխարհ մը, ուր ճամբաներու անկիւնազարմներուն ժարդ դեռ կը հանգիստ աշխարհ տեսնոյն: Ես յատկապէս նկատի ունիմ «Լայպէտս դժայիտի բանաստեղծութիւնը» («Յուշատետեսն», Փարիզ, 1956):

Բոժէ Գոտար



Կանխում «Յուշատետեսն»ին կողմը, Յուշատետեսն՝ Լայի Վարուժանի



Տիկին Վարուժան՝ Գ. Վարուժանի զինաժամկուկին շինաց, Կանտ, 1958



Ժան Պապ

Հինքը սովորութիւն ունէին շուշու, որ կ՛թէ սուէ մէկը երէտ-տատարը մեան՝ կը նշանակէ ստուածները կը սիրեն զինք: 31 սարկիներն մեան վարուժանին պարագային պէտք է շուշու, Բէ ստուածները զոյն սիրան են ունչուր կատարութեամբ (գծուաւանան, Փարիզ, 1956):

ԺԱՆ ՊԱՊ

Իմ վրայ անհնէի պատարու-թիւն ձգած էր սնոր սննուաւորութենէն բնու ճմայքը: Ծրաներէն լեզուին կատարելագոյն սիրտոյնան՝ սն կ'արտայայտուէր սնուան նրբերանգներով եւ սնոր մաքիւր կը թուէին պարտուած ըլլալ սնուակ մը բուսանգոծակոն լուսազտակով, ո'նզում երբ սնուք առնչուած ըլլալին ընթացիկ իրողութիւնուներու: Անոր նրբանկատ քաղաքապարտութիւնը, ոգնուական լուսը, խոհականութիւնը եւ զարմանալի անկէզնութիւնը շուշուան հարցերուն կատարման՝ սնուր մէջ կը յայտնաբերէին վաղեմի քաղաքակրթութեան մը շարունակը (գծուաւանան, Փարիզ, 1958):

ԺԱՆ ՓԻՐԷ

Անորէ Մարուշի, Տիգրիսի վարուժան (Խայրէնով), Էտի Էմբրզեան, Սեդրակ Միթթարեան, Յակոբ Իսկէնտէրեան եւ Կարո Փօլատեան:

• Ետարշ Նարչունիի, Բիւզանդ Թափուանի, Յակոբ Իսկէնտէրեանի, Երուանդ Փամպուքեանի, Էլուարդ Ժափեանի եւ Կարո Փօլատեանի իմքազրութեամբ Փարիզի մէջ լոյս կը տեսնէ «Յուշմատեան Դանիկի վարուժանին» տնու Նատարը, որ կ'ամփոփէ Պելլէրայի հայ ուսանողներու նախահետադիմութեամբ Կոնստանտնուպոլիսի մէջ մեծ քանտանգոծին Յուշմատեանի զեանգոծան եւ յարակից հանդիմութեան պատմութիւնը, հայերէն եւ Ֆրանսերէն լեզուներով: Պատկերազարդ: 104 էջ:

Ներքի էջին որուած մէկ ծանօթագրութիւնը կ'ըսէ. «Յուշմատեանի տպագրութեան ծախքը ապահովեցին Տիգրիսի վարուժան-Արիկեան եւ մեծ քերթողին գումարները, ինչպէս նաև Պ. Խայրի Կարապետեան եւ Պ. Ժ. Ալլանեան»:

1959

Փարիզի «Փիէա Սեկեր» հրատարակչութիւնը վաճէ Կատէլի Թարգմանութեամբ Ֆրանսերէնով լոյս կ'ընծայէ «Հալցիմ երգը», 69 էջ:

1961

Երեւանի «Հայպետհրատար» լոյս կ'ընծայէ Յովհաննէս Ղաւարանեանի «Դանիկի վարուժան» մեծագրութիւնը, 196 էջ, տպաքանակ՝ 5 հազար եւ Հեկտոր Ռչտուիի «Դանիկի վարուժան» մեծագրութիւնը, 290 էջ, տպաքանակ՝ 3 հազար:

1965

Երեւանի «Հայաստան» հրատարակչութիւնը լոյս կ'ընծայէ Դուհար Ազնաւուրեանի պատարտուած «Դանիկանին», ուր տեղ գտած են 162 սուտարուած եւ 66 ատպուած նամակներ: 374 էջ, տպաքանակ՝ 10 հազար:

1967

Փարիզի մէջ կը տեսնի վարուժանի երթայրէ՛ վաճան Զպուղքարեան:

1968

«Համազգային» հրատարակչութիւնը լրյա կ'ընծայէ Յ. Օշականի «Համապատկեր» Զ. Հատորը, ուր տեղ կը գտնէ նաեւ «Դանիել Վարուժան» մենագրութիւնը (էջ 184-244) :

• «Համաեքստատահայ վերաշինաց միութիւն» հրատարակչութիւնը լրյա կ'ընծայէ Առաքել Ն. Պատրիկի «Դանիել Վարուժանն իմ յուշերում» հատորը, Պէյրուս, Տպ. Մշակ, 152 էջ :

• Երեւանի «Սովետական գրող» հրատարակչութիւնը լրյա կ'ընծայէ Ս. Գ. Սահակեանի կազմած «Երկեր»ը, 355 էջ տպագրանակ՝ 10 հազար :

1971

«Գէորգ Մելիտինեցի» գրական ժրգանակը Լիւքս-Անտրէ Մարսելի Քարգմանութեամբ եւ Կարօ Փոլատեանի աշխատակցութեամբ Ֆրանսերէնով լրյա կ'ընծայէ Հատորներ ժը, Պէյրուս, 23 բանաստեղծութիւն, 196 էջ :

1977

• Երեւանի «Սովետական գրող» հրատարակչութիւնը Հ. Մամեանի Նկարագրաբանում լրյա կ'ընծայէ «Հարմը», 30 էջ, տպագրանակ՝ 30 հազար :

1978

Երեւանի Համալսարանի հրատարակչութիւնը լրյա կ'ընծայէ Վազգէն Գաբրիէլեանի «Դանիել Վարուժան» մենագրութիւնը, 430 էջ, տպագրանակ՝ 10 հազար :

1984

Հայկական գիտութիւններու ակադեմիայի հրատարակչութիւնը լրյա կ'ընծայէ Ա. Ս. Շարտրեանի պատրաստած «Դանիել Վարուժանի կիսմիջի եւ տեղագրութեան տարեգրութիւն» հատորը, 284 էջ, տպագրանակ՝ 4 հազար :

• Երեւանի «Սովետական գրող» հրատարակչութիւնը լրյա կ'ընծայէ Վազգէն Գաբրիէլեանի կազմած «Երկեր» ստուար հատորը, 575 էջ, տպագրանակ՝ 30 հազար :

Շնորհալից յարկի տակ Վարուժան անուն տէր եւ խանդավառաց կը ամէր իր գուակներուն հանդէպ: Անդրանիկը՝ Վերոնիկը, որուն ձեռքն էր իր գեղեցիկ կտորներէն մին՝ «Վարուժանի»-ը, երկրորդը՝ Արմէն, «Գահաճառանգ» կոչուողը, երրորդը՝ Հայկակ, որ տարբերակ զուգահեռութեամբ ժը ձեռքն էր նորը սպանութեան որը, Օգոստոս 26 1915ին. երկն ալ առանցստ հայերու հետ, մանչերը Թրեզնո, եւ ալիկը՝ Նիւ Մարք. ունին իրենց գուակները՝ Անան, Վերոնիկան, Գաբրիէլը, Վարդանն ու Ժերարը, հինգն ալ ջերմ՝ վառվառն եւ ուշիմ փորձիկներ («Յուշատանալի Դանիել Վարուժանի», Փարիզ, 1985) :

ՏԻՒՆ ԱՐԱՅԱՆ ՎԱՐՈՒՅԱՆ

Մեծ զոհանդուրդով կը պատճառէ ինքի, որ վերջապէս նորմալ մէկ մաս եւ մեծնէն Քանակակը կը զտուի վերջապէս հայրենական հողի վրայ եւ Ջեր պեռական պատմութեան խորքին տակ («Նամուկան», Երեւան, 1985) :

ՎԵՐՈՆԻԿ ՎԱՐՈՒՅԱՆ
ՍԱՅՐԱԶԼԵԱՆ

Լսա Անճելոյի հանդիսութեան որը.— «Նս նսն եմ նոր նստահարութեան որը, իսկ մեցուկ Ապրիլին նստ իմ Քոսթ» երբորը տերուրի վարուժանը: Երբ նորմալ կը մտածեմ, անպարտ կը յուզուիմ Եւ Երբս իհատակը ինձի անբարեկէ: Մասնաւորապէս շատ յուզուած եմ այս գիշեր, այս շեղ յարեւանի ներկայ գտնուելով («Հայրենիք» մայիս, 1984, թիւ 27) :

ՎԱՅՆ ՎԱՐՈՒՅԱՆ

Մ. Ի Շ Խ Ա Ն

« Լ Ո Յ Ս Ը »



Գ. Վարուժանի Հարուստ եւ բազմակողմանի քերթողական վաստակին մէջ «Լեւրանու Երգեր»-ու մաս կազմող «ԼՍԽ»-ը խորագրուած բանաստեղծութիւնը տուննայտարուկ տեղ մը կը դրուէ իր խորքով եւ արուեստով:

Առաջին ընթերցումին իսկ անմիջապէս կ'անդրադառնանք, որ կը գրուէր յուրանայական խորք ունեցող բազմիմաստ դրուածքի մը զիժաց, ուր սակայն տրայտայտուած բոլոր միտքերը կը վերածուին մէկ ու ամբողջական միութեան մը — լոյսի:

Յիշեալ քերթուածին մէջ փոստարանուած լոյսը թէ՛ իրական այն լոյսն է, որ կը կախարդէ մեր տեսողական զգայարանքը եւ թէ՛ նոյն ասին Հոգեկան ու իմացական գաշտեր ոտզող ներքին «իմանալի» լոյսն է, որուն ծաբաւով ճամբայ կ'ընէ բանաստեղծը եւ որուն պաշտամունքով դարեւր տուալ Ն. Շնորհալի աղօթեց առ Աստուած:

Մագնա՛ ի հոգիս մեր գլոյս քո խմբալի

Լոյսով մարմնաւորուող Գ. Վարուժանի սպրուանները ծիածանազոյն ճառագայթում ունին: Քերթուածը Հիւսուած ըլլալով հանդերձ գաղափարներու Հէնքի մը վրայ, կը փրկուի մասնումներ շարալարող լափածոյ զըրուածքներու չտրուիմունէն, որովհետեւ «ԼՍԽ»-ին խորհուրդները որսալու համար ճամբայ էլլող քերթողը կրցած է իր սրտին կայծերով լուսավառել եւ ջերմացնել դանտէք:

Կ'երթամ ազրիւր լոյսին...

Ի՞նչ է այդ Լոյսը եւ ո՞րն է այդ աղբիւրը:

Լոյսը Գ. Վարուժանի համար Գեղեցիկն է, Գեղեցիկին համապարփակ էութիւնը՝ իր այլազան եւ այլակերպ ճանաչաւորումով:

Ամէն քանի առաջ անշուշտ, արեղտիկն կենարար լոյսն է տնիկա, որ կը փռուի գաշտերուն եւ տանիքներուն վրայ, որ փողոցներէն կը Հոսի «մար կքուած կաքի մը պէս եղի», երբեմն գունազեղ թիթիռներ կը դառնայ պտուսաններու քարին վրայ եւ երբեմն իրիկնամուտին յսկինթի դետեր կը կազմէ Հորիզոնէ Հորիզոն:

Մեր նայուածքը կախարչող տեսանիւթ այս լոյսը, որ մեր մարմնէն ներս կը թափանցէ, կը լոյսէ եւ կը զինովցնէ մեր զգայարանները, իր փայլէն, ջերմէն եւ զոյններէն անդին ուրիշ խորհուրդներ եւ դանձեր ունի, ուրիշ հորիզոններ կը բանայ՝ այս անգամ բանաստեղծի Հոգիի՛ աչքերուն զիժաց:

Լոյսը, որ կ'անցնէ է, կ'անցին արձուակոյն եւ զեղեցկազոյն հասարարը, հոգեկան աչք ունեցողին համար կը ցաթի նաեւ այնպետի՛ տեղեր, ուր

կը վերածուի աստուածային խորհուրդի եւ մշտնջենական գեղեցկութեան :
Գ. Վարուժանի Հողիին ոսպնակը կը նկարէ զայն .

Օր մը տեսայ էութեանն մաւ մը սուրբ
Մօրս հոգւոյն մէջ մանանչագեղ եւ ցարած
Մեր գիւղակին մէկ վաղեմի հերոսին
Հոգակոյտին վրայ դաւար :

Որքա՞ն պարզութիւն եւ պարզութեան ընդմէջէն լոյսի Հոգեղինացած
գեղեցկութեան եւ արժէքի ի՞նչ յուզաթաթաւ խորութիւն :

Արեւի լոյսէն եւ անոր արեւոյցումէն շատ աւելի անդին անցած է բա-
նաստեղծը եւ ամենագեղ լոյսը գտած իր մօր Հոգւոյն մէջ եւ գիւղակի գե-
ղեղմանատան բնակիչ վաղեմի հերոսին Հողակոյտին վրայ դաւար :

Լոյսը հիմա Հողեկան բարութիւն է եւ հերոսական խոյանքի նուիրա-
կանութիւն : Մարմնեղէն լոյսը հեազհեաէ կը վերածուի Հողեղէն գեղեց-
կութիւններու :

Գ. Վարուժան լոյսը կ'որոնէ տակաւին կրօնական ապրումներու մէջ,
իբրեւ «Յիսուսի կողէն դուրս հոսած արիւն», իբրեւ «Գանգէսի ափերուն
միացող զոհերու ընծայարեւում» :

Գերթումածին այս հասուածը, որ կը կտրուի կեանքի անմիջական եւ
բարսխուն զգայութիւններէն, նուազ տպաւորիչ կը դառնայ, որովհետեւ ա-
ռուելի փրկիւնփայլակներ կը վերածուի : Կը յիշեցնէ Նիլիա Տէմիրճիպաշեանը,
որ կը սիրէր թեւածել նման խորհրդաշուք ուրբաներու մէջ : Լոյսի կրօնա-
փիլիսոփայական այս արժեւորումը մեզ կը տանի 15-20 տարի մը ետ եւ կը
մղէ մաարերկու Նիլիայի «Իմ կիսմեծ» քերթումածին Հետեւեալ տողերը .

Այն արտասուքն, այո՛, եւ ուրիշ արցունքներ
Գեթսեմանիէն, Գանգէսին ծոցէն...

Վարուժան իր սյացքը կը գտնէ կրկին երբ լոյսը կը նոյնացնէ Արուես-
տին Հետ, Հանճարներու փայլատակումին, բանաստեղծներուն, որոնք գիշեր-
ւան մէջ զայն «կը խմեն աստղերէն, որ ցերեկուան մէջ՝ նուագեն Մարդերուն» :

Վարուժան եզրակացութեան մէջ կը պարզէ, թէ որքա՞ն դժուար է
Լոյսի ճամբան, քարքարուտ, փշապատ եւ այլ խոչընդոտներով լեցուն : Սա-
կայն բանաստեղծի Հողին «սափորն է դասարկ» եւ ինք արեան գնով որդած
է Հասնիլ Լոյսի ազդերին :

«Լոյսը» բանաստեղծութեան ընթերցումը հաւանօրէն մեզի չի տար
Վարուժանի ազգայնաշունչ կամ Հեթանոսական ապրումներու հաղորդական
Ղերժութիւնը, բայց ան իր մէջ կը խտացնէ մեծ քերթողին հիմնական յատ-
կանիչները — Թեւատր երեւակայութիւն, վեհութիւն, գեղական պատկեր-
ներ եւ լայն Հորեղեններ ընդգրկելու հզօր շունչ :

Վարուժան յաջողած է այս բանաստեղծութեան մէջ իր մտածումներ-
ուն հազնել սրտազրու տեսիլքներ, որոնք բնադանցական Լոյսը կը դար-
ձընեն բոլորիս տեսանլի եւ ցանկալի : Ան Լոյսը մեզի կը մատուցանէ իբրեւ
արարչագործութեան ամէնէն շքեղ գեղեցկութիւնը, նոյն աստի իբրեւ իմաս-
տութեան ակունք եւ առաջինութեանց բխում :

Հայ Հողիին լոյսի դարաւոր ծարաւն է, որ երգած է Գ. Վարուժան
իբ այս բանաստեղծութեամբ :

Մ. ԻՇԽԱՆ

Լ Ո Յ Ս Ը

Դուն կը փայլիս մեծութեան
 եւ գոհագործումին համար:
 ՌԻԿ-ՎԷՏՍ

Կերթամ աղբի՛ւրը լոյսին...
 Ուղին երկա՛ր է՝ սալարկուած է ուղին
 Կայծքարերով, ցանկուած՝ մուրտի փուշերով.
 Ուղին շեղ է ճառագայթի մ'հանգունակ:
 Անկէ կ'ելեմ՝ յենյով դողողջ ծունկերուս,
 եւ ծունկերէս, կոր գամեցին եղբայրներս,
 Արիւնքս տաք կը բըղխի:
 Հեւքն է՛ կուրծքիս, թարթիչներու վրայ՝ փոշին:
 Սիրտըս սափորն է դատարկ,
 Ու ես կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին...-

Լոյսն աղուոր է, բարձրութեան մէջ՝ հոսանուտ,
 Խոնարհումին մէջ՝ արդար:
 Օր մը տեսայ էութենէն մաս մը սուրբ
 Մօրս հոգւոյն մէջ ճաճանջագեղ, եւ ցաթած
 Մեր գիւղակին մէկ վաղեմի հերոսին
 Հողակոյտին վրայ դալար:
 Միջօրէին պայն տեսայ,
 Որ՝ նըման մեծ թիթեռնիկի մ'ըսպիտակ՝
 Կը քայլէր գաղջ պատուհանիս քարին վրայ,
 Որ մայթերէն կամ աղծապիղծ ճամբայէն,
 Ներողամիտ գըթութեամբ,
 Կը հոսէր նոր կըթուած կաթի մը պէս եղկ,
 Որ իրիկունն, հորիզոնէ հորիզոն,
 Կ'երիզանար գետերու պէս յակինթի,
 Կամ կը կազմէր, երկինքներուն վրայ խաղաղ,
 Անըր:ական առապաններ, որոնց մէջ
 Կը բռնկէին նունուֆարէ կըղկեակներ:
 Զայն ես տեսա՛յ, — եւ հոգւոյս մէջ արթընցաւ
 Պանդուխտի տենչ մը անորոջ եւ լըկիչ
 Դէպի գաւառ մ'անծանօթ, լի արեւով.
 եւ արդ կ'երթամ դէպի աղբիւրը լոյսին...-

Լոյսն է Մըտքիս հարսը, աղջիկն Աստուծոյ.
 Ան գինին է Տիեզերքի բերկրութեան,
 Որ իրիկուն մը, կողէն դուրս Յիսուսին,
 Հեղեղօրէն հոսեցաւ,
 Ներումի պէս հոսեցաւ, վա՛րը, Մեղքին
 Մեղանին շուրջը հաւաքուած մարդերուն
 Անյուաութեան ըսկիներուն մէջ դատարկ,
 Լոյսը արի՛ւնն է բնութեան,
 Գիշերուան թագն, ու պատմուճանն է օրուան.

Աստուածային Ակնին է՝
 Որ, երկունքի մէջ մեռած մօր մը նման,
 Կը ստեղծէ իր վախճանելու ժամանակ,
 Ակնին՝ հրեղէն բիբերով,
 Որուն հոգին ամէն գարուն կը տրոփի
 Հիւլէին մէջ եւ մարդկային մըտածման,
 Որուն համար պոհերով դեռ կը մըխան
 Նրփրական ափերը յորդ Գանգէսին:
 Ու ես կ'երթամ դէպի աղբի՛ւրը լոյսին...

Լոյսը մարմարն է երկնային հանքերուն,
 Որով Արուեստն, անմահական երապով,
 Կը քանդակէ ձինսամարմին աստուածներ:
 Իր ծոցին մէջ կը ծընին
 Մռայլ Տանթներն ու Հումերները հըսկայ,
 Իր ծոցին մէջ իմաստութիւնը երգ մ'է՝
 Ջոր գիշերուան մէջ խորին
 Բանաստեղծները կը խրմեն աստղերէն՝
 Որ նըսագեն ցերեկուան մէջ՝ Մարդերուն:
 Ան ամէնո՛ւն պինքը կու տայ, ամէնո՛ւն
 Կը բաժնրփի, եւ կը մընայ անբաժան
 Նըշխարքին պէս. — ան նըշխարքն է՝ որ կ'իջնէ
 Ամէն առտու, սեղաններուն վըրայ մեր,
 Մարդեղութեան արիւնլըայ խորհուրդին:
 Ու ես կ'երթամ դէպի աղբի՛ւրը լոյսին...

Քանի՞ հապար, քանի՞ հապար տարիներ
 Պէտք է որ ա՛յսպէս քայեմ.
 Քանի՞ անգամ պէտք է իյնամ, կարեմէր,
 Ճանապարհիս վրայ բացուած
 Նըպատակիս ժայռակոշոր մուրճերով.
 Չըզիտե՛մ ես. — միայն թէ, ո՛վ եղբայրներ,
 Ո՛վ խայ հանող եղբայրներ,
 Թողուցէք պիս ճամբորդութեանս մէջ մինակ,
 Ա՛յնքան մինակ եւ ա՛յնքան լուռ, որ լուսեմ
 Տրոփը սըրտիս, պոր ընտըրած նըսագս է
 Նըսագներուն մէջէն բիւր.
 Արելով լի եւ արեւները տանող
 Ուղիիս վրայ մի՛ սրփոէք
 Ձեր շուքը, մռայլ թեւի մը պէս ուրուրի:
 Եւ ոչ ալ պիս կանչեցէք
 Խընճոյքներուն ձեր պըւարթ՝
 Որ բոպութիւնը կը պարնէ նուագարան:
 Ընդունա՛յն է խոստանալ
 Սըրտիս կոյսեր, — սիրտըս սափորն է դատարկ,
 Ու ես կ'երթամ դէպի աղբի՛ւրը Լոյսին:

Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

Յ. Գ Յ Ղ Ա Ր Գ

**Դ Ա Ն Ի Է Լ Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն
Հ Ա Յ Լ Ե Ջ Ո Ւ Ի Ե Ի Ո Գ Ի Ի Բ Ի Ի Ե Ղ Ա Յ Ո Ւ Մ Ե**

Եւ այսպէս՝ որ մը պատկած՝ փողփողումին սուկ երկնի,
Իմ ծընուցներս մըջակ՝ գիտ յըզացան կաթոզին,
Ձիս յըզացումն սեւեռած իրենց այժերը բարի
Վերն ամէնէն մեծ Աստղին, ամենավառ Հըրայրքին:

(ԿԱԼԵՐՈՒ ԳԻՇՆԵՐ)

Ահա այսպէս՝ բանաստեղծին կեանքը սկիզբ կ'առնէ ամբան աստղա-
զարդ գիշեր մը, հայրենի դաշտերու աստածքին, սահնակաւ հասկերու խնայ-
լուն եւ քաղցրորոյր դէպք մը կատարին, տիեզերական խորհուրդի մը բիւրե-
ղահունչ համանուագով...: Հեքիա՛թ է, թէ իրականութիւն, հոմերականու-
րէն շքեղ եւ աստուածաշնչականօրէն վսեմ այս արարչագործութիւնը: Կա-
րեւորը այն է, որ Գանիէլ Վարուժան ընդհանրապէս թեամբ կ'ընդունի խո-
նարհ իր ծագումը, եւ ի վերուստ՝ ամենամեծ Աստղին հրայրքով իրեն սահ-
մանուած լուսեղէն կեանքը, բոցավառ ճակատագիրը:

Մենքեան մտւոյ կ'ունենայ յետոյ՝ Մերաստիոյ մօտիկ, Բրգնիկ գիւղին
մէջ, Գրիգոր Զպուլքեարեաններու համեստ երգիքը: Բայց հայրական դուր-
գուրանք ու հովանի չի վայելիք, գրեթէ: Արդարեւ, կանուխէն կը մեկնի
հայրը Գոլիս՝ պանդխտութեան, ազատագրելու համար հացը՝ կնկան ու առ-
ջիկնիկն: Աւ Վարուժան կը մեծնայ մօրը շունչին ու լուքին տակ, ձմրան գի-
շերները, թոնրին շուրջ ունկնդրելով՝ մէկ կողմէ բուխերիկին մէջ Մէլլի-
քունի հանդիպակաց լեռներու սառնաշունչ հովին գիւղային ճիւղերը եւ, միւս
կողմէ՝ մօր անուշ ձայնը, որ կը պատմէ իրեն մեծ հօրը՝ Յիզիտ Տօնէլի ա-
նասպնակաւ քաղաքործութիւնները, լեռներուն վրայ աւազակներու դէմ
անոր կռիւր եւ հերոսական մահը՝ կորիւնին հետ: Տակաւին՝ կ'օրօրէ իր հո-
գին ու երեսակայութիւնը՝ հայ թագաւորներու եւ հեքիաթներու հրաշապա-
տումներով: Յերեկները կը քայլ ուռիներու ստուերին տակ, կը վազվզէ բո-
ւրիկ՝ Շրեգերքը, քար նետելով լողացող թաղերուն: Բայց սաքին տակ սա-
քածուող այս սեւ հողերէն կը զգայ, որ մ'էժ մը, կրակի մը կը ներթափանց-
ւին իրեն: Ան'ւ եւ այդ հողերը, ծծած ըլլալով լենկթիմուրեան հորդաններուն
խողիտպած հայ հարսներուն եւ մանուկներուն տա՛ք արիւնը: Մակայն այդ
սեւ հողերուն տակ կը հանդիպի նաեւ հերոս նախնիքներուն լուսաճաճանչ ոս-

կորները: Փոքր տարիքէն՝ հողին, բնութեան եւ դանոնք շնչաւորող արեւ-
 նակիցներուն ընդմէջէն՝ կը հաղորդուի Հայոց պատմութեան, Հայ՝ ողբին: Ենտոյ՝
 Սեբաստիան հայրենասէր եւ հայախօս ա՛յն նահանգն է, ուր շու-
 տով ու շքեղօրէն արձագանգ կը դանկ Սերոբ Աղբիւրի մը արձակած գնդա-
 կին բոցաշող պայթումը: Մի՞նչ Մխիթարի սրբալոյս սանահետքերը կը մնա՛ն
 սակաւին Հողարի բարձունքին եւ արահետներուն վրայ: Իսկ Սր. Նշան
 պատմական մայրավանքի մէկ զաղտնի նկուղին մէջ կը սպասէ Հայոց Սե-
 նեքերիմ Արծրունի թագաւորին ոսկեճամուկ գահը, ինչպէս շղթայակապ Ար-
 տուազը՝ Մասիսի ձորերուն խորը: Պատմական եւ ասանդական այս տաք-
 րերով կը բաղահիւտուի իր էութիւնը, դարերու խորէն բխած հօգր այս կեն-
 սաւիտով կը բեղմնաւորուի, կ'ուսմանայ իր ներաշխարհը: Տասներկու տա-
 րեկանին՝ ազգային հարուստ ենթահողի տէր, պարկեշտ ու խոհուն սղեկ
 մըն է, երբ՝ տեղւոյն վարժարանին մէջ ժամադիրքի ընթերցումը հազիւ ա-
 ւարտած՝ Պոլիս կը փոխադրեն զինք, ուսումը հոն շարունակելու (1896 թ.):

Նոր աշխարհ մը՝ սուլթանական մայրաքաղաքը, Գեղեցիութեան նոր
 զգայափառումներուն հետ՝ նոր հոգեցնցումներու ալ կ'ենթարկէ ապագայ
 ջնարակիբը: Ինք՝ որ անհուն կարօտով, ամենախոր սիրով կ'կած էր, առաջին
 օրն իսկ, տեսնելու իր պանդուխտ հայրը, ողջադուրուելու զբրին վահան՝ ե-
 դած հակին հետ, որուն «քրտինքէն դոյացած էր իր արիւնք», որուն «յոզնու-
 թեան ծիլն» էր ինք, եւ ահա կը դանկ զայն, անարդարօրէն արգելափակուած,
 խուցին մէջ իր թրջական դժոխանման բանտին:

Ձի յաճողիբ, նոյնիսկ ժանգոտ ձողերուն ընդմէջէն, շրթունքը դպցնել
 տնր դալուկ ճակատին... Հայր ու որդի կը բաժնուին «առանց համբոյր»ի-
 բաց զկուրծքին տակ բաշ կը թօթուէ սխ մը նոր:— Հայոց դահէն ետք՝ այս
 անգամ հարազատ հայրը զնդանի մը մէջ, երկաթէ ձողերու ետին...»

Կ'ազատի այդ նկուղին, եւ հայրը կը վերադառնայ խանի մը դուռնապա-
 նի իր պաշտօնին: Ամբան արձակուողները Վարուժան կ'անցընէ հօրը խանին
 մէջ, այս անգամ վկայ դառնալով Հայոց պատմութեան սրտամօլիկ էջերին
 մէկուն՝ պանդուխտ հայրդիներու ողբերգութիւններուն, որոնք զիրենց ա-
 րիւնը կը շահին իրենց քրտինքով՝ եւ կը մեկնին այս աշխարհէն շատ անգամ
 «մէկ աչքը բաց», հեռո՛ւն, հայրենի կտուրին տակ ձգելով՝ «հարաւ սիրոյ
 ծարաւով»:

Տարուան միւս եղանակներուն կը յանդէս դարձնէ. նախ՝ Բերա, Մխի-
 թարեաններու Մազը Աղանի վարժարանը (1896), այն տարին, երբ 1894ին
 սկսած կոտորածները կը շարունակուին դազանօրէն: Պահե-Օթոմանի պայ-
 թող ուսմը կը ցնցէ Պոլիսը: Ենթադանը նորէն իր արիւնստ խնճոյքը կը
 սարքէ Պոլսոյ թաղերուն մէջ, եւ պատանի վարուժան հազիւ կ'ազատի սպան-
 զէն, դպրոցին վրայ ծածանող իտալական դրօշակը փրկած ըլլալով աշակեր-
 տութիւնը արիւնածարաւ ամբոխի մահասփիւռ յորձանքէն: Մինչ այդ՝ միայն
 մտովի ապրած էր ջարդերու կարմիր մղձաւանջը, խողխողուող տասնեակ
 հազարաւոր ազգակիցներուն հոգեկէտի ցաւը: Այդ օր՝ ականջներովը կը լսէ
 սրածուղներուն աղիխարշ ճիւղերն ու հանդիւնները՝ փողոցէն, սպա, պա-
 տուհանի մը ճեղքէն՝ կը տեսնէ զիականերով բեռնաւոր սայլերը, որոնք ա-
 րիւնստ դրոշմ մը կը դնեն անոր ջիւղերուն, վրէժի բոցեղէն հետքեր՝ անոր
 հոգեյատակին վրայ: Հեղ ու պարկեշտ, քաղցր ու լուսկեայ պատանին կը ցցէ
 զլուխը, կը դառնայ, մերթ ընդ մերթ, անզուսպ ու կուռազան, ընդվզումի,
 ըմբոստացումի ելոյթներ կ'ունենայ յանախ՝ սխալ կամ անարգար երեսոյթ-
 ներու հանգէպ:

Երկու տարի ետք՝ կ'անցնի Մխիթարեաններու Քաղկեդոնի վարժարա-

նր, Մարմարայի վրայ, Մոսայի զեղածիծաղ ափին, Իշխանաց կղզիներու առինջնող համայնապատկերին դիմաց: Հոս՝ օրերը խռովայոյց չեն առաջուան չափ: Հայրենի աշխարհի վայրի եւ անական զեղեցկութիւններէն յետոյ՝ Պոլսոյ ժեղկ թովչանքը լոյսերու եւ գոյներու, զերթուածագող վերջալսյաներով, աստղազարդ երկնակամարի վիպերգներով, կապոյտ ալիքներու սրբերգութեամբ՝ կ'արթնցնեն զգայարանքները նոր թրթիռներու, ընդլայնելով անոնց հասողութեան սահմանը: Բախտը կ'ունենայ նաեւ, իբր տեսուչ եւ հայերէնի ուսուցիչ՝ «Գեղաքանդակ ոճի», հայերէնի պերճութեան, զեղեցիկ ճաշակի խնկարկու Հայր Արիստակէս Փասգանախիւանը ճանչնալու, որ իբր լուսամտիւ եւ գրական խառնուածքի աէր անձ՝ ջերմօրէն կը քաջալերէ Դ. Վարուժանի առաջին հանդիպումները ժուռային հետ: Եւ 1902ին, երբ Վարուժանի կ'աւարտէ Վարժարանը, Փասգանախիւան կ'ուղարկէ զայն Վենետիկի Մուրատ Ռափայիչեան կրթական օճախը, հետեւեալ յանձնարարականը յղելով անոր տեսուչին. «Նոր Մկրտիչ Պէշկիթաշիեան մը կը զրկէ՞ ձեզի: Լա՛ւ Մայիցէք ա՛ղար»:

Վենետիկը, «Զույգ կապոյտի մէջ կապոյտ երազ» այդ քաղաքը՝ կազդոյր ժը, որոշ հոգեփոխութիւն մը կը բերէ իրեն: Անշուշտ, հայրենիք չէ Մը. Ղազարը, բայց հոն կան հայրենի բազում սրբութիւններ. հոն է՝ ներշնչման, հայրենասիրութեան իր բարձրակէտին՝ Ալիշանի շիրիմը: Յաւերթութեան խորհրդանիշ մարմարէ այդ կոթողին աւջեւ կը ծնրադրէ եւ կ'ուխտէ քաջի՛լ Հայոց նահապետին ճառագայթող ուղիէն: «Ալիշանի շիրիմին առջեւ» լոյս տեսած իր առաջին գերթուածը կ'ըլլայ, ուշադրութիւն հրախրելով իր վրայ:

Բայց՝ ո՛չ միայն Ալիշան...: Այդ օրերուն, էթիոպիայի Գէորգեան եւ Մոսկուայի Լազարեան ճեմարաններու կրթական բարձր մակարդակով՝ անոնց նման հայրենասիրութեան օրրան մըն էր Մուրատ Ռափայիչեանը, ուր պատանի բանաստեղծին հոգեւունեղ կը դառնան Խ. Արովեանի, Մ. Պէշկիթաշեանի, Հ. Ա. Բազարատունիի, Պ. Դուրեանի եւ Բաֆֆիի երկերը: Դասարանին մէջ դատած յաջողութիւնները, մանաւանդ հայերէնի եւ գրականութեան ուսուցիչ եւ Վ. Աղանուրի առաջին թարգմանիչ Հայր Աբսէն Ղազիկեանի իրեն շտապած գնահատանքները չեն չփացնէր զինք. սակայն միայն դասերն աչ բաւարարութիւն չեն առը իրեն: Դասապահներէն դուրս՝ կատարի՛, անյազ ծարուսով ընթերցող մըն է: Գրականագէտ Հայր Սիմոն Երեմեան, նշմարելով Վարուժանի լրջութիւնն ու տաղանդը, ո՛չ միայն բաց կը պահէ իր հարուստ մատենադարանը անոր հետաքրքրութեան ու ախորժակին դիմաց, այլեւ նոր Արիստակէս Փասգանախիւան մը հանդիսանալով՝ կը հիւրընկալէ անոր գերթուածները իր հրատարակած «Գեղունի»ին մէջ: Վարուժան, հին ու նոր մատենաներուն աւրնթեր, խանդավառութեամբ կը կարգայ օտարներէն՝ Հոմերոս, Շէլլէսփեր, Հիւկո, Լամարթին, Ռասին, Եսթօպրիան, իսկ իտալացիներէն՝ Կարատչի, Տ'Անուչիօ, Ատտ Նեկրի, եւ ծագումով հայ՝ Վերթուրիա Աղանուր:

Վարժարանի եւ մատենադարանի նեղ պատերու ետին արգելափակուած չի մնար իր հոգին: «Աստղերով եւ ալիքներով խեղդուած» Վենետիկը ծափ ու լայն պատուհան մըն է բնութեան զեղեցկութիւններուն եւ Եւրոպայի մշակութաւնի կրթային կենտրոն, հոն սաղմաւարտող յեղափոխական շարժումներուն վրայ: Բարեբախտաբար կ'ապրին, ինք ու դասընկերները, Ստեփան վարդապետ Սարեանի նման մտահորիզոնը լայն տեսուչի մը հովանիին տակ, որ բաց կը պահէ զպրոցին դուռները՝ հայ ազատագրական զարթոնքի եւ շունչի, ինչպէս նաեւ Եւրոպայի ընկերա-յեղափոխական շարժումներու ար-

ճազանգին դիմաց : Ռուսո, Թուլթո, «Փրո-Արմենիա» եւ յեղափոխաշունչ հայ մամուլը՝ առօրեայ հացն ու շուրջը կը դառնան ուսանողներուն :

Վարուժանի մարմինը Վենետիկ, բայց հողի՛ն, արժանանե՛րը կը մնան խորատոյճ հայրենիքի սեւ հողերուն ընդերքը : Կը կարգայ, ճամբորդներէ կը լսէ հոն պատահող սղակրգութիւնները եւ հերոսութիւնները միաժամառ նսկիւն : Նիքոլայ Բ. ցարը պողպատէ ծունկը դրած է արեւելահայաստանի կտրծքին (եկեղեցական կայուածներու դրաւում, սղակային վարժարաններու փակում եւ ժողովրդային համընդհանուր ընդվզում, Թիֆլիսի մէջ դազախներու կողմէ հայերու խողխողում, եւայլն) : Արեւմտահայաստանի վրայ կը տարածուի միշտ Կարմիր Սուլթանի արիւնոտ դահիւն դիւային շուքը (առեւազում, հարստահարութիւն, կոտորած, եւայլն) : Եւ սակայն՝ Սասնոյ լեռները սպասամբուժեան կրակով կը բռնկին, հրաբխային այդ օրերուն :

Վարուժան որքա՛ն կը տենչայ ինքն ալ ըլլալ բարկացած աստուածներու պէտ հայրենի լեռներուն եւ դաշտերուն վրայ թշնամիին դէմ ակն ընդ ակն մաքառող հերոսներէն, «վէրք տուող, վէրք ստացող» ջրա՛ն Փետայիններէն մէկը :

Երկա՛ր ատեն բազմացի
Արիւմն իմծի վերմակ ընիւ, բարձ ընիւ
Կողբ ճիւղս՝ ինկած վերքի խրխիմքով :
Մնացընիւ վերք մեռնիւ
Երկա՛ր ատեն բազմացի :

(ԿԻՈՒԻ Ե՛ԻԹ)

Սակայն՝ հետո հայրենիքէն եւ հայրենի կտուրէն՝ հոս է ինք, Եւրոպա, ուղեւոր-ուսանող մը «Իէպի աղբիւրը լրսիւն», որ եթէ չունի գէնք վերցնելու համապատասխան ֆիզիքական ուժ եւ վարժութիւն (չմտնանք՝ թեթեւ չիւլութիւնը իր այլ աչքին), աէր է սակայն աղաշոյն գրիչի, գոր կը խրէ դազան ոտիսի կարմիր սիրտին՝ կաղամարին» մէջ՝ Հայաստանի, Հայոց պատմութեան տարերքէն հոգեցունց եւ իր կոշումին ինքնավտան բանաստեղծի խիղճումով : Որդան կարմիրով գրուած հայու ցաւի եւ ընդվզումի այդ երգերուն՝ «Գնդուսի» եւ պարբերական այլ հրատարակութիւններ յոյսով եւ հպարտութեամբ կը բանան իրենց էջերը :

Կը պատահի, որ դպրոցէն դուրս, ընկերներու հետ պտոյտի կամ գրասանքի փոքր պահերուն, «Միրահարներու քաղաքի» Վենետիկի դեզուհիներ, համեստ դասակարգի իտալուհիներ իրենց հրապոյրներուն վրայ կեղտոնացնեն երիտասարդ բանաստեղծին սիրակաթ նայուածքը, սակայն՝ առա՛նց նուաճելու անոր սիրտը, ուր կը կոտորայ «վերք Հայաստանին», ոչ ալ՝ սեղե՛ղը, որ կը մնայ խորատոյճ կենաց ու մահու պայքարին համար թափուող իր ժողովուրդի արեան ծովուն մէջ : Իր միտքին յաճախանքը՝ «Ջարդան է, գոր կը սեւեռէ թուղթին, մաս առ մաս կը կարգայ ընկերներուն, մամուլին կը յանձնէ յետոյ :

«Նիգիւտ Տօնէլ»ի հրատարակութիւնը արժանացած էր արդէն գրասէր շրջանակներու ողջոյնին եւ Ա. Չօպանեաններու, Վ. Թէքէեաններու զնահասանքին : «Ջարդ»ը կ'ըլլայ նոր նուաճում մը, Հոն՝ «Կոտորածի ախուր փողը կը հնչէ», բայց նաեւ «Վարդահակեղեղ արշալույսի մը ոտնաճախը յաղթականորէն կ'արժանանդէ» :

«Մեծ վարիչները աշխարհին մեծ իմացակամութիւնները չեն, այլ մեծ տեսանկյանը, մեծ ուզողները» կը դրէ՝ Վարուժանի վաստակը հիացումով դիտող այլապէս խտաբիր քննադատը՝ Յ. Օշական :

«Ջարդոնով՝ մեծ տեսանող մըն է արդէն Վարսժան: Թերեւս ատոր համար է, որ հուշարեք եւ ոգեւորութեան ամուր պատուանդանի մը վրայ կը բարձրանայ, առաջին օրէն: Հայ ժողովուրդը կը զգայ, որ ծնած է իր Յուսիս առ Յոյսին մեծութեամբ բանաստեղծ մը, նոր արբայ մը՝ շերթողութեան կալուածին մէջ:

Աւարտած է (1906 թ.) Մ. Ռափայէլեանի դասընթացը: «Կը բարտխէ սիրտը հայրենիքի կարօտէն»: Այդ կարօտը՝ ապրումով խորունկ եւ արուեստով շքեղ երգեր կը խլէ իր ջնարէն («Պատուէր», «Կարօտի նոտակ», «Եսայի»): Իսկ ամբողջ հոգի՛ն կը դնէ բառերուն մէջ, երբ կ'ըսէ հայրենիք ճամբորդող ընկերոջ մը: «Դուն եթէ հայրենիք երթաս՝ Եւրոպա մը կը կորոնցնես, ես՝ (Եւրոպա մնալով) Տիեզերքը: Սակայն նոյնքան թու՛ն է ու անյազ՝ լոյսի ծարուր: «Մօրը ափին մէջ տաքած սաքերը՝ տակաւին պէ՛տք է բարձրանան ճօտար սանդուխներէ վեր», ամբողջացնելու համար հոգեկան եւ իմացական զարգացումը եւ կորդելու իր պաշտած լոյսը արեւէն ու աստղերէն: Վնասկան է որոշումը: Գար դնելով սիրտին վրայ՝ ալքերը կը դարձնէ Արեւմուտք, դէպի Լոզանի համալսարանը: Սակայն, ուրի՛ն՝ ճարել դրո՛մը, ինչպէ՞ս յաղթահարել նիւթականի ցցած շինական պարիսպը: Վերջապէս օգնութեան կը դիմանալ Լոզանի՝ Կանտի համալսարանի դուռները կը բացուին իր առջեւ:

Հոս՝ բոլորովին տարբեր կեանք մը եւ աշխարհ մը կը դիմաւորեն Վարսժանը: Մուրատ Ռափայէլեանի հայաբոյր եւ հայրենաբոյր մթնոլորտը մնացած է հեռու՛ն: Աճրան արձակուրդներուն, նախկին դասընկերները ճարճարճ կ'ընեն, կը տանին զինք Վենետիկի տմարանցը: Բայց կարճատեւ այլ սիրտիանքն անդին՝ մինակ է ամբողջ տարին: Պորտին կապը չկարելու ճիղ մը կ'ընէ՝ իսկոյն հրատարակելով Պալոյ եւ Վենետիկի մէջ Հայուն եւ Հայրենիքի ցուէն հոգին փշաքաղած «Սարաւոններ» (1906 թ.): Այսուհանդերձ, նոր միջովայրի այլարութեան ենթակայ՝ զոյն ու զիծ կը փոխարէն՝ Կանտը կը մատուցանէ ցուրտ ու մույլ իր մուշը եւ դործարաններուն սեւ ծուխի ամպերը: Չկա՛ն այլեւ հեղասահ կոնստիտուցիոն սիրերգակ նաւավարները, այլ՝ «պատաստուն շապիկով» մրտա ու յոգնատանջ բանուորներ, «հազնի կուրծքը քանդուած» բանուորուհիներ: «Միշտ մեռնելով մպրոզ», «արեւու պատուը ունեցող այդ սրտերուն» կեանքի ցաւը զինք կը դարձնէ անոնց դատին պաշտպանը: Կ'երգէ, ինչպէ՛ս Վերահանը, ծխամբարձ զործարանները, խտալուր մեքենաները՝ տարածելով մեր շերթողութիւնը նոր բնագաւառներու վրայ: Բայց մանուսանդ կը քաղէ մեքենաներու եւ դործարաններու աչքերէն շահագործուող այդ էակներուն արիւնոտ քրտինքէն ծլած «Գողգոթայի ծաղիկներ»ը: Ամէն Գողգոթա յարութեան յաղթանակով կը պտակուի սակայն: Իր առողջ լաւատեսութեամբ եւ ընկերվարականի ներուժ համոզումներով՝ կը հաւատայ ստորիկ այդ բանակի վերջնական յաղթանակին, պատկերացնելով վաղուան աշխարհը:

Հարիր կարգը եմ աննձ (...) խարսնուած բոքը երկաթով,
Որոնք կարմիր պիտու՛ բլլամ օր մը գանկեր դարբնելով,

Անոնք բոլոր մրրիկի եմ, ստոնք բոլոր կայծակի եմ՝
Որոնք գոռան պիտի օր մ'ու Մարդկութիւնը սարսեմ:

(ԳԱՆՈՒՄ)

Միլտ՝ ուրիշին ցաւը, միշտ՝ ուրիշին երգը, բայց է վերջոյ՝ ուրիշներու պէս անձ մըն ալ ինք է, մարմին ու հոգի, որ հակառակ շուրջի բազմութիւններու խայտարղէտ ծովուն, հակառակ արուեստի թանգարաններուն եւ լրջի ազդիւր մատենադարաններուն՝ առանձնութենէ կը տառապի օտարութեան մէջ:

Ճակատագրական այդ պահուն, երբ հարազատ երգիքի մը, տաք շունչի մը կարտով կը տոշորի՝ երիտասարդ քնարակիրը կ'իյնայ բարձրատարձան պաշտօնատարի մը դրասէր կնոջ սիրոյ ցանցին մէջ: Ետտ երկար չի տեսէր սակայն այդ սիրարկածը: Կնոջ ամուսինին հետ ունեցած բանաւոր բախումէն աւելի՝ զգաստութեան, դարձի կոշը կու գայ պարտազանցութեան, կոշումին դաւաճանելու այրող զգացումէն, — անդին՝ հայրենիքի մէջ՝ Ազատութիւն կամ Մահ դրօշին ներքեւ, երբ էր հասակակիցները՝ սուրով կամ փետուրով՝ կը մարտին վերատիրանալու համար պայքենական հողերուն անկախութեան՝ ինք հոս, լրջի ճամբուն վրայ, ինչպէ՛ս կընայ խեղդել էր ուխտն ու երազը սնտար հաճոյքի մը պատանջին մէջ:

Դիւրին չ'ըլլար, անշուշտ, մեղաւոր կապին խզումը: Հոգեկան տաքնապը, այդ օրերուն զինք պաշարած նիւթական անձկութեան հետ, վայրկեան մը, յոսեզոյն զգացումին, անձնասպանութեան մտածումին իսկ կը մղէ վիպասաշատ (սոսանթիք) գիծեր պահող այդ աղան: Հոգեկան այս փեռեկատումին դառնահամ յիշատակը կը փոխանցէ «Օմը», «Տրտուկիզ» (Եղիա Տէմիր-ճիպաշեանին նուիրուած) եւ կարգ մը այլ գերթուածներու. բայց ինք՝ անձամբ, եւ զինք բովանդակող զգալափարի աշխարհի նորընծան՝ վճռական որոշումը առնելու չեն ուշանար: Կը դարձնէ՛ անձնական էջը: Ատուած Վարսամանը ստեղծած է շունչը փշելով անոր երգած ա՛յն զկարմիր հողջին մէջ, ուր հիւլէ մը կայ Հայկէն, փոշի մ'Արամէն, ճուճանչաւուրտ բիւր մը Անանիայէն, կայն մը՝ հի'ն, փառքի օրերու հայկական վաշտերուն ամրակուս սքրակիրէն: Կը վերցնէ Սոսեայ սնտաւէն կտրած «եղեգեայ» զրիւը, կը զընէ՛, կ'երգէ՛, կը փողակարէ հայուն ողբին հետ անոր վրէ՛ժը, պայքա՛րը. կը հնչեցնէ աղատագրումի, մարտնչումի ճամբով յաղթանակելու բարձրազոտ ու ոսկեհուն շեփոքը: Կրկին Չերմացած, շեփոքած է հողին Հայրենիքի քուրային, յեղափոխութեան բոցերուն ու կրակին մէջ: Սիրտը վերադառած է առողջ էր տրտիւր եւ հրեղէն երգերով կը վերակենդանացնէ, թմբիրէն կ'արթնցնէր իր «Տեղիմ տիրաք»: Հատորը արեւի պէս կը ծաղի Հայաստան աշխարհի վրայ՝ փառապառակ մը ապահովելով քերթողի քնարին (1909 թ.): Վարսամանի անունը արդէն բարձր կը հնչէ՝ Միամանթոններու եւ Ահարոնեաններու անուններուն հաւատար: Ներբողելի անուն մը որքան ժողովուրդին՝ նոյնքան ալ զնկափայր դասին համար:

Սահմանադրութիւն հռչակուած է Թուրքիոյ մէջ. սակայն Թորոքոմեան համբոյրով ծաղկած եւ ընկերային դիտութիւններու իմաստութեամբ հասունացած Վարուժան՝ խանդավառ չէ, երբե՛ք, հայերուն ալ շնորհուած այդ կըրթօնով: Գնարին լարերը եթէ շինուած են արծիւներու աղիքներէն՝ արծիւ մըն ալ կը թուարախէ միշտ իր կուրծքին տակ: Եւ, հեզնախառն զայրազնութեամբ՝ ողջմտութեան կող կ'ընէ Վասիլի Կոմիտի արմատն իրայ գինով՝ «Աւերակ-Անրաւ տիկի՛ն»ին՝ Հայաստանին: Գայլ Վահաններու եւ հին ու նոր բոլոր հերոսներուն արեւը յուճակաս թափուած կ'ըլլայ, եթէ խորունկը Սահմանադրութենէն եւ այնուհետեւ կանգ առնենք Հայկի նետով, Ս. Միսրոպի երկնազէն տառերով շահուած Հայրենիքն ու Մշակոյթը լըր'ու ազատագրելու մեր ուխտէն, մեր երազէն:

Չորս տարիները անցած են արդէն եւ Վարուժան ընթացաւարտ է Կան-

տի Համալսարանէն (1909 թ.) : Քաղաքական Գիտութիւններու վկայականին հետ՝ «Սարգստեան», «Յեղիթ սիրտը» Հատորները կը կազմեն իր նուանումները : ասակալին գրական այլ իրադրութիւններ եւ հարուստ հուններ տեղ գրուած են պայտասակին եւ ներաշխարհին մէջ : Այդքանը բաւական է . Եւրոպայէն առած է, ինչ որ պէտք է իրեն (գիտութիւն, արուեստ, գաղափար) եւ վայրկեան մը առաջ կ'ուզէ թռչիլ տո՛ւն, հայրենի՛ք : Հոն, միայն հոն լրիւ բերք կու տայ արուեստագէտի հոգին ու կ'արժանանայ հայր . «Անպատեալ ամբողջ Հայաստանը պիտի է տեսնել : Կուզեմ համբարել այն բոլոր տեղերը՝ ուր նստասակ մը ինկաւ, կամ հերոս մը կոխեց : Մեմէ այնքան մեծ ենք՝ որքան որ հողէն կը խմնի մեր գագառումները... Մեծն Տիգրանի վրայ ի՛նչ : Եռյակապ դիւցազներգութիւն մը կը գրուի, բայց չէ կարելի առանց Հայաստանը տեսնելու : Պիտի է տեսնել այն ժայռերը՝ գոր մեր պապերը կը գործածէին իրեն պարսաստիկի քոր... այն յաղթ կազմիները՝ գոր կը վառէին առանց արմատախիլ բնելու, եւ ամենց լոյսին ներքեւ նստած իրենց հերոսական յաղթութեան մեծ տօնը կը տօնէին» :

Այս արձագանքներով կը թողու զատկան Տիւնարը, համբուն վրայ կը հանդիպի Աթէնք, յետոյ կարճ ժամանակ մը Պոլիս եւ ոտքը դրած է արդէն Սերաստիոյ սեւ հողերուն վրայ, հորհնական տան սեմին (1909 թ.) : Հայրը ութ տարի առաջ վերադարձած է պոնդիտութիւնէն եւ երգէր ամառը երեք շոր շառափոցներով, իսկ ժայրը պահած է ա՛յն քաղաքի իտլը, որուն արեւմտ կը շուայ պանդուխտի յոգնած» իր ոտքերը :

Մեկնած պահուն աննշան տղեկ մը՝ հիմա իր փառքը կը հոլովեն բոլոր շրթները : Մամուլը առատօրէն կը ապէ իր ստեղծագործութիւնները, «Զարդը եւ այլ գերթուածներ կ'արտասանուին բեմերէն՝ յաճախ եւ տէ՛նուր» :

Սերաստիոյ Համբաւար Արամեան վարժաբանը իսկոյն կը հրուիրէ գինք ուսուցչական պաշտօնի : Ուրիչ ի՞նչ գործի կ'ընար նուիրուիլ արդէն : Եկած էր ինք, համեստ ստեղծի մը փոխարէն, հարուստ պաշարն ու հրեղէն շունչը փոխանցելու իր ազգակիցներու զաւակներուն : Այս էր Աստուծոյ եւ հայրենիքին իրեն տուած կոչումը . «Նշդիցի կամք հայրենեաց» :

Հմտութեամբ, խօսքին պերճութեամբ Վարդաթան շուտով կը հմտի իր աշակերտները, որոնք դասարանին մէջ կախուած կը մնան շրթունքէն, իսկ դասարանէն դուրս՝ կը շրջապատեն գինք, նամբան կը քալին հետը, կ'աշքիլեն տունը՝ հեալ գրուցելու, փշրանք մը աւելի քաղելու անար դանձրէն : Եթէ շրջապատ վկայութիւններ, եթէ նոյնիսկ այդ աշակերտներէն Առաքել Պատրիկ դրած շրջապատ Վարդաթանի մասին իր թանկագին յուշերը՝ «Մաստիսարակը» քերթուածը պիտի բաւեր՝ քանդակելու համար նուիրեալ եւ կենսարար իր թիական մշակի տիպարը, որ ի՛նքն էր :

Եւ հաւաքած ամանին շուրջն իր սքրսին,
 Մանկան շրթներ՝ որք կը ծրծեմ,
 Կը բաշխէ, հեզ, ամենց արիւն արիւնէն . —
 Այդ իր կեանքն է՝ որ կ'անցրնէ սպիշին :

(ԿԱՍՏԻՍՐԱՐԱԿԸ)

Ուսանողներուն հետ որքան անսպասելի եւ հանճակատար՝ նոյնքան ալ յարգալից է պաշտօնակիցներուն հանդէպ . կը զնահատէ անոնց նուիրումը . անվերապահօրէ՛ն, առանց զաւանական կամ դողափարական խաբուրտեան՝ կը

զործակցի բոլոր անոնց հետ, որ տե՛ր են տաղանդի կամ կը հանդիսանան անշահախնդրութեան եւ անձնագոհութեան ախոյեաններ :

Ուսանողներուն, պաշտօնակիցներուն, առաջնորդ սրբազանին համար փա՛ռք է ու պարծանք ճեղքիմ սիրտըքի շնորհակցութիւնն ու զործունէութիւնը քաղաքին մէջ : Սակայն բոլորը հաշտ ու հիացիկ աչքով չեն դիտեր կուսակցական թէ՛ հանրային կեանքի մէջ անոր ուղղափառ կեց-ւածքները, ուսանողական կարգերու գէժ անոր զմեղանշումները : Վարուժա-նի անձին եւ անձնաւորութեան հանդէպ դէժ առ դէժ երկու ճակատի վերած-ւած ժողովուրդի դիրքորոշումը կը հասնի գայթակղեցուցիչ դազաթնակէտի, երբ զգաստիարակնը կը սիրահարի իր աշակերտուհիներէն մէկուն՝ Արաքսի Թաշճեանի : Մէրը փոխադարձ է անշուշտ, ու նախ՝ դադտնի . իսկոյն կը դառու-նայ սակայն հանրութեան սեփականութիւն : Հարուստի գուշտոր է աղջիկը, եւ արդէն խօսեցեալը՝ այլ հարուստի մը տղուն : Վարուժան աղքատ ուսուցիչ է, զիւլտցի, զբրուտի որդի : Ինչպէ՞ս համարումի հասցնել եւ ի կատար ածել բեւեռայնօրէն հակազէր այս երոզութիւնները : Աղջկան հայրը կը մնայ ան-դրուելի, մինչեւ այն օրը, երբ բարեկամներ ցոյց կու տան իրեն Արաքսիին սիրոյ նամակները, ուղղուած՝ Վարուժանին : Մինչ այդ՝ բանաստեղծը, հա-կադէր կողմի սպառնալիքներուն դէժ պաշտպանուելու համար, իր բարեկամ-ներէն (որոնց կարգին Սեբաստիոյ նշանաւոր զարբիներն եւ դանակագործներ) նուէր կը ստանայ եւ մէշու հետը կը պտըտցնէ պուազան մը, որուն ծայրէն՝ մէջը պահուած սուկնը գուրս կը ցատկէ կոճակի մը սեղմումով : Հերոսու-թիւն մը զործելու կամ ողբերգութիւն մը խաղալու առիթը, բարեբախտա-բա՛ր, կը ինքնուրի իրեն : Երկու կողմերը, ի վերջոյ, կու դան՝ սերող սիր-տերը իրարու հետ պսակելու իրաւաստութեան : Վեց ամիս տեւող հովուեր-գութիւնը կը հասնի իր երջանիկ լրումին՝ հարսանեկան տանակատարութեան ու խնձոյթին, ուրախութեանն զինով քաղաքին մէջ :

Նոր կեանքը նոր լարեր կ'աւելցնէ Վարուժանի արդէն իսկ քաղմալար քնարին : Կնոջը լուսեղէն ժուտքով՝ զբոյրով ու զարունով կը լեցունէ Բրգնի-կէ ցուրտ իր տնակը : Մուսան կը դառնայ երկու, նոյնիսկ մէկ՝ միայն իր կողակիցը, իր իսկ խոստովանութեամբ : Գրած է ճշմարիտ, զլիտազէր Մէրը : Կին էակին հանդէպ Վարուժանի սածած բունն զգացումը՝ ճճալիդաններու մարմնապաշտ, ճճարնիքի գեղապաշտ հրայրքէն անցնելով եւ աստիճանական բերեղացումով՝ կը հասնի իր բարձրակէտին՝ մայրութեան սրբալոյս սիրոյ խորհուրդին : Այդ վեհագոյն ապրումը կը կերտէ նաեւ արուեստի անփշրելի իր պարունակը, եւ Վարուժան կ'երկնէ ամենագլխի գրականութիւններու մէջ սեռին լրակարգ սահղծագործութիւններէն իր «Իրգանք»ը, մա՛նաւանդ «Օրե-նալ» եւ դու ի կամայաբ : Գ'ուշանար լուսեղէն շառաւիղը՝ Վերոնիքը : Եւ Վարուժան հայրական մաքրամաքուր սէրը կը զրոշմէ յաներթութեան մաքա-զաթին վրայ՝ «Վարուժանի» քերթուածով :

Իրադարձութիւններով հարուստ եւ բախտորոշ յաւելումներով վըճ-ուական Սեբաստիոյ եւ Բրգնիկի մէջ Վարուժանի կեանքէն ինչպէ՞ս դուրս ծը-ղել Կովտունի հայրուկը՝ Սեբաստացի Մուրատը : Առասպելական ու փառա-պանծ տիտանը կը դառնայ ներկայացուցիչ դէժքը անոր երգած Հին ու նոր բոլոր հերոսներուն : Վարուժան դիւցազներգակը որքա՞ն պիտի ուղէր ունե-նայ Մուրատ դիւցազնին ֆիզիքական ուժը եւ ուզմական սիրազորութիւն-ները : Մուրատ, գէնքի մարդ, բայց ծարաւ՝ ուսումի եւ գիրքի, անասման հիացում ունի Սօսեայ անտառէն կտրուած եղեգնեայ ա՛յն դրիւին հանդէպ, որուն փողէն՝ զբոց ելանէ՞ . . . : Վարուժանի երգը ի՛ր ալ սրտին երգն է : Ու տառային իսկ հանդիպումէն՝ անքակտելի եղբայրակցութիւն մը կը ստեղծուի :

զրիչի եւ զէնքի երկու նսկաներուն միջեւ. եղբայրակցութիւն, որ եթէ առաջինը եւ միակը չէ մեր նորագոյն պատմութեան մէջ, բայց, վաւերականօրէն, ամէնէն սրտայոյն է անկասկած: Երկուքը ի մէ կը ձուլուին հողի մէջ, զազափարնեբով, երազնեբով: Մէկը իր լրացուցիչը կը նկատէ միւսը: Կը զառնան իրարու ներշնչարան ու իթան՝ ազգի ու Հայրենիքի ծառայութեան սուրբ զործի ճամբուն վրայ: Երկուքն ալ Համոզուած են, որ զէնքէն Հրաժարող ազգը վերջակէտը կը դնէ իր դոյութեան: Բա ճիշդ է, որ մէկ կողմէ Վարուժան զաստատեղութիւններով եւ Հրապարակային զաստիօտութիւններով լոյսի պաշտամունքը կը կատարէ սրն ի բուն, եւ Մուրատ կը շրջի անդադար, զիւրէ զիւր, հիմը դնելով նոր զպրոցներու, միւս կողմէ սակայն՝ Հայրուկը, յոռեզոյնը նախատեսելով, պաղանօրէն կը զբաղի ռազմա-կազմակերպչական գործերով, իսկ բանաստեղծը կը Հնչեցնէ շեփորը, որ ժողովուրդը զանդուածօրէն արթննայ սարկութեան թմբիչին, պատրաստ ըլլայ օրհասական ծածուն՝ Ազատութեան եւ Արդարութեան զերազոյն դուպարին: Հարկ է, որ «Հիւզակները մարտկոցներու փոխուին», «Ամէն խրճիթ ըմբոստ մը դուրս պոռթկայ», «Ձեռունը, Քրիստոսի խաչին տակ պահ դրած Հրացանը վա՛ր առնէ ամէն երիտասարդ», եւ Մամիկը երգելով՝ հիւսէ զգրօշակ կամ պատանքը կոտի զացող իր թոռնիկին: Որովհետեւ Սահմանադրութեան բեթած արեւին շողերը խարուսիկ են, եւ՝

Ո՛վ Յոզնածմեր, լսեցէ՛ք,
Ազատութեան արեգակիմ տակ միայն
Քրտիմքը ձեր կը սերմանէ ադամանգ:
(Ա.Ռ.Ա.ՔԵԱԼԸ)

Անշո՛ւշա, այդ պայքարը կը խլէ, ու դեռ պիտի իլէ՛ զոհեր, սրբազան ճակատամարտին կ'իյնան ու դեռ պիտի իյնան ամենամեծ հերոսներն անգամ: Մուրատ, Ծփրեմի սգահանդէսին, իր խօսքին մէջ կը գոռայ. «Բաւ, ազնիւ հայեր, սրբա՛ն կ'ուզէ՛ք աւելի փակեցէ՛ք ձեր բնակարաններում դռներն ու պատուհանները... վազը ճարէ՛ն, աշխարհի չորս ծագերուն մրրկացող հողմերը Եփրատի ափերէն մէկ մէկ աննշամ մասնիկներ ձեր դռներու եւ պատուհաններու ծերպերէն մերս պիտի նետեն, ուրտեղ հայ արգանգ մը կայ, եւ վաղը անոնք նոր Եփրատներ պիտի ծնին»: Իսկ բանաստեղծը Հայ մայրերու ունկիւն կը քնարահարէ՛.

Արգանդներուն մէջ ձեր լայմ՝
Նոր Սագի՛նք նոր Որդիներու ստեղծիչ:
Իրենց մըռայլ ձեւիմ ներքեւ կը պահեն
Հըզօր ձեւքերն Առիւծներու ապագայ:
(ՋԱՐԳԸ)

Արթնութիւն ու պայքա՛ր, մինչեւ «վարդահեղեղ արշալոյսոյն ողջունումը, որուն «տանձաճյուր» կ'առնեն քերթողն ու Հայրուկը: Գաղափարով իրարու Հաշտ ու ներգաշնակ, անհատական դեանի վրայ ալ փոխադարձ սէրն ու յարգանքը այն աստիճան կը զարդանայ երկուքին միջեւ, որ մէկուն փափաքը կը զատնայ Հրահանգ միտին: Այսպէս, Մուրատ, որ վայրկեան մ'իսկ չէր տատամսած, օրին, Հրեղէն ձին ջշիլ-երթալու եւ զրուխտ մը անուշ խօսքով տարհամոզելու Արաքսիին Հայրը, որ «աղջիկը Հալա՛լ ընէ իր վարութանին», ուրիշ օր մը՝ ոչ ոքի չգիշտծ պատի՛ւը կը շնորհէ Վարու-

ժանին, թոյլ տալով, որ քանի մը ժամուան համար թառի ան՝ իր այդ նուրբ-
րական ձիւնն, անմատչելի զինգասօրի քամակին: Քնարահարը պարտական չի
մնար հերոսին: Այդ օրուան արշաւանքի ներշնչման տակ կ'անմահացնէ անոր
հրեղէն ձին՝ խորհրդանիշի մը վերածելով գայն:

Բն'գաս, հրեղէն ձիս,
Երկնամալիս լեռն արեւում մէջ կը շաղայ
Ջերթ շափիւղայ,
Իր կատարիմ սաստկապսակ՝ պիտի գիս
Տանիս... (ԲԵՊԱՍ)

Բայց եթէ արեւուն մէջ շողացող երկնամուխ լեռները քահն են հերոսին,
ինք, քնարահարն ու լոյսի պատարագիլը՝ աստղապսակ ա՛յլ կատար-
ներ ունի նուաճելիք:

Կին ու շառուիղ, մայր ու հայրական երդիք, Մուրատ եւ հրեղէն Բե-
գոս, հայրենի արեւաթագ լեռներ եւ ցորենի դաշտեր սսկեծուփ՝ հոգեպա-
րար են ու կենսատու: Բայց անցած են արդէն երկու երկա՛ր տարիներ, տասն
է այդ տո՛միկ գեղեցկութիւններէն ինչ որ կը պակսէր իր հոգիին, անհրա-
ժեշտ էր անոր վերաթարմացման: Գուտական հորիզոնը նեղ կու գայ այլեւ
արծիւի թռիչքի կարօտ իր միտքի թեւածումներուն: Պոլի՛սն է լոյսի աղբիւ-
րը, մշակոյթի կեդրոնը, գէպի աշխարհ բացուող պատուհանը: Հոն է արեւ-
մբտահայ միտքի եւ գաղափարականի ընտրանին: Հոտ՝ կրօնական, կուսակ-
ցական նեղմիտ վարձուքներ եւ այլ մանր վէճեր կը խնն իրմէ ստեղծագոր-
ծողի թանկագին ժամանակը. «Այժմ փոխանակ բանաստեղծութեան սկսած եմ
նետարութիւն ընել հոս. Հիւկնմ մտցած եմ, սկսած եմ Գիմաք-եմէս կար-
դալ»: Անդին՝ կեանքի գեղեցկութեան, կենսունակութեան փառաբանանք՝
«Լալազէ՛նքու, «Արեւիտան բազմի՛քներու նուիրուած իր ներբողները ի-
րենց հոգին յաճախող վաւաշտ պատկերներու հետ շփոթող արեւելահայ գրե-
լի եղբայրներ՝ «պոռնկագի՛ր» անուանած են զինք, եւ արձագանքը հասցու-
ցած մինչեւ գաւառ: Այդ ցաւէն ալ կը մխայ սիրտը, երբ կ'ուզէ մեկնել գէպի
«Աղբիւրը լոյսին», որ իր հողեկան հայրենիքն է:

Կ'երթամ աղբիւրը լոյսին,
Ուղիմ երկա՛ր է. սայրկուսած է ազիմ
Կոյժփարերսով, ցանկուած՝ մաւրտի փուշերով,
Ուղիմ շեղ է ճառագայթի մ'համգումակ.
Անկէ կ'ելլեմ՝ յեծյով դողող ծուկիտուս,
Եի ԾՈՒՆԿԵՐԷՍ, ՋՈՐ ԳԱՄԵՑԻՆ ԵՂԱՍԵՐՆԵՐՍ՝ (*)
Արիւնս տա՛մ կը բլի:

Տարի մը կ'անցնի թորատ (1911ին)՝ Աղղային ճեմարանին մէջ դասա-
ւանդելու հայերէն, ֆրանսերէն գրականութիւն, քաղաքական կրթութիւն:
Ապա, ընտանիքով կը փոխադրուի Պոլիս (1912ին), իբր տեսուչ Բերայի Գրի-
գոր Լուսաւորիչ սեւուճնարանին:
Հոս են Պ. Գուրեհաններու եւ Մ. Մեծարենցներու ներշնչող շփոթմանը,
Հոս է նաեւ ողջերու հոյլը, հայ մշակոյթի ջուրմերը՝ Գ. Զօհրապետի եւ

(*) Ընդգծումը մեզմէ (Յ. Գ.):

Ռ. Զարդարեանները, եւ յերափոխական կուսքերը՝ Ս. Զաւարեաններն ու Գ. Խաճակները: Ակա՛յ Մուրատը, բայց կա՛յ Միամանթոն, ու կ'հղթար յոման հայոց ողբի եւ վրէժի, արդար պայքարի զոյգ ռազմերգուները: Կոմիտասի բիւրդահունչ երգերը արժապանք կու տան եկեղեցիներու կամարներուն եւ հայ երգիչներուն տակ: Վահրամ Փափագեաններ կը խորացնեն, արուեստի խորանի կը վերածեն հայ բեմը: Հայ Գիրքերու Գիւտի տօնակատարութիւնը անցեալի փառաշուք օրերը կը վերադարձնէ հայութեան:

Վարուժան յառաջարկմի վրայ է, ինքն ալ: Տեսուչի եւ կարգ մը երկ-րորդական վարժարաններու վերի կարգերու դրականագիտութեան այցելու ռասախօսի պարագումներէն զուրս, փնտրուած բեմասաց՝ բեմ կը բարձ-բանայ Ալիշանի եւ Մ. Պէշկէթաշիեանի նուիրուած հանդիտութիւններուն, կ'ըլլայ զլիաւոր բանասօղ բաֆֆիի ՉԵ եւ Մ. Փորթուզաշիանի 40ամեակի տօնակատարութիւններուն: Իրեն կը վիճակուի Ս. Զաւարեանի գումբանու-կանը խօսելու պատիւն ու պարտականութիւնը: Տակաւին՝ «Մեհեան»ի խում-բազրութեան մէջ է՝ խարազանակիւր Յ. Օշականի կողքին, «Նաւասարդ»ի հիմնադիր՝ Յ. Զ. Սիրունիի հետ: Կ'այլատակցի դրական մամուլին, բայց մա՛նաւանդ լոյս կ'ընծայէ, նոր զեղումներուն հետ, Կանտէն հետը բերած եւ Բրդնիկի մէջ անցուցած ստեղծագործութիւններուն համահունչը՝ «Էնթա-նաս երգեր»: Ուժի եւ Գեղեցկութեան փառարանանք՝ անցեալի արքայական մեր օրերու շքեղութիւնն ու հզօրանքը ներբողոց, ինչպէս նաեւ գրկուած, բայց վրէժիներ Ժողովուրդի վերջնական յաղթանակը աւետող, խորքով հա-րուստ եւ արուեստով աննուանելի այս հատորին առթիւ, «Եսայեան Սանուց Միութեան» կազմակերպած առույտի մը մէջ, Գ. Զոհրապ եւ Գ. Խաճակ նոր զարհուրեցող մը կը պնեն «Մեղիմ սիրտ»ի դիւցան զնարահարին հա-կատը: Ասույններու նոյն շարքին, ինքն ալ կը խօսի իր գրչիցօր՝ Միա-մանթոյի ճերթողութեան մասին, արդար զնահատանքի միացուցած ազնուա-զօյն վեհանձնութեամբ մը՝ անոր զնարը վեր դասելով իր զնարին:

Դեռ Սահմանադրութեան զինովութիւնը կ'ապրի հայութիւնը, բայց զբացուած են սչեբերը: Եւրօլի քաղաքական անցուղարձեքը նոր թափ ու ե-ռանդ կու տան ազգային մշտումներուն: 1912ին պայթած է Գալքանեան պա-տերազմը: «Հայոց արծիւ»ը՝ Անդրանիկ, կեցած է պուլիարական զօրքերու կողքին: Հայ զեկավարութիւնը կը հետապնդէ հայկական վեց նահանգներու բարենորոգումի ծրագիրը: Յեղափոխական-մարտական տա՛ք շունչ մը նա-բէն կը շիկացնէ շատերուն հոգիները: Վարուժան տալիներէն է, որ կը հա-ւատայ, թէ գէնքը եւ վառ պահուած մարտունակ արամազրութիւնները միայն կ'հերաշխուորեն ազգի մը ապագան: Անոր քաղաքական-ազգային հեռանկար-ները եւ ընկերվարական համոզումները ո՛ր կրնային դանել իրենց նպատա-կատաշարութեան թափն ու թռիչքը, եթէ ոչ՝ Մահ կամ Ազատութիւն դբօշին տակ, ոչորտին մէջ ա՛յն կուսակցութեան, որուն զինանշանին վրայ, հայ ժո-ղովուրդի սրբազան գատն ու արդար պայքարը յաղթանակի առաջնորդելու համար, սուրին հաւատար տեղ վերապահուած է փետուրին: Բայց հանրային-կուսակցական պարտականութիւնները ամբողջովին չեն կլաներ գինք: Հայու եւ մտաւորականի այդ նուազազօյն մասնակցութիւնը ընդհանուր շարժու-մին, ընդմէջ, նիւթ ու ներշնչում ալ կը հայթայթէ իր փնարին: Կայսեր բա-ժինը կայսեր, Աստուծոյ բաժինն ալ Աստուծոյ սուտղ իմաստուն ու հաւա-սարակչիտ արուեստագէտն է ինք: Կայմակնացայտ մութնով կը քանդակէ պայքարի՝ Նեմեսիսի արձանը, բայց կը մնայ երկիւղած ինկարկուն՝ նրբա-հիւս մարմարով կոթողած «Գեղեցկութեան արձանին»: Կոնէն ետք խաղաղ կեանք երազող հայրենի հողերու ջլապինք մշակն է ինք:

Բարենորոգումներու ծրագիրը իրագործելու համար Հետո ու Վեստ-նենկ ճամբայ ելած են արդէն ղէպի Հայաստան: Վեց վերայէթներուն մէջ — որոնց կարգին Սերաստիան — խաղաղ կեանքի մը վերադարձը կտրած է յոյսի ճանապարհը եւ ոտքը դրած իրականութեան սեմին: Այդ խաղաղ կեանքին համար խաղաղ ու Հոգեհմայ երգ է հարկաւոր: Այդ երգին նիւթը Վարուժան վաղուց սւնի իր սրտին մէջ: Իր արարչագործութեան առաջին օրէն Հոգին թափանցուած է Հայրենի անդամատաններու չքնաղ տեսիլքով, Հայ ժշակներու ոսկեծոր քրտինքով, հուժկու եղներու արծաթէ շողիքով, ոսկեհիւս ցորեանի ալեամասն ծովերով: Ծնած է «Հացին երգը» թուղթին ու սեղանին վրայ, քանի մը հատուած ալ լոյս տեսած՝ մամուլին մէջ: Բայց պատմութեան անիւր անգամ մըն ալ ծուռ կը դառնայ հաւաքական եւ անձնական այս երազներու սեմին: Կը պայթի Համալիարհային Ա. պատերազմը (1914 թ.):

Սուլթանէն աւելի սուլթանական, Երիտասարդ Թուրքերը, երկու տարի առաջ, Սելանիկէ իրենց դադանի ժողովին, Հայաստանը Հայուն դերեքման նշանարանը իւրացուցած են եւ Հայաստանութեան ծրագրի գործադրման ժամը հասած կը նկատեն: Արագօրէն եւ նենգաբար կողմակերպած աքոորը արժապարհի կ'ընէ Թորգոմեան ցեղը պապենական իր Հողերէն:

Վարուժան կը զգայ վտանգը, բայց լ'ուզեր բաժնուիլ դպրոցէն, ընտանիքէն, թուղթէն ու դրասեղանէն: Զի՛ դիմեր փախուստի, եւ կը մնայ պարտականութիւններուն դրուխը: Եւ պոյսահայ մտաւորականութիւնը մահիկովը քաղող թուրք սաքեարը, Ապրիլ 24ի (1915) դիւերը, կը մտնէ Վարուժանի տունն ալ: Ժամանակ չի տար անոր, վերջին տեղամ մը, քովն նընջանեակին մէջ տեսնելու իր «Վարուժանկը»՝ Վերոնիքը, եւ զահատաւանդը՝ Արմէնը: Կը տանին զինք գերեւանցով, կը յափշտակեն թուղթին ու մեռադիրները, որոնց մէջ՝ «Հացին երգը», դրեթէ աւարտուն: Հետագային՝ կինը, Արաքսի՛ն է, որ կ'ազատէ Հայ քնարերգութեան փառքերէն այդ մէկը Եսասկան դաւաճանին մեռքէն, քանի մը արծաթի փոխարէն, եւ Վարուժանի սաները կ'արժանացնեն զայն յետ մահու հրատարակութեան (1921 թ.): Քանի՛ էջ կար «Դիմիի երգը»էն, «Համերակամ»էն եւ այլ գործերէն՝ յափշտակուած այդ թուղթերուն մէջ, եւ որոնց ծրագիրը վաղուց կը փայտայտի Վարուժան...:

Աքորի արիւնոտ ճամբան թէ քանտի մութ խուցին մէջ՝ Վարուժան կուրծքին սեղմած կը պահէ ձսե նոճիի, սեւ փայտէ՛ն ա՛յն քնարը, որ՝ «բայց այս գերեզմանդ է, դադադդ է՛» հեկեկացող մուսայի մեռքէն, առաջին հանդիպումին խկ, առաւ խանդաղին: Սեւ հողերու դաւակ՝ յանձնառու կ'ըլլայ սեւ հո՞ղ դառնալու՝ վասն հայրենեաց: Անտուածորդին անգամ պահ մը ընկըրհեցաւ տանջանքի եւ մահուան բաժակին դիմաց: Յիսուսի տարիքին չհասած՝ Վարուժան քաղութեա՛մը կը դիմաւորէ սեւազգեստ մանգաղակերը, սառն ու սեւեռարիք կը նայի անոր աչքերուն, ետին մնացողներուն կանչելով. «Մեա՛ք բարով... մնոճիլու կ'երթանք մեմէ՛»:

Լո՛կ թեւածող միտքի եւ շքեղ բառի բանաստեղծը չէր ինք, այլ արիւնէն ծնած ու շունչէն կենսատրոփ իր խօսքը՝ կեանքովը ապրող դադափարական առաջնորդը: Թշնամիին առջեւ զլուխ ծռելը անհայտ կեցուածք էր հանդէպ իր բովանդակ ստեղծագործութեան: Որով՝

Երբ ոճրագործները կտոքէն վար կ'առնեն զիրենք, Վարուժանն ու Ռուբէն Սեւակը, երեք այլ բախտակիրներու հետ, «Դիւրեմիկը» քերթուածով ական ընդ ականի սկզբունքը ներբողած անվեհեր ազան՝ Վարուժանն է միայն, որ կը կուտի՛ մարդասպաններուն հետ, կը փորձէ սուղ ծախել իր մորթը, մին-

չեւ որ անոնք կը կապեն զինք ծառին, կը կտրտտեն մերկ մարմինը, կը փորեն աչքերը...

Արիւնոտ սպունդը երբ կեանքի դրառախտակէն կը սրբէր իր ալ ՅԱ տաբիննու գումարը, սեւ վարդոյրը իրած պահուն ի՞նչ շնորհաց, հովի սենկին, զանմահ երազի» երկրպագուն... ի՞նչ եղաւ ապրումը Հեթանոս քուրմին, պատգամը՝ արուեստի կախարչին, վերջին խօսքը՝ պայծառարոց յեղափոխականին, երբ հեռուէն, նոյն այդ ժամուն, աշխարհ կու գար իր երկրորդ զահատանդը...

Անհունախոսով այդ ատրումը, մոզական այդ խօսքը եւ Հրաշունչ այդ պատգամը կա՛նք՝ ընդամէնը տասը տարիէն իրագործուած, բայց աւելի ջան տասը դարեր լեցնող իր վաստակին մէջ, որ ազգային է իր խորքով, եւ ափեզերական՝ իր կարգ մը նիւթերով ու արտոգութեամբ, արուեստով:

Լոյսի պատարագում կայ այդ վաստակին մէջ, հողին խնկարոյր աղօթքը հայ ազատասունչ պայքարին խոյանքը, ինչպէս մարդկութեան նընչրած զանգուածներուն պայթուցիկ հրարուխը:

Հայաստանը արտարարող՝ ցրեանի սակեծուփ անդատասնները կը տարածուին հոն, կը զազախանան՝ արեգակով թաղապակ հայոց լեռները առատածամբերձ, ժայռերու ծոցէն՝ լոյս ու ազամանդ բխող աղբիւրները իրենց բաղդրուած նրդը կը տանին բնութեան, Աստուծոյ անտառ՝ կը սօստփէ սրբազան իր խորհուրդը, վիշապաբաղ Վահագնը՝ Վնայրուած կ'ընծայէ Աստուածամօր... Հոն են տակաւին՝ սընհազարդ տիկինը՝ ՎՄուի Վեմետիկը, արեւատեան սասաններու ծխարձակ գործարանները՝ խժալուք մեքենաներու ստիկ արտուած գործաւորներու սրտայոյզ ճիշտրով...

Ու երգե՛ց

Երգեց բնութեան ներշնչման տակ մէկն այն մեծ

Համայնեւերկն՝ գոր կու տայ

Զոնազարծուսը ամօհն:

(ԱՌԱՋԻՆ ՄԵՂՔԸ)

Անձի զոհազործման, ողջակիզումի պանթէոն մըն է այդ վաստակը՝ զուակին, ամուսնին պանդուխտ օրերը զարցունքի շիթօնով համրող հայ մարբերու, աուն ու ընտանիք հոտի ձգող եւ հայրենիքի բողբոջին պատարագ գարծող Վարդուհիպեաներու եւ Վառճապետներու, կայծակնացայտ սուրով ազատութեան ճամբան հարթող եւ արդար այդ ճամբուն վրայ ինկող ղեկազնեորու, հերոսներու:

Ողջակիզում մըն է իր՝ բանաստեղծի՛ն իսկ կեանքը Վեղիցկուքեան արձաններն, սրուն զկուսը կ'ըմպէ ամառ տրեան հուսկ կաքիլը...

Բայց միայն մարմարակերտ Պանթէոն եւ Գեղեցկութեան անկործանելի արձան է Վարուժանի վաստակը, թուղթ ու քերթուած, երգ ու քնար միայն...

Հոսմի Ս. Պետրոս մեծափարթեամ տանարին դիմաց՝ «Ի՞նչ կ'արժէ, ինչի՞ կը ծառայէ հրկիմեմալիս եւ զեղակերտ սա գմբէթը թերահաստի մը հարցումին՝ Փրանսացի մեծ գրագէտ՝ Սթանտալ կը պատասխանէ. «Մարդու սիրտը տրոփել կու տայ»:

Վարուժանի դործը ո՛ր միայն արտփել կու տայ մարդուն սիրտը, այլեւ կը վերակենդանացնէ իր «Յեղիս սիրտը»: Գործ մը, որ Ալիշաններու, Արսովեաններու եւ Բաֆֆիներու հրեղէն շունչին նորակերտ եւ զեղոճ սակեցիկորը հանդիսանալով, Յեղիս սիրտին սրբալոյս բռնկումը՝ արդար մարանչումով

խաղաղ ու ազատ Հայրենի անդառառններու սրբազան հացին հասնելու երա՛-
զը կը փողահարէ համայն Հայութեան եւ աշխարհին:

Այդ դործը, բնաստեղծութենէ եւ զրականութենէ անդին, ժողովուրդի
ժը հոգեյատակին եւ Հայրենիքի ժը խոր ընդերքին մէջ կուտակուած ա՛յն
ուժն է, որ կ'անմահացնէ ազգը, կը յաւերժացնէ Հայրենիքը: Հրեղէն ա՛յն
շունչը, որ կեանք կու տայ անկենդան կաւին, սաքի կը հանէ մեռելները,
իսկ ողջերը կը վերածէ դիւցազներու:

Հայութեան ապրելու կա՛մքը, Հայ լեզուի եւ ոգիի քիւրքացումն է
այդ վաստակը:

Եթէ այդպէս չըլլար՝ Թարգմանութեամբ մատուցուած Վարուժանի
ստեղծագործութիւններուն ընդմէջէն օտարները չէին փառաբաներ հանճաքը
Հայուն, եւ Գանձի համալսարանը իր որմերուն քանդակուած յուշատախտա-
կով ժը չէր յաւերժացնէր անոր յիշատակը:

Եթէ այդպէս չըլլար՝ Հայրենիքը անոր անունով դպրոց եւ արձան չէր
կանգնեցնէր Հայրենի հողին վրայ, Հայոց երկնակամարի ամէնէն մեծ աստ-
ղերու կարգին՝ ամենավառ Հրայրքը չէր դառնէր զինք, վեր կենալով ամէն
խարականութենէ՝ համապետական հանդիսութիւններով չէր ասներ անոր Եւ-
հընդեան 100ամեակը, եւ Սիլվա Կապուտիկեանի ժը բերնով չէր հառ-
ատակեր, որ՝ «Աւրիլեան եղեռնի ստացակոչների տակից Արից ծլարձակեց,
վերակենդանացաւ, երկրորդ կիսմեով ապրեց ո՛չ միայն այդ մեծ քանա-
սեղծը, այլև՝ նրա ժողովուրդը: Վերակենդանացաւ այդ ժողովուրդը, ք-
բավիտեւ արարիչ ուժերի պսիստմերում ունէր նաև Վարուժանը»:

Այո՛, Վարուժանի բռուկը դարձան Սարդարապատը կերտող Հայ մար-
տիկներու բողաղող փամփո՛ւլտ, եւ ստեղծեցին նո՛ր Հայրենիք: Անոնք դար-
ձան նոր քերթողներու շունչ ու արիւն եւ ստեղծեցին նո՛ր քնարերգութիւն,
նո՛ր մշակոյթ:

Բայց ահաւոր նախնիքէն 70 տարի յետոյ՝ տակաւին թա՛ց է Հայ նա-
հասակներուն արիւնը. ազատութեան եւ արդարութեան ճի՛շ ունին անոնց
անթաղ ոսկորները, եւ անոնց բաց մնացած աչքերուն երազը իրականացնե-
լու անխորտակ կա՛մք՝ անոնց հրեղէն շտաւիղները:

Արեւու խաւարումը կը տեսէ ցայտօր: «Վարդահեղեղ արշալոյսօրի շո-
ղեր՝ կը շոյե՛ն Հայաստանի մէկ փոքր մասը միայն: Իսկ արեւուն դէժ կե-
ցած լուսնի մահէկը խաւարի մէջ կը պահէ արեւմտեան կողմն Հայոց Աշ-
խարհի»:

Այդ խաւարումը չի կրնար յաւիտենական ըլլալ: Սակայն, տիեզերա-
կան անդիմադրելի ուժ դառնալու, սոցո՛ւնելու համար արեւածաղի ոսկեհուր
բունկումը, հայը՝ հա՛ց հանապազորդ եւ ջուր կենաց պէտք է դարձնէ Վա-
րուժանի վաստակն ու ոգին, ուխտէ՛, անոր նման, զոհադործուիլ վասն աստ-
ւածամատոյց զեղեցկութեան, սղջակիզուիլ՝ վասն Հայրենեաց:

Եղբջի կա՛մք Վարուժանի
Յայտմանտէ մինչ յաւիտեան:

Յ. ԳԵՂԱՐՅ

19 Յունուար 1985, Պէյրուք



Հայկական Աֆիլոզի Ռաուճապրոսթանից Փարիզի Կեդրոնը՝ Փիև Տէր Սարգիսեանի, Ժան-Քլոտ Բէլլապանի եւ Միլէի Ռազումեանի խմբադրութեամբ ու Ճիկարանութեամբ՝ 1983ին լուս ընծայեց նկարներու սլաքով մը, ուր տեղ զտած է վերի նկարը, նետեալով ժողովարութեամբ:

Ըրամիլէ վարուժամի ընտանիքը Կոստանդուպոլիս, 1680ական բաւականներու վերջաւորութեամբ: Ապագայ յանտանգը (Ավարիմ մէջ աչիմ) նման էր 1884ին, Սերաւակոյլ գաւառը:

Այլոսի խմբակները յայտնապէս թերիմացութեան մը զով զայտն են լուս: Թուրքի յայտնի է, 1880ական թուականներու վերջաւորութեան Գ. վարուժան եղբայր լուսեր, ու նոցա միայն 1900ին, իրմէ 10 տարիներու տարբերութեամբ՝ Վաւանը, իսկ երկրորդ եղբայր մը երկու տարի նոց, Պարսոյ: Այս տուեաններուն հիմամբ տարապէս չէ ժող, որ նկարին մէջ նրուցողները տարբեր իրարու ժող վաւանն ու Պարսոսն են եւ ոչ թէ երկուքն մէկը եւ Գ. վարուժան:

ԿԱՐԳ ՄԸ ՔԵՐԹՈՒԱԾՆԵՐՈՒ

«ԿԱՐՄԻՐ ՀՈՂ»

Մի անգամ, երբ խօսք եղաւ «Կարմիր հողը» գերթուածի մասին, նա պատմեց հետեւեալը.

Այիւնն իր դործերի մի հաւաքածոն ուզարկում է էջմիածին, որպէս նուէր Մկրտիչ կաթողիկոս Խրիմեանին՝ «Հայոց Հայրիկին» մակադրութեամբ: Իսկ Հայրիկը փոխադարձաբար վննետիկ է ուղարկում պարզապէս մի փոքրիկ ծրար Հայաստաննան հող, հասցէադրուած՝ «Հայոց Նահապետին»:

Անա այդ պարզ, բայց սրտառուչ դրուագից էր ներշնչուել վարուժանը, մանաւորից հասցնելով վսեմ ընդհանրացման («Իտմիէլ վարուժանը իմ յուշերում», Բ. տպագրութիւն, Պէյրուք, 1968):

Ա. Գ.

«ԱՅՐԵՆԻ ԼԵՌՆԵՐ»

«Հայրենի լեռներ»ը գրուած է Սահմանադրութենէն քանի մը օր առաջ, երբ Զուիցերիայէն կ'անցնէի՝ Իտալիա երթալու համար, այդ գերթուածը բիրեղացու մէջս («Նամակամի», Երևան, 1965):

Գ. Վ.

«ԳՐԳԱՆՔ»

...Վարուժան կը խորհրդակցի իր մտերիմներուն հետ: Կը շքր-ջապատուի իր մտաւորական ընկերներով: Մուրատ կը ծառանայ: Մուրատ պաշտպան կը կանգնի զրչի հերոսին: Մեծութիւնները կը կռչին մեծութիւններուն: Կամքի ազատութեան ջատագուփները կ'ոգեւորեն Վարուժանը, որ սակայն տխուր է եւ միւջը աշեծուի: Օրերով չէ տեսած Արաբսին: Կը խորհի, թէ որքա՛ն բանադատուած պէտք է ըլլայ եւ որքա՛ն նախատուած: Եւ, ճիշդ այդ մտածումներուն անդրադարձն է, որ կու տայ ան հետազային, իր գեղեցկագոյն գերթուածներէն մէկուն՝ «Գրգանք»ին մէջ («Ամճուն տարեգիրք», Զ. տարի, Պէյրուք, 1959):

ԼԵՌՆ ԼԱՆԻՍ

«ՆԱԽԱՍԱՐԴԵԱՆ»

«Նախասարդ»ը մամուլին յանձնելու օրը կու դար, եւ դեռ մեր ճառաջին էջը» չունէինք: Եարաթ օր մը — 1913 Օգոստոս 25 — Վարուժանի հետ կ'անցնէինք Բերայի Շիրակէն: Անակնկալ տեղատարափ մը մեզ սրճարան մը նետեց, ու հոն, աղմուկին ու ծուխին մէջ,

Շ Ն Ն Դ Ո Ց Ը

Դանիէլ սա պզտիկ գոհարը զրեց, «Նաւասարդեան»ը, զոր անժիւ-
լապէս գաջի դեռեղի մեր տարեգրքին սկիզբը («Հայրենիք» ամսա-
գիր, Նոյեմբեր 1923):

Յ. ձ. ՍԻՐՈՒՆԻ

«ՊԱՏՈՒԻՐ»Ը

...Այդ միջոցին Պուլն սկսան հասնիլ անսպասելի լուրեր.
Վոսփոյրի ափերէն ազատութեան ձայներ կու դալին: Երիտասարդ
թուրքերուն յողափոխութիւնն էր:

Ինական է, առաջին լուրերը առինք իտալական թերթերէն:
Եղբայրս կը գրէր, թէ նաժամները բաց են: Կ'ուզէին, որ մեկ-
նիմ Երզնկա: Ութ տարի է, որ հայրենիքէն դուրս կ'ապրէի:

Որոշեցի մեկնիլ: Ընկերներս տուին սղջերթի նաչ մը: Փօ զե-
տին եղբրը, երեկոյեան հաւաքուեցանք սեղանի մը շուրջ: Ճաշէն
ետք, ընկերներ քանի մը խօսք ըրին, ապա կարգը եկաւ Վարուժա-
նին: Ան շատ յուշուած էր, մեր բաժանումը զինք կը տիրեցնէր,
բայց կը նախանձէր, որ իրմէ առաջ կ'երթամ հայրենի հողը հաճ-
ութեւնու:

...Բոլորիս այ աչքերուն մէջ արցունք կար: Այդ տղաւորու-
թեան տակ Վարուժան զրեց «Պատուէր» քերթուածը, զոր պիտի կար-
դայի Երզնկա: Ես կը նկատեմ այդ քերթուածը իր ամենէն ներշնչու-
ած կտորներէն մին («Իւմիլի Վարուժան», Գահիրէ, 1955):

Դ. ձ.

«ԱՐՄԵՆՈՒՎԻՆ»Ն

Վիպերգը վերջացուցի, եւ քարթիս հետը կը դրկեմ: Պոլիս ե-
զած ատենս Հայաստանցի պատանի մը իր քրոջ մասին արտաշաբ-
պատմութիւն մ'ըրած էր: Այդ ղէպքը «Արմենիան»էս բաւական տար-
բեր էր: Բայց մ'զ կը յուսար, թէ երեւակայութիւնէ երեւակայութիւն
ան զիս պիտի առաջնորդէր քերթուածի մը ամբողջութեան: Այսպէս
եղաւ: Ի՛նչ որ կը վերաբերի պատմական մասին, համակրելի է.
Անդրիկեան ինծի մատնանիչ ըրած էր նախնեաց զրութիւններուն
մէջ զեղեցիկ դրուագ մը: Այդ առիթ եղաւ ինծի Շահ Արասի ղէմ-
քին ծանօթանալու: Եթէ զրուագն ամբողջապէս առնէի՝ պէտք էի
նկարագրել Շահին՝ Հայ կոյսերուն հետ ըրած մէկ կերտութեամբ, ինչ
որ զեղեցիկ հակասութիւն մը դուցէ կաղմէր Հայ ազնկանց նկարա-
գիրներուն մէջ: Մէկ խօսքով՝ խոճոճալով-խոճոճալով հուսկ հա-
սայ ներկայ ձեւին, զոր կը յանձնեմ Ձեր դատողութեան («Նամակա-
նի», Երեւան, 1965):

Դ. Վ.



Դ. ՎԱՐՈՒԺԱՆ

ԻՐ ՆԱԽՈՐԴՆԵՐՈՒՆ ՄԱՍԻՆ

ԱՆՆԱՆ

Անիշանը բանաստեղծ էր՝ որ գիտութիւն կ'ընէր: — Այս կը նշանակէ, թէ գիտութիւնը կը ժողովրդականացնէր: Իր թանգարանին, իր ժազազանքներուն ժառանգարանին եւ առհասարակ հայրենի բոլոր աւերակներուն մեծութիւնը վերստէ կատարած էր իր հակադաս տաւիլը՝ եւ ահա Խորենացիին խոսքը երգի կը փոխուէր, Եղիշէի ազգազակը՝ զիւրազանքութեան, Եգիպտի մշտանումը՝ երեսակայութեան, Ենտրահիլի ազգութիւնը՝ օրհնեցութեան, աւերակներու արամութիւնը եւ սնցեակը կ'ընէր՝ Հրդեհի:



ՊԵՏԻՊՈՍԵՆՆԱՆ

Անիշան աւերակներուն վրայ կանգնելու իր տաւիլը, Պէտիպոսենանը կանգնելու իրենց ժողովուրդին վրայ՝ իրբեւ երկրորդ աւերակը նոյն ժամանակուան պատահաւորութեան, զինացունց եւ ստրկացած հայութեան: Մ'չ ապագին այդ ստրուկները զիւրազանքու գուսակներ էին, չէ՞ր կարելի անոնցմով ստեղծել վերածնունդը հին կանոնական արեան, առաջ ընթել նոր ուժ եւ նոր իմաստներ: Մուսանկը Այո ըսին ու ան երգեց.

Տար քա ձեռնդ, եղբայր եմք մե՛ք...

ՄԱՍՄԱՆԹ

Իրբեւ միտիք, Սիամանթոս զրոյց Յեղափոխութեան նարեկը եւ Յովհաննու Յայտնութիւնը: Լոյսեւրականները բազմազոյ տոմարն եւ լեզուն փոփոխելներուն մէջ ընդմիջարեւ կարծեցին Եւսեփայն լուսանկը զեմքը, մեր փրկողը զրի՞թէ նոյն ըբաւ: Արեան մփանքներուն եւ Հրդեհուող ցորեններուն մէջէն հեռացողաց յազթանակին լուսաւոր իրանը: Տարբերութիւնը լըլմնի եւ հաստալիքի տարբերութիւնն է: Արուեստը եւ հանգամանքնիւ նոյն են, որ է ընդառաջ երթալ մեն ու բազմացումը կարելիին, մերթ արլաւելով եւ մերթ օրհնելուով:



Ս. Պ. Տ Ա Տ Ո Յ Ե Ա Ն

Գ Ա Ն Ի Է Լ Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն

ԻՄԱՑԱԿԱՆ — ԳԵՂԱԳԻՏԱԿԱՆ ԴՐՈՅԹԸ
ԻԲՐԵԻ ՀԱԿԱԹԵՋ ՀԱՄԱՅՆԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ
(Հ Ա Տ Ո Ւ Ա Մ)



Գրողներու մեծամասնութեան պարագային՝ դժուար է անընտել յընտակ գիծները ներքնապէս ներդաշնակ աշխարհաճանաչացքի մը, որովհետեւ այս դրոշներուն մօտ մտածումը չէ հասած զարգացումի բաւականաչափ բարձր աստիճանի մը, այլ ընթացած է ենթադրականական մակարդակի վրայ, միայնառնուած՝ զգացումներու եւ պատկերաւոր մտածողութեան: Սակայն երբ հեղինակին աշխարհաճանաչը կը հիմնուի կուռ տեսակէտներու վրայ, մտածումը կը վերածուի թղիչ ուժի մը, որ իր հոլովոյթին մէջ կ'անէ ձեւական տարրերը եւ զգացումին հաւասար ներդրութեամբ կը պայմանաւորէ անոնց ընթացքը: Մեծութեան միակ չափանիշը չէ այս, բայց եղած է յատկանիշը արուեստի մեծերուն կամ, Վարուժանի արտայայտութեամբ՝ «անհասանելիներուն», որոնցմէ մէկն է ինք:

Անկախ իր ներքին կառոյցին ամբողջեան եւ նորութեան հմայքէն, Վարուժանի իմացական-գեղագիտական դրոշմը մասնաւոր կարեւորութիւն կը ներկայացնէ արեւմտահայ մտածումին պատմութեան համար, որովհետեւ հիմնականին մէջ հակազդեցութիւն մը ըլլալով, արամադթօրէն հակառակ դիրքի վրայ կը դնուի իր ժամանակի (տակէ տառը եւ վերջ ալ) Արեւմտահայ մշակոյթի դիւաւոր երեւոյթներէն՝ համայնապայտական ուղղութեան նկատմամբ:

Համայնապայտական մտածողութիւնը ուղղակի արդիւնքներէն է Արեւմտահայ մշակոյթին յատուկ տաղանայներուն: Ե. Տէմիրճիպաշեանի կամ Տ. Ջրաքանի պէս արտակերպողն հանճարներու հակազդեցութեան անհատական կերպերուն հետ պէտք չէ շփոթել եւ նոյնացնել այս աշխարհաճանաչացքը: Ընդհակառակն, իր ճիւղերը մինչեւ մեր օրերը երկարած այս ուղղութեան պատճառները պէտք է փնտռել արեւմտահայ պատմութեան մէջ:

Շատ լայն գիծերով ընդունուած՝ համայնապայտութիւնը վերածնունդն է հայկական միութիւնականութեան՝ իր դրական եւ ժխտական կողմերով: Երկուսը կը սաղմնաւորուի Տէմիրճիպաշեանի անձնական կարծուած, բայց

իրողութեան մէջ Արեւմտահայ մշակութիւն յատուկ տաղանային մէջ, վիպապաշտութենէ դրապաշտութեան անցումի ժամանակներու ընթացքին: Զարթոնքի սերունդին անդամներուն միամիտ իմացապաշտութիւնը կը մերժուի: Ճիշդ է, որ դրապաշտութիւնը կը սկսի հող գրաւել՝ ի հաշիւ հողեպաշտութեան, սակայն, ներհայեցակա՛ն դպրոցներն են, որ ընդունելութիւն կը զբտենեն դարուն վերջաւորութեան: Համայնապաշտները ուղղակիօրէն առընչուած են միջազգային շարժումներուն հետ (թէ՛ իմաստասիրական եւ թէ՛ դեղաբուսական): Շնորհիւ Տէմիրճիպաշեանի, Զրաքեանի եւ Մեծարենցի (վերջինը՝ տարբեր իմաստով համայնապաշտ մը)՝ դպրոցը ունեցած է դեղաբուսական շքեղ արտայայտութիւններ. իսկ աւելի ուշ՝ Գ. Գ. Գալաֆեանի եւ Շ. Թ. Պէրպէրեանի սակաւաթիւ յողուածներով եւ երկրորդին դպրոցական դաստիարակութեան շարքերով, Համայնապաշտական դաշտարները ըստացած են իմաստասիրական տարազուններ՝ իբրեւ իմացաբանական, բնազանցական, գեղարտական եւ այլ տեսութիւններ:

Ընթերցող հասարակութեան ամէնէն ծանօթ համայնապաշտական երկը՝ Զրաքեանի Շնորհաշարինը սարգսպէս այդ մտածողութեան տարրերով կառուցուած «բեմադրութիւն» մըն է: Ուսէ հանճարի պէս, Զրաքեան համայնապաշտութիւնը կ'արտայայտէ իր անհատականութեան ուժգին կնիքովը. սակայն հիմնական կեցուածքներուն մէջ շատ չի տարբերի միւսներէն:

Համայնապաշտներուն համար իրականութիւնը երկու սկզբունքներով կը բացատրուի. այսինքն՝ կը բաժնուի երկու մակարդակներու, եւ այդ երկու իրականութիւնները միակ սկզբունքով մը բացատրելու դժուարութեան մէջ կը կայանայ համայնապաշտի սիլիման: Տէմիրճիպաշեանի սարգսպէսին՝ իմացական տաղանաւը կը ստեղծուի դրապաշտական եւ հողեպաշտական կեցուածքներուն բախումի պատճառով: Զրաքեանի բնազանցութեան մէջ, մասնաւորապէս (մարդը) յարատեւօրէն կը տառապի անբաւարարութեան զգացումէն, անհատի կենսապայքարը կը վերածուի տեսակ մը բախումի եւ ընկերային-իթական միջավայրին միջեւ. «Ընդհանրականը» կ'ըլլայ մարդը իր իրականութենէն դուրս հրաւիրող ազդակ: Գալաֆեանի մօտ՝ ճանաչող դութեան բաժանումը, մէկ կողմէ անհատական-յարարեղականի եւ, միւս կողմէ՝ տիեզերական-բացարձակի՝ մտածողը կը ձգէ անստուգութեան եւ սարակոյտի մթնոլորտի մը մէջ: Կարծէք կը վերանորոգուի Տէմիրճիպաշեանի հարցումը.— «Պիւսնէր՝ առոնց հակասականութեան կամ մթաւքեան՝ միթէ կրնա՞յ պատասխանիլ, երբ Բապտիստ Բենեդիկտին հետ հարցունեմ Նիւքսիականութեան այն մեծ առաքելին, ծերուսի սուկալի Տեօֆիլտա Պիւսնէրին. «Անկէ անդին ի՞նչ կայ»(1): Նոյն մտափիհակով է, որ Գալաֆեան կը գրէ.— «Երկու սարքեր քաներ են [բացարձակ, տիեզերական] այդ իրականութիւնը մէկ կողմէ, անոր քանակութեամբ միւս կողմէ»(2): Շ. Թ. Պէրպէրեանի բնազանցութեան մէջ երկակիութիւնը բախումի չ'առաջնորդէր, այլ՝ իրականութեան երկու մակարդակները իրենց զուգահեռ ընթացքին մէջ՝ առաիճանաբար կը շեղին, եւ յաւիտենականը՝ զրսեւորուած եւ զգացուած ձեւերքին» ժամանակին մէջ, կը գերիշխէ վերջաւորութեան:

Փրէթէ բուրբ համայնապաշտներուն համար, դրապաշտական մեթոդը եւ համապատասխան գիտութիւնները օգտագործելի են միայն հորիզոնական մակարդակի վրայ, եւ գործնական նպատակներու համար: Իսկական եւ բացարձակ ճանաչողութիւնը, սակայն, կը վերաբերի «Համայն»ին մակարդակին: Միւթիք գործառութեան մէջ մարդը կը մասնակցի համայնական դոյապերպին. ուրեմն, ճանաչողութեան միջոցը ներհայեցական պէտք է ըլլայ. բնութեան մէջէն եւ ներհայեցութեամբ զգացուած Համայնը, բացի հազուա-

դէպ միտքից պահերէ՝ կը մնայ անհասանելի իտէպլ մը եւ կ'ըլլայ անդարձ-
մանելի թախիծի բնագանցական պատճառ:

Բացայայտ է, որ Վարուժանի աշխարհահայեացքը կը գտնուի տրամա-
գծօրէն հակառակ դիրքի վրայ: Մինչ իր կենսապաշտութիւնը կը բխի
կեանքի սկզբունքէն եւ կը ձգտի անոր լրումին՝ համայնապաշտին համար ի-
րական կեանքը կ'իրագործուի համայնական մակարդակին վրայ: Ձրաքեան
թէեւ «կենսապաշտութիւնը» կը նկատէ իր «Ներաշխարհ»ին «ւարդկային
յատկանիշը», սակայն «կեանքը» հոն՝ տիեզերքին կեանքն է, հետեւաբար, իր
«կենսապաշտութիւնը» կ'ըլլայ համայնապաշտութիւն, որուն համար նիւթա-
կան կեանքին միջոցները անբաւարար են: Ինտրա-գերմարդը կը առուապի,
նոյնն է եւ աւելի վաս՝ հողեմիտակը եւ Տէմիրճիպաշտեանին, իսկ Գալուֆեան
եւ Պէրպէրեան լուծումները չունին: Պէտք է «ապրել» տիեզերքը, կը գտնէ
Ձրաքեան, արձակ ու անկաշկանգ, «պէտք է որ ապրի ստեղծողը», պէտք է
«ապրի» (...) ներաշխարհը (...) երազները (...) բայց վերացականութիւնն
զգայարանի, քանձրացնի, հեշտաւիթի (...): Անոր որ իրենում բնդիւնուր
օրէնքին ձգտելու չափ իրենում պարագայական խորհարդին կը միտի, կամ
մանաւանդ Օրէմիը կը տեսնէ խորհարդին թողբուն ընդմէջէն, որ մշտադար
կը սիրէ Գեղեցիկին մէջ եւ թերեւ Գեղեցիկին պայմանաւ (...) [անոր] երե-
ւակայութիւնը պէտք է յանգի թափառականութեան»(3):

Վարուժանի կենսապաշտութիւնը երբեք չի յանդիւր կամ ձգտի ինքն
իրմէ դուրս գոյութեան կերպի մը: Որովհետեւ իր բնագանցութիւնը (կամ
իրականութեան տեսութիւնը) կը հիմնուի միակ սկզբունքի մը վրայ, այ-
սինքն՝ այնպիսի՝ կեանքի մը, որ միատմանակ հողեկան եւ ֆիզիքական է,
անհատական եւ ընկերային, մասնատրական եւ ընդհանրական: Իր տիեզերքը
խուերու բարդումով չէ կազմուած նիւթէն մինչեւ Հողի, իրականութեան
միակ մակարդակ մը կայ: Հետեւաբար, մարդուն ջով տարբեր կեանքի մը
ձգտելու անհրաժեշտութիւնը չկայ: Թախիծը մարդուն կազութեանն է, որ
կը բխի, այլ՝ կեանքին խաթարումէն: Երբան նահանայ եւ միտքնի կեանքի
պատկերը, այնքան կը դժբախտանան անհատն ու ընկերութիւնը: Ձրաքեանի
կենսապաշտութեան հետ խոտոր չի համեմատի մահուան դաղափարը, ընդ-
հակառակն, իսկական կեանքի իտէպլը կ'անդրանցի նիւթական կեանքի մա-
կարդակը եւ անոր ուղղուած ձգտումը կը վերածուի «մահաբազմութեան»:
Աստուծոյ կամ Համայնին տանող ճամբան անպայմանօրէն կ'անցնի մահուան
հանդիցէն: Անմահութեան դաղափարը իմաստ եւ բովանդակութիւն կու տայ
մահականացու կեանքին, իսկ «երբ անմահութիւնը երազ մ'է, կեանքը տնայա-
հարութիւն մը կ'ըլլայ»(4): «Անէն ինչ մասնատրութեամբ միայն կը մեռնի
եւ անմահ ըլլալու համար պէտք է ընդհանուր ըլլայ»(5):

Անկախ թախիծին պատճառներուն իր տուած բացատրութեանն, կեան-
քը՝ իրբեւ տարուած փորձառութիւն, դառն է: Վարուժանի կեանքէն անբա-
ժան են ոլորտութիւնն ու յուսահատութիւնը. «Տրտունջ»ը, «Մարմն»ը,
«Լեւու»ը ցայտուն օրինակներ են:

1
Ոչ ոք գիտէ թէ ի՞նչ կերպ
Յուսահատութիւնն օրէ օր զիս մահուան հետ
Կ'ընտելացնէ, թէ կ'երբամ ի՞նչ մամբայով
Կեանքիս մոխիրն ես իմ ափն մէջ կըրնիլ. — (6):

Ունեցած է պահեր, երբ ձգտած է Նիրվանայի «Ղուբերուն».

Ուր ճակատէն կը ուրբբուի արեւուն
Խարանը պիղծ, կը լըւացուի ամէն տարր
Ու ամէն յօդ կը յաղթուի, կը թռչուի
Հոգին ազատ, հոգին մաքուր, մըտմելու
Գիրկն հանգիստին: — ...

Եւ երբ սուգուի այդ «Ղուբերուն» յատակը՝

... Լռութիւնն՝ իր պատրուած
Պատանքը վըրտա պիտի հիւսէ վերջստին(7):

*«Տըտունգէ»ը Եղիային ձօնուած Եւ տեղ-տեղ անո՛ր յուսահատութիւնն
Իսկ զերազանցող՝ Թախիծի կոթող մըն է. օրինակ մը տալու համար՝*

Ես իմ կեանքէն հալածուած՝ խուարից մէջ կ'արտատուեմ,
Այժմ հոգին քաղցն ունիմ. ծարաւն ունիմ Լէթէին.
Եւ օդն՝ երակըս շարժող, եւ լոյսն՝ այժերս կիտուածող
Ես կ'անհիծեմ... Եւ անա խելայեղուած կը գործեմ
Նիրվանայիդ աստղահեռ դուռն ու շեմն կը կըրծեմ(8):

*Իր նաժանկերուն մէջ ալ, Վարուժան յաճախ կը խօսի անձնական ան-
տունելի տառապանքներու մասին, կամ՝ շեղակամ վտանգաւոր դրութեանը:
Կը գրէ Դերեմիկին. «Տխրութիւն, մտատանջութիւն, ճամձրոյթ եւ յուսահա-
տութիւն, անա բաժինը երիտասարդ հասակին: Վիճակս է ցերեացան, միշտ
զերազրգւում: Ժամեր կ'ունենամ որ ես իմ թշնամիս կը դառնամ, ես ինձմէ
զրկեմ կը սուսկամ. եթէ այսպէս շարունակուի, ես ինձի հետ գէշ պիտի լծմ-
ցունեմ»(9):*

*Բայց Նոյնիսկ ամէնէն բարոյալքուած պահերուն մէջ, Վարուժան կը
յաջողի առնել հերոսական ուսում մը դէպի կեանքի, վերածնութեան գա-
ղափարը. «Լէտմշին մէջ կը տեսնէ սեփական մահուան յաջորդող «հրաշափ
յարութիւն» մը՝*

Ջուրիբուզ վրայ՝ իմ անձնասպան հոգիէն
Բողբոջած մեծ արիւնյուայ մուռուփար
Մ'որում արմատն ոչ ոք գիտէ թէ ո՛ւր է(10):

*Նիրվանայի անդունդին վրայ սպաննազին կերպով Թեքած Վարուժանի
յուսահատութիւնը չի դաճալիժիբ. ցաւը՝ յստակ եւ բացատրելի պատճառ-
ներէ ծագում առած, կը հունաւորուի իր արուեստին մէջ, ըլլալով ստեղծա-
գործական երկունք: Ստեղծողը պէ՛տք է որ ապրի մարդկութեան ցաւը, սե-
փական տառապանքներուն կողքին. նա՛եւ՝ պէ՛տք է որ տառապի ստեղծելու
աէթին մէջ ալ: Կը գրէ Զօպանեանին. «Ամէն շեշտի պէտք է որ սիրտը կաթիլ
մ'արին հոսէ, մինչեւ որ քերթողը իր գործին առջեւ յիսուօրէն կանգուն
հիւծի վերջանայ եւ իր յետին բառը տժգոյն շրթունքներում վրայ ոչ ոք կա-
րողանայ լսել: — Թեպէտեւ այս վերջնական պայմանը չէ մեծագոյն քերթող
մ'ըլլալու: Որչա՛փ կը նախանձիմ այն Անհասանելիներում որ բոլոր տարրերը
իրարու շարունակ միացուցած են»(11): Մասօթ է իր «Թաղամեքէ» իր արուես-*

տին մէջէն ինքզինք ժողովուրդին զգեծ տալու, նաեւ՝ խոստումը՝ «այս-
գայի մարգերուն նուիրել այնպիսի հզօր երգ մը՝ որ հայրենիքը ինձի պէս
արարած մը ծնած ըլլալուն գոնէ չզոյճայ»(12) :

Կը բացատրէ իր անցումը սեփական ցաւէն՝ ազգայինին. «Լուսնուցի
իմ սիրտս ու նախընտրեցի երգել ցեղին սիրտը, որուն բախումները կը զգայի
իմ մէջս, եւ երգերս դուրս կու գային օտար երկնիքի տակ... եւ կարօտի լա-
րովը միայն կապուած մեր երկրի հողին եւ մարդուն հետ»(13) :

Որքան ալ ժեծ ըլլայ ներկային ժխտականութիւնը՝ Վարուժանի զայն
կը յաղթահարէ դաւիթին դրականութեամբ. «սահասարակ ան կառած կը մը-
նայ որեւէ դրականութեան: Տակաւին ուսանող՝ եւ անձնական ժեծ դժուա-
րութեանց մէջ, 1907ին Կանտն կը գրէ. «Ի՛նչ փոյթ թէ ըզեզը թուրքերս
մէջ կը բռնուի, եւ սիրտը գրիչն ի վար կ'որումի, փռոտ հասարակութեան մէջ
յագնուրիւնը ի՛նչ փոյթ — ամառը մե՛րն է»(14) : Իր աղջնակին ծնունդին տ-
նիթով գրած գերթումներն մէջ՝ «Վարուժանիս», կ'ըսէ .

...եւ անդունդն եմ՝ որ կ'ըլլայ երգանիկ
Փռտուայի մը յոյսով .
Անապատն եմ, որ երկինքին կը ծրարի
Իր ծըլարձակ մէ՛կ յոյսով(15) :

Ներկայի ժխտականութեան եւ ապագայի դրականութեան, առաջինին
իրեն ապրուած իրողութիւն, եւ երկրորդին՝ իրեն հաշու եւ սկզբունք հա-
մադրումը՝ Վարուժանի հանճարին վայել իրագործուած մըն է: Ընդէս այս-
պիսի կացութիւն մը կրնայ ենթական առաջնորդել վիպապաշտութեան կամ,
առնուազն խղովի՝ տուեալ իրականութեան հետ: Սակայն մէկ «փռտուայի»
լոյսը բաւական է փարատելու «անդունդին» արտօնութիւնը, եւ մէկ ծիւլ՝ ա-
նապատին ամուրթիւնը :

Նման կեցուածքներ բանաստեղծական պատկերներու սահմաններէն շատ
անդին՝ ժեծ իմաստներ կը փոխանցեն: Անբազմալի կացութեանց դարձանու-
թի միջոցները Վարուժանի կը գտնէ իրենց իսկ մէջ: Ապագային սաղմը ներ-
կայի տառապանքին մէջ է, «փոստուան» «անդունդին» է, «ծիւր»՝ «անա-
պատին», ծարղկութեան «Արշալոյսը»՝ «տառապանքի դարբերուն», «ամա-
ռը»՝ «յողապանքին», «նունուֆարը»՝ «անձնապան հողին»: Համա-
նապաշտական համակարգին մէջ դրականութեան կարելիութիւններ չկան
մարդուն դիմաց: Մարդուն կացութիւնը անբեկանելիօրէն սահմանափակ է,
համայնապաշտին տեսանկիւնէն՝ «փոստուան» համայն իրանին է, ծաղր մը,
որմէ ետք աւելի կը թանձրանայ «անդունդին» խաւարը. «անապատը»՝ իր
անապատութեամբ՝ այնքան տափակ է եւ դատարկ, որ միակ ծիւրը կու գայ
չեւտելու իր երկրայնութիւնը՝ երկնքին փառքին հակադրուած :

Լոյսի իմացքը ուրիշ հետաքրքրական նիւթ մըն է Վարուժանի կեն-
տապաշտութիւնը տարբերող համայնապաշտներու անդրապաշտութիւնէն :

Իրականութեան Վարուժանի տեսողութիւնը միջօրէական է, այսինքն՝
ապաստուելի. «հետեւարար» իր համակարգին մէջ լոյսը ներաշխարհէն ըմ-
բռնուած «Անհունիւն մշանը» չէ, այլ՝ կեանքի խորհրդանշիւր: Լոյսը այն է,
որ առատօրէն կը բաժնէ ինքզինք, ինք միայնով անբաժան՝ իրեն սկզբունք:
Կ'իջնէ սեղաններուն, հողիներուն, հիւղակներուն, նոյնիսկ՝ «գերեզմաննե-
րուն»(16) : Լոյսը կ'ըլլայ ցորենի գէշերը, «լինացած» «հեղեղ» «բրտիմէի»
եւ «յոյսի»(17) : Լոյսը, իրեն կեանքին եւ իմաստութեան նշանը՝ կ'ըլլայ

մայրը՝ «մնայլ Տանթէններուն եւ շնկայ Համերներուն: Լոյսին ընկալու-
մը կամ ճանաչողութիւնը մեքենական չէ. անոր «ուզիմ» «սալարկուած» է՝

Կայծաւորով, ցամկուած՝ մուրտի փուշերով,
...շեղ է ճառագայթի մ'անցումակ:

եւ ինք՝ «սրտին» «սալարք» «գատարկ», կ'երթայ գէպի «աղբիւր լոյ-
սին»(18):

Համայնապաշտին համար լոյսը Հոգիին կամ Աստուծոյ կամ Հոմայ-
նին յատկանշին է նիւթին մթութեան հակադրուած: Լոյսին ամբողջական
ուզումը՝ նիւթական մակարդակին վրայ առնուազն, անկարելի է. բնութեան
մէջէն, լոյսը Համայնին յայտնակերպումն է. մինչդեռ, Վարուժանի համա-
կարգին մէջ՝ լոյսը Կեանքին նշանն է, անոր եւ ոչ թէ «կնդր»ին յայտնա-
կերպումը:

Միւթիք-համայնապաշտին համար, «Լոյս»ին մէջ խտացուած կեանքը
կամ յաւերժական կեանքը կ'ենթադրէ նիւթական գոյութեան վերացումը:
Ո՛րքան տաղնապի անհասարձ էր տիեզերական կենսաբազմութեան դէմ գտած
պատուարներուն պատճառով, այնքան կը մեծնայ իր յուսահատութիւնը եւ
կը մղուի ընդունելու մահուան դաղափորը: Ձերբազատուելով իր մարդկա-
յին գոյութեան պարտադրած կաշկանդումներէն, մարդը կը յուսայ միանալ
տիեզերական կեանքին: Համայնապաշտական որեւէ համակարգ կը փլի՛ հրը
անկէ վերցուի անմահութեան իմացքը:

Վարուժանի համար անմահութիւնը մարդկայնութեան լրումն է եւ ոչ
թէ անոր վերացումը կամ լուծումը աստուածային գոյակերպին մէջ: Այս-
պէս, Վարուժանի մարդը կ'ըլլայ գերմարդ, իսկ իր Աստուածը կամ աստ-
ուածայինը՝ պարզապէս մարդկայնի՛ն կատարելագործումը: Յիսուսի կեր-
պարին մէջ աստուածայինը չէ, որ մարդկայնացած է. մտ'րոն է, որ ստեղ-
ծած է իր աստուածը իր պատկերով, ըստ իր իտէլիան: Հոմերը, Քիւնտարը
եւ Նասային գերմարդեր են, որոնք զարգացուցած են մարդկայնութեան այն-
պիսի՛ լայն իմացքներ, որ յաջողած են Մարդը հասցնել աստուածազայն մա-
կարդակի:

Ուրեմն՝ «աստուածայինը» Վարուժանի մտածողութեան մէջ քանակա-
կան ստորոգութիւնն է եւ ոչ թէ որակականորէն տարբեր գոյակերպի մը յատ-
կանիլը: Մարդը մարդորէ՛ն կ'աստուածանայ, երբ կը հասնի իր Երազին
բարձունքին: Այս Երազը իրմէ իսկ ծնած, բայց զինք գերազանցող ձգողա-
կանութիւն մըն է: «Բնզաս»ին մէջ Վարուժան միայն բանաստեղծութեան
թոփշօրէն մասին չէ, որ կը խօսի. իր ներլնչումին առանցքը մարդկայնական
մտածումն է, արուեստի ճամբով՝ մարդուն ինքնախրագործումին մասին է,
որ կը խօսի: Բանաստեղծութիւնը վերացական գեղեցկութիւններու երգը չէ,
այլ՝ «Կեանքի երգը», իսկ Կեանքը Մարդո՛ւն Կեանքն է, ուրեմն՝ աստուա-
ծայինի, աստուծոյ եւ անմահութեան իմացքները՝ իր կենսապաշտական աշ-
խարհա՛ստեղծէն դուրս, իմաստ չեն ներկայացներ: Ուրիշ խօսքով՝ Մար-
դուն եւ Մարդկութեան կեանքէն դուրս՝ ոչինչ կայ, որուն կրնան առնչուել
այդ իմացքները:

Որովհետեւ «բանաստեղծութիւնը բանաստեղծութիւն է», այս ու-
րեմն՝ Վարուժան չէր կրնար իր տեսակէտները տալ փիլիսոփայական տա-
րազներով, կամ՝ «իմաստասիրական բանաստեղծութիւն», նոյնայն պէս: Իր
որոնդրած կենսապաշտական աշխարհա՛ստեղծէն խորթ է տեսականութիւ-
նը, փոխարէնը՝ Հարազատ է գիւցաղնականութիւնը: Որովհետեւ վերացա-

կանութիւնը կը դաւանանէ իրականութեան՝ անկէ դողնալով իր բուն իսկու-
թիւնը, այսինքն՝ կեանքը, Վարուժան ամէն բան կը վերադարձնէ կեանքի՝
սկզբունքին, ուրեմն՝ իր կենսապաշտութիւնը կ'ըլլայ հակադրոյթ բոլոր հո-
գեպաշտական, ժամանակ. համայնապաշտական դրոյթներուն:

Անձնական մակարդակի վրայ սակայն, Վարուժանի կենսապաշտութիւ-
նը դիպչազնական ստուամ ժըն է՝ հոգեկան եւ իմացական ուժերու զոսպանա-
կումով, յաղթահարում մը կացութեան: Հակառակ կրած տառապանքին տ-
հազմութեան, Վարուժան՝ իր երզած «Մարդկութեան» պէս «ողջակէզ» եւ
«հերոս»(19), կը յաջողի ժպտիլ իր «կեանքի երզմին մէջ, կը ժպտի բայց
մեռնող «վիրաւոր»ին պէս՝ «անդարտօրէն», «անհունօրէն»,

Մեծ, ինչպէս մեծ է խաւարում արեւուն(20):

Կը մնայ իր հրաշալի «երազը», «Կարմիր հոգ»էն ծաղկած «Կարմիր կա-
կաշը», «արձաբը զոյգած» «սպազայ» «երարալիսի մը»(21):

ՍԵՂԱ Գ. ՏՆՏՈՅԵԱՆ

(Հատուած՝ «էջեր Արեւտախայ մտածումէն» դործէն)

- (1) Եղիա Տեմբրեպետեան, «Ինչ կը սպասէ մեզ — Նիւթ եւ բարեւոյնութիւն», «Երե-
րադէան» (Պոլիս, 1887, յօդուածը՝ էջ 97-101), էջ 97-98:
- (2) Գեղամ Գ. Գալաֆեան, «Իրականութիւն եւ միտք», «Մարտի» (Պոլիս, Փե-
տրոպ, 1922, յօդուածը՝ էջ 60-62), էջ 60:
- (3) Տ. Զրաֆեան, «Երեւոյն», «Երեւոյն» (Պէտրոպ, «Յարալեզ» հրատ. 1974,
319 էջ), էջ 178:
- (4) Նոյն, էջ 147:
- (5) Նոյն, էջ 83:
- (6) Գ. Վարուժան, «Հրուժ», «Հեթանոս երգեր», Երկեր (Յատուարմ եւ խմբ. Մար-
տի Յարոցի, Երեւան, Հայպետհրատ, 1946, 477 էջ), էջ 342:
- (7) Նոյն, էջ 343-344:
- (8) Գ. Վարուժան, «Տրտմանք», «Հեթանոս երգեր», էջ 299:
- (9) Նամակ Դ. ձիգմանին, 18 Օգոստոս, 1907, Օտքալիք, Լուրս, «Նամակներ»
(Երեւան, «Հայաստան» հրատ., 1965, 374 էջ), էջ 117:
- (10) Գ. Վարուժան, «Հրուժ», «Հեթանոս երգեր», էջ 344:
- (11) Նամակ Ա. Զօղաճեանին (1 Յունուար-12 Փետրուար), 1908 Կանա, «Նամակներ»,
էջ 131:
- (12) Նամակ Թեղիկիին, Նոյեմբեր 1908, Կանա, «Նամակներ», էջ 168:
- (13) Նամակ Վարդէս Աստրոնոմիին, 26 Մարտ, 1914, Պոլիս, «Նամակներ», էջ 207:
- (14) Նամակ Հայր Արիստակէս Բաղաճեանին, 5-6 Մայիս, 1907, Կանա, «Նամակ-
ներ», էջ 105:
- (15) Գ. Վարուժան, «Վարուժանի», «Հեթանոս երգեր», էջ 243:
- (16) Գ. Վարուժան, «Երգ», «Հեթանոս երգեր», էջ 200-201:
- (17) Գ. Վարուժան, «Մայրեր», «Հայերն երգեր», էջ 287:
- (18) Գ. Վարուժան, «Երգ», «Հեթանոս երգեր», էջ 290-292:
- (19) Գ. Վարուժան, «Միջ դար», «Հեթանոս երգեր», էջ 357:
- (20) Գ. Վարուժան, «Վիրաւոր», «Յեղին սիրտ», էջ 177:
- (21) Գ. Վարուժան, «Վազուհի բողբոջներ», «Յեղին սիրտ», էջ 101:

ՆԱԽԱՆՁԱՆԴՐՈՒԹԵԱՆ Ը Ն Ծ Ա Ն . . .

... Զեք շեմեր գերթուածներուն մէջ ընտրու-
թիւն մ'ընել ինձի գոուար եզու. եթէ պատկեր
ճարտարաւէտ շարք չի՞մ եզեաներ՝ պիտի ըսեմ
թէ զճարտարու զուար կը կամարեմ, եւ կը սի-
րեմ հոգեւին, ՎՄԵՈՒՅԻ, ՎՄԵՈՒՅԻՆԵՐԵՐ, ՎՄԵ-
ՊԵ, ՎԳԻՆԵՐԱՆ ԱՅՈՒ ԻՐ ԲԱՐԵԿԱՆԵ, ՎՍՊԻՆԵՐԵՐ,
ՎՄԱՅԻՆ ՍԻՄԵ, ՎՄԱՅԻՆԱՍԵՐ, ՎՄԱՅԻ ԼԱՅՍԱ-
ՍԱՄԻՆԵ, ՎՄԱՅԻՆԱՍԵՐ, ՎԳԻՆԵՐԻՆ ԱՆԵ, ՎՄԻՆԻՍԵՐ,
ու հոգեթով ՎՄՕՐԵՍ ու ՎՄՕՐԵՍԵ. եւ
կան զեռ ուրիշներ՝ որոնք կարողացածից աւելի
պիտի նրբութիւն՝ որչափ որ աբեւ ու սէրը ժարդ
էսկին սնկրածնու ըլլան: ՎՄԱՅԻՆԵՐ, որ ուրիշ
հրաշակերտ մըն է՝ կարգաւէ վերջ՝ զարմանալի
զուարդիպութեան մը Կանգիպեցայ. ՎՄԱՅԻՆԵՐ
արցունքները աւանդ գերթուածից մ'ունիմ,
կարծեմ ինձ արտի առաջ վենեակի գրուած, զԵՒ-
ԽԱՍԵՐ զեղեցիութիւնն որ արցունքներու եւ աստ-
ղերու նմանութիւնն է՝ Զեքիին հետ ճիշդ նայն
է: Մարդկային մարդի կարողութիւնն մըն է, թէ
անգիտակից զողութիւն. չեմ գիտեր. բայց ահա
սապակի ձեռքերու զեղց զարկած զեռ Զեք առ-
ջեւ կը բերեմ զԳԻՆԵՐԵՐԻՆ ԳԵՐԹՈՒՅԻՆԵՐ:

Երբ միջոցին մէջ տեղի տուած չէր
'իւն անձնաբերմն այս տիկնոջիցիս,
Եւ կարծեմ Վստուած բաժն մը կը փնտար
Որ զարմած ըլլայ զանձնաբերի վերջին:

Արդ Ան շարքեցու միջոցը մեկէն
Եւ եւմ իրմ գառ բաժն մը շարքուտ,
Եւսքիւն մ'ուզեց իր էութեանն. —
Իր էութիւնն իր արծազագեցն եզու:

Յետոյ զամառայով, արիւտը ու ամառ,
Լամբը լրանութեամ եւ կոյր ուղեցիմ՝
Ան իրանցմէ ի՞նչ մ'ուզեց, եւ ամառ
Ինձիցիսմն տըրին կամ բաժն շարքից:

Երբ անհուն այսպէս գառարի գրուտ Ան
Իր մէջ ըզգայ խոր եւ զանազան գառ,
Ու լրանութեամ վրայ եւ անձնաբերմն
Յուսահատութեանն ազելի մը լացու:

Վարձ իր արցունքներն ուզածը տըրին՝
Շլուզով մէջմէկ ասուկը երկեմքիմ. —
Եւ մարդու նրմնն ճեւ: Վստուած այ
Մընիքարտիւտ եւմար ուտա լայ: —

Արշակ Զպանեանին ուղղուած Վարուածն 22
Մարտ 1906 թուակեր նամակէն առնուած են ջովի
սիւնակին նի.թերը, որոնց մասեան խառնուած
զային իրաւութեան եւ երկունքի արդատաւոր ըն-
թացքին վրայ կ'արժէ պահ մը կանգ առնել:

Հարցը, անշուշտ, չի վերաբերիր զբաղան
կարկառուն զէմքերուն կամարումը արդէն նուա-
ճած գասնչորումեայ Վարուածնի մարդկային
արժանիքին եւ աւագ իր զրէնչքոր անորդի պար-
ցունքով ու արիւնով շահուած պատկին, որոնք կը
պարզուին ընդամենը հինգ տարի ետք, երբ հոս
երեւոյց ՎՄԱՅԻՆԵՐԵՐ արցունքները պիտի դառ-
նան ՎՄԱՅԻՆԵՐԵՐ լացը ու բանան ՎՄԱՅԻՆԵՐ
գերմու երկրորդ բաժնը:

Հարեանցի ահարկն անգամ անձնապէս կը
կաստատէ մէկէն միւր արձանագրուած Վարուած-
նի զարդացումը՝ բառային, պատկերային, երա-
ժշտական թէ իմաստային բոլոր առումներով:
Նինք առանձին մէջ՝ հինգ-վեց քառերու փոփոխու-
թիւն, նախաձեռնից արդի գործանքի մասնաւորու-
մը եւ վերջին տողին արուած նոր կատարը՝ ըն-
դամենը այս, որ սակայն բանաստեղծութեան
կ'ընծայէ ինձ զեղեցիութիւնն մը:

Նման արդեւեղեցիու նախապայմանը՝ լացը,
զոր լաւ կը ճանչնար Վարուածն, այն աստիճան,
որ բանաստեղծին, այսինքն՝ իր փորձառութեան
ընդմէջէն կ'ըմբռնէր անգամ մեծ ունչութիւնը
աստղերով ու ձայներով հրաշակերտած Վստու-
ծոյ ծնուցիչ ուժին զազունիքը:

Վարուածնին կենսագրական շրտեր արժա-
նագրած անձերը՝ Տիկին Վարուածն, Սիրունի,
Առաջնի Գասրիկ եւ Ուրիշներ յաճախ անդրադար-
ձած են մեծ բանաստեղծին ստեղծագործական
պատասխանատուութեան եւ կենսագրական մասն-
ւորմանութիւններ փոփոխեցան ընթերցողին:

ՎՄԱՅԻՆԵՐԵՐ արցունքներուն եւ ՎՄԱՅԻՆԵՐ
լացին ասորեթութիւնը եւ ընդհանրապէս սեղա-
նին առջեւ անգնելու Վարուածնի սրբազան ապ-
րումը յաւաստեալ ըմբռնելու կամար՝ հետաքրքրա-
կան պիտի ըլլար նշել մէկ-երկու կաստատում:

Տիկին Վարուածն կը գրէ.
Վարուածնը անխնայ աշխատող, երկունքը
կ'ամաճեմանար իր սննակը, լաւ ու ամառն զը-
րելով, արագրելով եւ զատարելով իր գործե-
րը, միմեւ կէս զինը եւ յաճախ միմեւ տըշա-
լայ:

Երբ ստեղծագործութեան ժամերուն կարծես

ԱՍՏՂԵՐԸ

Աստղերը լուս ցաւեր են
Որովք կ'այրին յաւանեմ,
Արցունքներ չիմք բազմութեամ'
Կայտած երկնի բիրտն:

Գիշերին ծաղը ովկիւմ
Բացուելով քաղցրօրէն,
Աստղերը լուս ցաւեր են
Որովք կ'այրին յաւանեմ:

Անուսին մութ խորքին,
Անբաւ հերբաւժ յուտրօքնամ,
Խորհուրդ աւ սուց կը ծորն.
Աստղերը լուս ցաւեր են:

ԱՐՇԱԿ ԶՕՊԱՆՅԱՆ



Գ. Վարուժամ, գործ՝ Արք. Զամբակեանի

ԱՍՏՈՒԾՈՅ ԼԱՑԸ

Գնդեցիկ յամերը
արցունքի մէջ կը ծնանն:

ՌԵՃԱՆ

Երկունքի մէջ ըլլար, ծուխի ճուլաներու մէջ եւ
իր մուսամերուն հետ գրեթէ նայնացած կը գրտ-
նէի զինն:

Այս մասին նշեցան յասկանչակոն վկայու-
թիւն մը ունի Յ. ձ. Սիրունի:

Էնր՛ւ՛ մնացած վերջին հերբաւժն է «Ար-
ժիւթ»՝ 1916 Մարտին գրած: Ամ վերջին էջը
կազմեց «Հաջին երգը»-ն:

Գնդն են այդ հերբաւժը ստեղծելու համար
իր քրտ փորձերը բարձրին վրայ. անո՞ք կը
պատմեն, թէ ինչպէս հերբաւժը կը յարչկէր իր
հազի՛մ անոր խորքերին խնկաւ համար գնդեց-
կայրիւնը եւ մտքին աւ ձեւ տայաւ համար տ-
նար: կը պատմեն անո՞ք, թէ ինչպէս կը տակէր
սա ինքզինքը՝ հոգւայն մէջ ծլած տեսիլքը ստեղ-
ծելու եւ քանդակելու համար:

Տարբեր աշխարհներ, ձեւեր, չափեր, լեզու-
կան տարբեր Հանքեր յայտնաբերելու առջնու-
թեամբ յարանորոգ կարողութեան տիրաբոյժին
անձնաւորութիւն մըն է Վարուժամի մեր մէջ, որ
ստեղծագործական արքային հետ վարակեցաւ բա-
ւոր վաւերական արուեստագէտներուն պէս, սքը-
րագին սիրով ու զուարերութեամբ, շփոտակցաւ
հերկնիտան ընծաներուն ու շրտանուեցաւ սեղա-
նէն, մինչեւ որ նոյն ընծաներուն մէջ շրտաւ ձեռն
մը իր հազի՛ն, յաներձական արքայ մը իր սքը-
նէն, բերեղացած ցուր մը իր մտքէն, ինչպէս
կը պատկանէր իր աշակերտներուն:

Ռողդաստութեան Համար կու տանք թի՛ վե-
տանոյ արցունքները տարբերակին հետ ինչ-
տակուսեալ Չօպանեանի վեպերը քերթուածը եւ
թէ վեպանոյ յարցը, որ կը Հանդիսանայ ստեղ-
ծումը կատարելութեամբ պատկերու իր ընծաներ
մը մասին վկայող փայլուն նմուշ մը:

Երբ միջոցին մէջ տեղի տուած չէր
Դեռ Ոչնչութիւնն այս Տիեզերքին,
Դեռ կարծեմ Աստուած բան մը կ'որոնէր՝
Որ դարման ըլլայ տաղտուկի վերջին:

Հոջան ըրաւ Ան միջոցը մէկէն,
Եւ հոն իր՛է՛ կատ քան մը յգտաւ.
Հոպիւն մ'ուպեց իր էութենէն.—
Եր էութիւնն իր արձագանգն եղաւ:

Յետոյ դառնալով, տխուր եւ մորմոք,
Համր Լուսեան եւ կոյր Ոչնչին՝
Ան իրենցմէ ինչ մ'ուպեց, եւ անոնք
Ինքզինքնին տուին կամ քան շտովին:

Երբ Անու՛նն այսպէս դատարկ գտաւ Ան,
Իր մէջ ըզզաց խոր, դառնակակիծ ցաւ.
Եւ Լուսեան վրայ ու Ոչնչութեան
Յուսահատութենէն սրտաբոյն լացաւ:

Վարն իր արցունքներն ուզածը տուին՝
Կապնելով մէյ-մէյկ աստղեր երկնքին.—
Եւ Բանաստեղծին նման Աստուած ալ
Որպէսպի ստեղծէ, հարկ եղաւ նախ լալ:

Գ. ՎԱՐՈՒԾԱՆ

Դ Ա Ն Ի Է Լ Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն

Իմ պապերի վսեմ, հզոր հպարտութեամբ,
 քո հեթանոս սրտով, քո եղբգմեայ գրչով,
 Քայլում ես դու ահա — համեմարիդ մամանչով —
 Մեր կարմիր դպրութեան երկինքներով ամամայ:

Ատելութեան ահեղ կայծակի սաստկութեամբ,
 Տարերային, բարբոս քո երգերի շաչով՝
 Անցար դու Մոլոխի ֆազաֆների միջով
 եւ հասար գիւղ, ուր հացն երկնում են պարզութեամբ:

Դու մեզ հետ ես, ըմբոստ, երիտասարդ վարպետ,
 Թէն քո շիրիւնը անապատում անհետ —
 Կորաւ ընդմիջտ — անհող, անգիր, անյիշատակ, —

Սակայն ժողովրդիդ բարսխուն կրծքի՝ տակ —
 Կայ շիրիւնդ — ահա — կանաչ եւ ցօղաքարով:
 Օ՛, Դանիէլ վարուժան, գուտամապետ դու քո՛ւրմ:

ՍՈՂՈՄՈՆ ՏԱՐՕՆՅԻ

Ք Ե Ր Թ Ո Ղ Դ Մ Ե Ծ

Ես ունէի ժառանգ մ'անցին՝ մըտֆիդ ռակին.
 Մի նաւակ էր, որ բաժանման մըշուշ ժամում՝
 Մուգայ իմ մօր արցունքին մէջ եւ տղնակին:

Որում համար մերթ լայու չափ կը տըխրիմ ես.
 Բայց տըրտիս մէջ իր սերմանած խօսքերն անհուճ
 Դեռ կը ծըլին՝ հայրենական ցորենին պէս:

Գիրքդ բարի, զըրկած էիր Բըրգնիկ գիւղէն.
 Այնպէս շէն էր՝ միրգի կոզով կարծես լինէր.
 Ես կարդացի՝ քրոջդ լեզուով անյագօրէն:
 Այն օրերում իմ առաջին երգն էր ծըմեր:

Անոր փոխան ունիմ հիմա երկու մտտեան —
 «Յեղին սիրտը» եւ «Հեթանոս երգերքդ մեծ
 Վըբան կու լան քո ահաւոր խաչելութեան
 Եւ իմ մըտֆին, որ քննարիդ աշակերտեց...

ԼՈՒԹՅԻ ՄԻՆԱՍ

digitised by A.R.A.R.@

Ն Դ Ի Մ Ա Ք Ս Ե Ա Ն

ԱԶԳԱՅԻՆ ՄԾԱԿՈՅԹ

ԹԷ ՄԾԱԿՈՒԹԱՅԻՆ ԱԶԳ

(ՎԱՐՈՒԹԱՆԻ ԽՈՐՀՐԴԱՊԱՇՏՈՒԹԻՒՆԸ
ԸՆԴՄԷՁ ՎԻՊԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ ԵՒ ԻՐԱՊԱՇՏՈՒԹԵԱՆ)



Վարուժանի բանաստեղծութիւնը անգամ է իրապաշտութեան կարճատեւ ժամանակաշրջանէ մը: Իր իսկ խոստովանութեամբ, սակայն, վիպապաշտութիւնը եղած է բանաստեղծական իր ողորմաներուն ենթակայական մղիչ ուժը, ներշնչումին թափ տուող զգայնութիւնը:

Եւ թէ եւ իրապաշտութիւնը զարաշարձիկ իրազրութիւններուն, ինչպէս նաեւ ազգային մտահոգութիւններուն աւելի կը համապատասխանէր, իբրեւ «ԻՊ» կը գրէ՝ եւ «ԻՊ»-ը կը գրէ՝ հարցումներուն պատասխան, Վարուժանի իսկ խոստովանութեամբ, վիպապաշտութեան մէջ պէտք է փնտռել մեր ժողովուրդի զգացական լարերը յուզող, զայն համաաբուժ պայքարի բովին մէջ առնող եւ անոր զաղափարական աւել ներաբնող զբական սեռը:

Իրապաշտութիւնը, իբրեւ առարկայական իրականութիւններն ու ընկերային իրողական պայմաններն ու կացութիւնները ներկայացնելու միջոց եւ եղանակ, առանձինն անկարող էր թելադրականութիւն փոխանցելու. պէտք է ծանուցէր Արեւելքի ժողովուրդներու խառնուածքին՝ յատուկ եւ յատկապէս մեր ժողովուրդի զարգացման մակարդակին համապատասխան արտայայտչամիջոցով ու բովանդակութեամբ, որպէսզի կարենար իր նպատակին ծառայել:

Այսուամենայնիւ, յայտարարուած ու խոստովանուած այս ժտաեւեւաւորմանը անդին, իրապաշտութիւնը վիպապաշտութեան շաղկապող, բիրտ իրականութիւնը տեսլականով մը ծածուկ եւ այդ տեսլականի իրազորման մը՝ զուժ տուող զբական սեռ մը որդեգրեց Վարուժան: Խորհրդապաշտութիւնը, որ մնայուն ներկայութիւն է իր զբականութեան մէջ, յատկապէս «Հնարան» կրկնաբանէն հտեղ:

Պիտի նկատենք, որ Վարուժանի առանձնայատուկ խորհրդապաշտութիւնը միտմանակ կամուրջ մըն է անցելապաշտութեան եւ ապագայապաշտութեան միջեւ, անցնալի ողնկոշումին կ'ընկերանան նաեւ ժարգարէացու-

մի ճիգեր, բայց միաժամանակ խորհրդանիշները էապէս խորհրդանիշներն են ապրած իր ժամանակի իրապաշտ արժեւորումներուն, կարգ մը արժէքներ ու կենցաղաոճեր հիմնադրուած շրջան միտում մը կ'երեւի անոնց մէջ եւ, ի վերջոյ, գեղարդիտական վերծանումն են ժամանակի տիրող հոսանքներու ապագայ առաջադրանքներուն:

Վերջապէս, տրուած ըլլալով, որ Վարուժանի բովանդակ բանաստեղծութիւնը դրուած է էապէս մարդկային-ազգային հէնքի մը վրայ եւ միջազգայնականութեան եւ ազգայնականութեան պիտակներ կը փակցուն անոր անունին ըստ կամս, կ'արժէ հարցին անդրադառնալ հետեւեալ տեսանկիւնէն.—

«Ի՞նչ կը գրէ՞ եւ «ինչպէ՞ս կը գրէ՞» հարցումներու շրջափոխ մէջ, նաեւ դնել «ինչո՞ւ կը գրէ՞» հարցումը:

Այս հարցումին պատասխանէն կտրուած պիտի ունենայ այն, թէ Վարուժան ազգային մշակոյթի մը կերտումին նպատակը կը հետապնդէր, թէ մշակութային ազդի մը, եւ թէ՛ ի՞նչ կը նշանակէ միջազգայնականութիւն:

ԽՈՐՀՐԿԱՊԱՇՏՈՒԹԻՒՆ

Ամէն շղթայ կը բեկտի
Եւ կը փլչի ամէն բանս
Հոսպարակին մէջտեղ կրակի կը տրտի
Կառափնարանն՝ հերոսներուն արիւնէն
Վարդակարմիր եւ ճարպոս,
Եւ իր մեծ բոցն երկնոցը
Ամբոխներուն գիտակցութեան կ'ըլլայ ջանս:

Գ. ՎԱՐՈՒՅԱՆ

Հնրասր... ամբոխներում գիտակցութեան կ'ըլլայ ջան...

Արդէն իսկ խորհրդապաշտ արուեստագէտի գիտանկիւնը որդեգրած Վարուժան՝ հերոսի կոչումը այլաբանօրէն այսպէս կը նոյնացնէ բանաստեղծի կոչումին եւ միաժամանակ կը պատասխանէ երեք հարցումներու.

— Ի՞նչ, ինչպէ՞ս եւ ինչո՞ւ կը գրէ:

Այս յոտակ դիրքին հասնելու ճամբուն վրայ ապրուած անոր երկընտրանքները մաս կը կազմեն դրողական տարերքին, բայց նաեւ հեղինակին կրած յուսախարութիւններուն, յուսալքումներուն, տազնապներուն եւ, թանգրուող մշակոյթի մը ու քաղաքակրթութեան մը աստիճանական փոփոխումին հետ, անձնապէս նաեւ փոշխանալու, արժանաւորութեան զգացումի կորստեան տարերքները կ'երեւին Վարուժանի դրականութեան մէջ:

Ինչո՞ր յիշեալներուն արտայայտութիւններուն ընդմիջաբար կը հանդիպինք Վարուժանի ամէնէն հասուն ժամանակաշրջանի դրականութեան մէջ անդամ: Բայց այս պարագային մեզ չաւարդողը խորհրդապաշտութեան մէջ գրողական արտայայտութեան ամէնէն կատարեալ մեք գտած ըլլալու Վարուժանի փոխընտրութիւնն է:

Գրողի իր ներքին պատակտումները եւ անձնականի, ազգայինի եւ միջազգայինի միջեւ ընտրութիւն մը կատարելու անոր դժուարութիւնները խորհրդապաշտութեան նիւթ գարձնելու առիթ կ'ունենանք դեռ:

Վարուժանի գրականութեան խորհրդապաշտական ժամանակաշրջանը կը սկսի «Հեքամոս երգեր»էն. եւ թէեւ «Սարսուռ»-ու եւ «Յեղիմ սիրտ»-ին մէջ կը զգացնէր գրական այս դարոցին հանդէպ իր նախասիրութիւնը, այս հանդրուանէն ետք է, որ մնայուն ներկայութիւն կը դառնայ Վարուժանի գրականութեան մէջ:

Ներկան իր մերկութեան մէջ ներկայացնելու աղջկնային առօրեայ թեման ու լիկնանքի հետեւանք չէ Վարուժանի խորհրդանիշներու եւ այլարտանութեանց դիմելու ընթացքը: Ոչ այլ՝ արդիւնքը բայարձակ անցելապաշտութեամբ մը, հեռաւոր անցնալի ու միջնադարու կերպարներն ու կենցաղակերպերը ներկային մէջ վերապրեցնելու ճիշդ մը, այլ, ազգային թէ միջազգային առումով, անոր գրականութեան մէջ կ'երեւի ժամանակաշրջանի ոգիին մէջ անհրաժեշտութիւններու ժառանգումին, այդ անհրաժեշտութեանց թելադրականօրէն փոխանցումին ձգտումը: Մա'նաւանդ՝ որ Վարուժանի գրականութեան մէջ բազմաթիւ պատկերներ, իրրեւ ընչանք, խորհրդանիշ եւ պատկեր, թելադրուած են ժամանակակից իրադրութիւններէ:

Անգամ մը որ հեղինակը այս փոխընդունութիւնը կատարած է, բովանդակութիւն (contenu) եւ ձեւ (forme) անշատ իրականութիւններ ըլլալէ կը դադրին այլեւս: Ժամանակի անցեալը, ներկան ու ապագան նոյնպէս գոյակցութիւն մը կը հաստատեն գրողական արարքին մէջ: Հեղինակը ինքը կը նոյնանայ գրողական արարքին, ինչպէս նաեւ ժամանակաշրջանի շոտոտային իրադրութեանց:

Ժամանակաշրջանին կը պահուէր Ղայարկում, գաղափարական ջերմուսնութիւն, մղում: Եթէ Արեւմուտքի մէջ մարդը զմեքենայի գոհ, մեքենականօրէն գործող արարած մը դառնալու սկսած էր, ապա Արեւելքի մէջ դարաւոր բունասիրութեան առաջացուցած ստրկամտութիւն, ճակատագրապաշտութիւն եւ սովորածուական թմբիկ կը տիրէին:

Այս պայմաններուն մէջ, չարիք են մեքենան եւ բունասիրութիւնը հասարակապէս: Իսկ գեղեցկութիւնը հինէն ի վեր եղած է բարիի եւ արդարութեան համաօր: Եթէ չարիքը արժատարիւ պիտի ըլլայ, անհրաժեշտ է նախ ներքին մղում, Ղայարկում եւ գաղափարական ջերմուսնութիւն, հաւատք՝ լուսազոյն ապագայի մը նկատմամբ, եւ աշխատանք, պայքար՝ այդ ապագան իրագործելու համար:

Այսպէս է, որ Վարուժան նայուածքը անզարկ կ'աւղղէ ոչ-հայկական դիցի մը, — Նեմեսիսին, արդարութեան, գեղեցկութեան, զօրութեան եւ վրէժի աստուածուհիին, որ իր Զօրութեամբ պիտի վանէ տիրող զառեղծութիւնը եւ Գեղեցկութիւնը հաստատէ: Իսկ գեղեցկութիւնը հանձնէ է, որ անուանց ցաւի չի կրնար ստացուիլ եւ որուն համար զոհուիլ, զոհեր մատուցանել անհրաժեշտ է, ուրիշ եւ՝ «Ծառն հաճոյքիմ եւ հաճոյքը ցաւիմ» արտայայտութիւնը:

Այնքան՝ որ նոյնանալով Նեմեսիսի կերպարին, Վարուժան պատրաստակամութիւն կը յայտնէ մերուիլ գարու տարեբային շատին, որպէսզի «կիսամէք շրթունքի (ն) վրայ լուծանի» եւ «մրրիկիմ հետ մաքաւի»:

Ժամանակաշրջանի երկունքին այսպէս մերուած խորհրդապաշտ քանաստեղծ Վարուժան հնթակայ է երկու օրինաչափութիւններու.

- 1) Բանաստեղծութիւնը տիեզերքի անհատական ընկալման գեղարուեստօրէն իմաստաւորման արդիւնք է:
- 2) Այս անհատականը արտայայտութիւնն է.
 - ա — Ժամանակաշրջանի գեղարուեստական իւրայատուկ մթնոլորտին,

Ի — Իսկ զհղարուեստական իւրայատուկ այս մթնոլորտը ուղղա-
կիօրէն կ'առնչուի զհղազիտական ըմբռումներու, բայց անուղղակիօրէն
նաեւ իմաստասիրական, բարոյական, կրօնական, համամարդկային ու ազ-
գային հոլովոյթներու :

Ճիշդ է, որ յատկապէս վերջին այս մարզերուն հետ բանաստեղծու-
թեան աղերսը դիտական-վերլուծական բնոյթ չունի, ոչ ալ բանաստեղծու-
թեան մէջ առանցքային կարեւորութիւն ունին անոնք, բացի իբրեւ Գեղեցի-
կի համապարփակ պատկերացումին մաս կազմող երեւոյթներ, բայց բանաս-
տեղծութիւնը նոր իմաստաւորում կու տայ անոնց, ժամանակակից իրենց
պարունակին մէջ կը վերարժեւորէ զանոնք, առանց սակայն անոնց վարդա-
պետական խօսնակը դառնալու :

...Գալով ահաբականներում, չորս չեք-ենքուս եւ անոնց պետիմ կողմէ հրամայուեցաւ իրենց հետեւիլ... Ջորամէշը կտրելով անցան միւս եզրը, ուր փոքր անտառիկ մը բուսը կը գարդարէր: Քիչ մը օտագոմուով, անոնց պետը արտասանեց քանի մը բառեր, որոնք չկրցի հասկնալ, ինչո՞ւ որ եւ անոնցմէ բառական հետու էի: Ասկէ ետք մարդիկը յարձակեցան էփեմտիմներուն վրայ, անոնց զգեստները հանեցին եւ բոլորովիմ մերկացուցին... Այս թեզն գոհերը մէկիկ-մէկիկ ծաներուն կապուեցան: Իրենց ձեռքերը կապուած ըլլալով, չէին կրնար ինքզինքնին պաշտպանել: Յետայ չեք-էսպետը եւ իր մարդիկը իրենց դաշոյնները մերկացուցին եւ սկսան դանդաղորէն եւ հանգարտ կերպով գանոնք մարքել (*Հայկազէն տարեգիրք*», Պալիս, 1922):

ԿԱՌԱՊԱՆ ՀԱՄԱՆ

Անիկ, Յ. Օշական Երուսաղէմի մէջ առանձին գրքով մը լոյս ընծայեց «Օրն օրերուն» անուն իր քնարականը, ուր ոչեկայուած են մեծ նահատակներէն բանի մը խոսքիչ ղեմքեր:
Յաջորդող էջերուն կը ներկայացնենք Գանիկէ Վարուժանին նախնական բառիկը, որուն մէկ կարեւոր մասը յայտնապէս չրի առնուած է հաս ուշադրութեան յանձնուած կատարան Հասունին պատմանին հիմամբ...

Յ. Օ Շ Ա Կ Ա Ն

ՕՐՆ ՕՐԵՐՈՒՆ

Վարագոյրը չէ իջած առաջին պատկերի վախճանին: Տուցըլուն լուսեան մը մէջ փախչող շուքերու նման, ըզգալի դանդաղութեամբ կը վերնան պատերը, դուռը, կամարը, հեռաստանին ոտտայնները: Բենը կը պահէ իր կերպարանքը: Կորոզը հիմա ատրաշէկ սին է: Պատաւը, ծերունին, պարազլուսը, պարը, երիտասարդը լուսազգեստ, բայց պահող անուրուային իրենց իրականութիւնը: Կարմիր, դեղին, կապոյտ լոյսերու հրթիռի մը մէջէն կը յօրինուին մարդկային կերպարանքներ. որոնք թէեւ ուրուատիպ, տակաւ կը զգնուուն ստուերային իրականութիւն մը: Եկուորները իրարու կը յաջորդեն պատկերին ընթացքին: Քահանան բուրվառով կը շրջի հողքէ հողք: Անոր կը հետեւի կապուտիկ մուփի թեթեւ ալիք մը, որուն կտորները մարդկային ձեւերու մօտ զգայալաբութիւններ կը բաւալեն: Ա. եկուորը մտած է թեմ, թեթեւ, տարտամ, ինչպէս կը վայելէ ստուերներուն: Լուս ու ծանրը՝ ինչպէս մեռելն է երբ կը քալէ:

ԵՈՒՄԲԸ —

Երիտասարդ,
 Թեւէ երկարէ մեծ մեռելիմ:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ.—

Ո՛վ ալ ըլլաս,
Գայդ է բարի,
Թող օրհնուի
Քալուստը իս
Սեւ օրէն վեր:
Կու տա՛ս ինձի
Անունը իս:

Ա. ԵԿՈՒՈՐԸ.—

Պատուհան: Հին դարերու երգիչները
իշխանոջ գլխու յարգարանք: Կողքին
սուրճ՝ որ ասպետները կը տեսակարէր:
Մէկ ձեռքին՝ քնար.

Մեռելները պէտք չունեցան
Իրենց անուն:
Ի՞նչ է ուզածդ, անունէն վեր:

ԵՐՈՒՈՒՆԻՆ.—

Քեզ ուզողն է իս ժողովուրդ,
Ով դուն եկուոր իմ սիրական:
Ու իմ բերնով քեզ կու սայ հարց
Քու ժողովուրդ:
Անունէն վեր, ասկէ անդին
Դուն գաւակն եւ ժողովուրդիդ:
Պատմունանդ է պատառ-պատառ
Մեզի պատմոյ եղեռն անուն,
Ուր դնդերները քերթեցին:
Քայց կողքիդ կախ շուքն է սուրին
Ասպետներուն:
Թեւէն կ'իյնայ հասակն ազուր
Քու քնարին
Իման գաւակն մտէդ ծնած,
Որուն վրայ
Օր մ'երգեցին մեր քերթողներ
Այգն անուշիկ ու ցօղաթուրմ
Մեր արիւնին:
Ո՛վ արբազան, ո՛վ սիրական
Դուն իմ եկուոր,
Մէ՞կն եւ գողքսն երգիչներէն:

Ա. ԵԿՈՒՈՐԸ.—

Հա՛յր ալեւոր,
Իյնան աչքէդ մաշկը մաքին,
Փռչի ուստայնն ալ դարերուն,

*Մատուցներուն պաղունցովը կը թուի
թօթունի դարերու փոշին, մինչ անոնց
չարժուածովը կը փեռէ միտերը ժուլին,
աչքերուն վրայէն.*

Իյնան միտէդ կապերն անմիտ
Ժամանակին ու պատմութեան,

*Մատները կ'ուրուագրեն շարժումը՝ զան-
կէն կախարհի ճը քակելու, ու անբաւ
զանձեր սերմանելու.*

Ու փարատին
Սրտիդ մայլ մամբաներէն
Մէզն ու շարաւը սուգերուն,

*Մատները կ'ընեն սիրտը պարպելու շար-
ժումներ.*

Որպէսզի դուն, հայր ալեւոր,
Ու քեզի ետ մարդերն այս ողջ
Ըլլաք անօթ
Ընդունելու՝
Արցունքին հետ մեռելներուն,
Կրակն անմահ բոլոր անոնց,
Որ ինձի պէս աչքերով բաց
Ու մարմնով փշուր-փշուր,
Աստուծոյ լոյսն անխճելէն
Իջան հողին,
Քայց չ'մեռան:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ.—

Փա՛ռք մահէն եւ դարձողներուն:

Ա. ԵԿՈՒՈՐԸ.—

Բայց չմեռան,
Որպէսզի դուք տեսնէք արձակ
Նարակըտուր, նարափետուր
Յարութիւնը մեռելներում՝
Ինչպէս ծիլիկ է սերմերում:
Ու քափանցէ՛ք խորհուրդն ամառ
Բացաւիլ ուզող ձեր աչքերում:
Իրաւ, իրաւ՝ կ'ըսեմ ձեզի,
«Ես բանաստեղծն եմ իմ մեղին»:



Վրան դաշտին լուսակարօտ,
Յուսակարօտ
Մեր սրտերում:

ԵՌԻՄՐԸ.—

Քերթա՛զն է ան, քերթա՛զն է ան
«Մ'ըրկավարօ»,
Ջոր քշնամին
Կապած ծառին
Քերթեց, փերթ-փերթ,
Բաժնելով միսն ոսկորներէն:
Գալն օրհնուի մեծ քերթողին:

Ա. ԵԿՈՒՈՐԸ.—

Բայց չեմ եկած
Պատմելու ձեզ մահն իմ՝ անարգ
Դանակին տակ քշնամիին,
— Պէտք չէ պատմել կարգ մը բաներ —
Ու չեմ եկած, ու չեմ գալու
Իմ ընկերներ
Ձեզ անցեալէն, ձեզ անցեալով
Կրակելու.
Մենք ունինք ձեզ պատգամ
ուրիշ,
Պատգամը նոր:

Ա. ԵԿՈՒՈՐԸ.—

Քիչ վերջ, քիչ վերջ,
Ամօրեւն այդ նար
Պիտի գայ ձեզ ընթաններէն
Բոլոր անոնց
Որոնք եղան ան սեւ օրին
Կախ չուսնէն քշնամիին,
Կրունկներուն անոր երկաթ-
կտորուելէն,
Կրակի մէջ, տանիքի տակ,
Բայց պանեցին խորհուրդն անյաղ-
իրենց ցեղին,
Դարուց ի դարս,
Տալով մեզի դասն անքառամ
Վսեմ պարտքին.
— Մահուան ընդդէմ մտառելու:
Քերթողներուն գիրն է կրկնել
Իմաստն անոր գիրէն անդին:

ԵՐԻՏԱՍԱՐԴԸ.—

Բաց դաշտերն են մեր օրտերում:
Օրն է սեա, որ անձրեւես
Բառերը քու,
Ձերո՛ւ քեռար կրակ ամտես

ԽՈՒՄԲԸ —

Փա՛ռք քերթալին,
 Սրտե՛ն որում կ'ազբերանայ
 Արիւնն ազատ ու անազատ
 Մեր պապերում,
 Ստեղծումին, զեղեցկութեամ
 Հզօր սիրոյն հասումն անմահ
 Սպիտակով
 Դարուց ի դարս,
 — Պատգամն անմահ միշտ ապրելու:
 Խօտ մեզի այդ դասէն մութ,
 Ով դուն քերթա՛ր,
 «Մրրկավարս ու հրաշուի»:

Ա. ԵԿՈՒՈՐԸ —

Ի՛նք բաներէն, լռութեանէն
 Ու աչքերու անդունդներէն
 Այի՛ք-այի՛ք, ու ծով առ ծով
 Կը հեղեղէ երգը պայծառ
 Ու մշտանայն,
 Ջոր քաղցինն ճոյն ալիքէն
 Դար դարերով
 Ջիւ կանխողներ, արեամ մէջէն
 Ու կրակին.
 Ջոր քաղցի ես ճոյն մտմբով,
 Ու ինձմէ վերջ
 Պիտի քաղցն ազաբը ձեր
 Արեան փոխան, սուրբ հողերէն

Հայրենիքին,
 Մազազաթէն մեր պատմութեան,
 Ջոր սորվելու համար կարդալ
 Մենք իջեր ենք ծոցն հողերում:
 Երգը պայծառ, երգն անուշիկ
 Շրթներէն ողջ ամօնց, որոնք
 Փոխան մեզի, մեր ետեւէն
 Տապանն առած իրենց ուռին
 Նայն խորհուրդին,
 Կը յաղթերգեն, փոխանցելու
 Յարանորոգ, յարածունք
 Ձեր հայութեան
 Իրր անվախնան կենդանութիւն
 — Կուակ իրենց այդպէս ամբողջ —
 Քար ու կրակ գիրն ուսումբարձ:
 Հա՛յ Հայրենիք, առքը որում
 Այրեց միլիոնն, բայց անեցուց
 հարքին ուրիշ միլիոններու
 Հրդեհը ճոյն:
 Աշխարհ հայո՛ց, դուն խենթութիւն,
 Գիմովութիւն մեռելներուդ
 Ու ողջերուդ:
 Մենք ըրինք ուխտ
 Քեզ գովելու, ինչ սիրելու
 Ու տարփանքին մէջէն այդ սուրբ
 Ընդատներու
 Լեռ, սաստար ու անապատ,
 Քեզ ծնելու
 Ու առօրէ մէջ, աշխարհ հայոց,
 Մահն ընելու
 Պահ անպատոււ ըստեղծումի:

Թ. ՕՇԱԿԱՆ

6. Մ Ա Ն Ո Ւ Կ Ե Ա Ն

ԿՆՈՋԱԿԱՆ ԴԻՄԱՊԱՏԿԵՐԸ

ՎԱՐՈՒԺԱՆԻ ՔԵՐԹՈՂՈՒԹԵԱՆ ՄԷՋ

Իր հիմնական դիժերուն մէջ, Վարուժանի գրական ստեղծագործութիւնը կը զբոսնորէ կեանքը հակոտնեայ բեւեռներով ընկալող աշխարհահայեացք մը:

Սոյն հակադիր վիճակներէն թելադրուած՝ Վարուժան պատկերացուց կեանքը թէ՛ լուսաւոր եւ թէ՛ մթաստուեր իր դիմադրանքներով:

Ահա թէ ինչու բռնութեան դիմաց՝ ազատութեան կարօտը հովուերգաց. լուսեղէն թեւածումներու յանդիման՝ իտէսալի մը թեւաբեկումը եղբերակաց եւ արիւնոտ յիշատակի մը դիմաց՝ մնաց ականջալուր հեռայայտ արշալոյսի մը տրոփներուն:

Աւելի՛ն. աւերակներու առջեւ, եղեղնեայ գրչով հայ լազրի ողբիչն փառքը լատակերտաց. մեքենաներու տակ հիւժող բանուարներուն՝ Մայիս Մէկի խնդուութիւնը աւետեց եւ բռնաբարուած ժողովուրդներուն՝ պայքարի ոգին ներշնչեց:

Համարեա՛ իր բուրբ մտայղացումները մնացին առկախ՝ կեանքի ծայրաբեւեռները յատկանշող Վկազոյսին եւ խաւարին մէջտեղջ եւ որոնք վսեմ թէ՛ յոռի յատկութիւններով տարնչուած ծանօթ իրողութիւններու ընդմէջէն դարձան թէ՛ բնորոշ սեւեռումը մարդկային զոտոթոյսին եւ թէ՛ ակններու վկայութիւնը՝ երազային գեղեցկութեամբ խորացած բանաստեղծին ներվանայական գիտակցութեան:

Այս յղացքով ուշագրաւ են յատկապէս կիներու վերաբերող այն բանաստեղծութիւնները, ուր Վարուժան ներհակ համեմատութիւններով կը ներկայացնէ իդական սեռին տոանձնայատկութիւնները:

Անմիջապէս աւելցնենք, թէ հինէն ի վեր յատուկ լահազրգոթիւն մը վերապահուած է կիներու, որոնք, մարմնական իրենց շնորհներով՝ դարձած են սնուցիչ տարբեր առհասարակ բուրբ գրողներու ստեղծագործ երկունքին: Տարակոյսէ վեր է այն, որ առանց կիներու զգացական շագաթին, բազում հոգեվիճակներ պիտի չվերածուէին քնարաշունչ երգերու եւ մինչեւ իսկ խոհական ապրումներ պիտի լոյսին չբացուէին մարմնակերպ յայտնութեամբ:

Նկարագրային իր զարտուղի դիժերով, կիները դարձած է այլ գրողներու ներաշխարհին յարակից մէկ տնիղը, մտորումներուն մէկ երանգը, որ ճակատագրի մը պէս հետեւած է անոնց քայլափոխին, խանդավառած կամ ընդվզեցուցած զանոնք, յատկացնելով անոնց մէջ հոգեբանական կենսագործ գրգռներ:

կնոջական կերպարը քայլ պահած է գեղարուեստի զարգացման հոլո-
վոյթին հետ եւ դարաշրջանէ դարաշրջան ենթարկուած զգացական բարե-
լըջումներու: Գրական ամէն շրջան յայտնակերպած է զայն՝ համաձայն իր
որդեգրած ըմբռնումին:

Հատ կարգ մը զբողներու, կնոջական մտայնակերպը կը պարզէ աշնան
յոյզով եւ մշուշով շողապատուած մտերմութիւն մը, իսկ այլ կարգի զբող-
ներու՝ իրապաշտ ցանկութիւն մը:

Ներկայացնելով կիները խոնուածքային զոյգ բեւեռներով, Վա-
րուժան չի մղուիր ո՛չ հիւժախտաւոր դառնութիւններու, ոչ ալ գերազատ
զգացումներու բարդոյթներէն, այլ կը կրէ բնոյթը թելագրական այն տազ-
նային, որ խորապէս մարդկային իր դիմադիծով պուպ է եւ տիրական:

Իրբեւ զաղափարապաշտ բանաստեղծ, այլաբանական խորքով ան կը
մտայնակերպէ կիները, որոնցմէ իւրաքանչիւրը խորհրդանշական մէկ կեր-
պարն է անձնական թէ հաւաքական իտէալի մը:

Վարուժանի բնութագրած կիները իրենց սեփական ցաւին եւ հրճուան-
քին ընդմէջէն կը փոխանցեն իսյտարդէտ վիճակներով զոյացած հասարա-
կաց զգայնութիւն մը:

Վերածելով կիները զլխաւոր երկու դասակարգերու՝ համակրանքով
կը զբուստէ արժանիքը ա՛յն կիներուն, որոնք կը հետագնդեն բարոյական
վեճ՝ երազներ:

Այս կարգի իտէալապաշտ կիներուն կը պատկանի վերածննդեան ոգին
խորհրդանշող Վերածնունդին, որ հակառակ ճեպխերներու ծնունդը՝ եղած
ըլլալուն՝ կը վճռէ զոյատեւել մոխիրներէն յառնող զարնան հօր կենդա-
նութեամբ, իր հաւատքին արժասները արձակելով լուսեղէն ապագայի մը
սիւսներուն:

Արհաւիրքը վերանորոգ յոյսով յաղթահարող կնոջ մը դիմապատկերն
է Աւերակներու Տիկինը, որ Վոսփորի ափերուն, ի պատիւ ազատութեան
սարբուած «կաթիլի խրախճանքին», մուցած սուգը եւ կսկիծը խորշակահար
իւր որդիներուն եւ զգեցած պատմուճանը հին օրերու երջանկութեան, կը
պարէ նորահարսի՝ պէս խնդուն, իրբեւ կենսախայտ գեղումը արիասիրտ այն
հայ մօր՝

Որ գիշերումս մէջ հերոսները կը քաղէ,
Առաւօտուն կ'ըլլայ հարս...

Վարուժան երգեց 1895 թուականի հայկական կոտորածները՝ ընդվը-
ղումով եւ հիասթափութեամբ: Ի տես ահաւոր այդ ողբերգութեան, բանաս-
տեղծը զատապարտեց ո՛չ միայն թուրք ոսոխին բարբարոս արարքը, այլեւ՝
այդ արարքին հանդէպ թողաքակիրթ ազգերու դաւադիր վերապահութիւնը:
Մզաց անթաղ մնացած բիւրաւոր մեռելներու յիշատակը, տառապեցու արհա-
ւիրքէն ճողոպրած մնացորդացին հաշուոյն եւ Աղէտին առթած կորուստը
հակակշռելու վճռակամութեամբ՝ հայ մայրերու եւ հարսներու արզանդ-
ներուն վերապրեց զոյատեւման ծնուցիչ յատկութիւններ, իրբեւ «Ննձր
Մազմեր անը Ուլիներու ստեղծիչ»: Բանաստեղծը հաւատաց, թէ անոնց ար-
զանդներէն պիտի ծնին սերունդները «առիւծներու ապագայ», որոնք պիտի
ըլլան խիզախ եւ «արծուի մաշկեղ թոխներ»՝ հաղած՝ ձեռնարկեն վրիժա-
խանձ սխրագործութեանց, բեղմնաւորելու համար պա՛հը Արշալոյսով խոր-
հրդանշուած ազատութեան «վարդահեղեղ զալուստին»:

Այդ արշալոյսը Վարուժանի գեղապաշտական ձգտումներուն եւ զա-
ղափարական դաւանանքին նիրվանան է: Այս իժատումով, տառապեալ հողե-
ներու արտայայտիչը ըլլալով հանդերձ, դարձաւ շեփոթակիրը արշալուսային
յայտնատեսութիւններու:

Վերոյիշեալ կիները կը շնչեն ազգային տոհմիկ աւանդութեանց մըթնորոտով եւ իրենց առաքինավայել վարժունքով կը նպաստեն տեսապաշտ ձգտումներու կենսազործումին: Այդ աւանդութեանց արժանաւոր մէկ շառուարիչն է Արմենուհին, որ մերժելով սարսիկ բռնակալ Շահ Աբասի ամուսնական ատաղբիզը, վերջ կու տայ անմխիթար իր ցաւին՝ յանձնուելով Արազի փրփրաղէզ ալիքներուն:

Նկարագրելով սոյն դասակարգի կիները՝ Վարուժան կը ստեղծէ վերապաշտ մթնոլորտ մը, ուր տիպարները ձերբազատուելով իրենց մարմնական բարեմասնութիւններէն՝ կը վերածուին երազային շնորհներով օժտուած էակներու:

Այս ճշմարտութեամբ, իտէլի մը մայմնացումն է Հայուհին, որ բանաստեղծին հետ կ'երթայ կուռի, ի խնդիր ազատութեան: Յատկանշական կերպար մըն է ան, այն իմաստով, որ իր հերոսապիպ յանձնառութեամբ կը յիշեցնէ նոյնքան դիւցազնավայել առաքելութիւնը Աւարայրի Գոյոմարտին մասնակցած ճեպակասուն Տիկիներուն: Կամ Հայոց յիշուփոխութեան դրահարման յատկանիշ մը ընձեռած սիրասուն Սօսէներու:

Բանաստեղծն ու Հայուհին բաղադրիչ լծորդներն են նոյն դիրազանց նպատակին եւ նպատակասլաց նոյն ոգեւորութեան:

Հայուհին ալ դադարած է հովուական պատրանքներ սնուցանելէ եւ կ'երթայ գէպի պայքար, իր կողքին այլը ունենալով իրեն զինակից եւ զազափարը՝ իբրեւ սահմիրայ, հետուն, բոցակէզ դաշտին վրայ, զլափող բոց» եւ զկարշնեզ արծիւ» դասնայու:

Իր հերթին, բանաստեղծը կ'երթայ նոյն զարդար բախումին, զգալով ինքզինք առաւել դորեղ՝ քան նակատապիրը եւ առաւել շանթահարիչ՝ քան սիրոյ ստոտապանքը, որովհետեւ կոյսն է իր ուխտակիցը, եւ սէրը՝ ուսովիւրան:

Դիւցազնապիպ երեւոյթով պատկերելով Հայուհին, Վարուժան կը յայտնաբերէ կնոջական արտին մէջ նախաձեռնութեան ոգին, որուն բարբարը ներդրութեամբ բանաստեղծը կը դիմէ իմացական եւ զազափարական նոր դրութիւններ հանդանակելու: Ոգեւորիչ արարքին, ինչպէս կը հաստատուի կոյսին ուղղուած հետեւեալ խօսքերով.

Ի՞նչ, կարծեցիր քէ չե՞մ կրնար ես ընել
Գրիչըս դաշոյն, եւ կազամարբա՝ կարմիր
Միբար զազամ ասիւթիմ:
Ես շատ, շա՛տ լաւ կրնամ Երազը փոխել,
Մերկացնելով իր գեփիւտէ ըզգեփում՝
Աստղեր ցրեցազ մըրբիկն ամար Խոզցընել:
Երբ որ ամոյիմ միշտ կու լամ՝
Ձի կը մեռնիմ, ու կը մեռնիմ, զի կու լամ՝
Ինձմէ՛ հեռու քուղթ եւ գիրք՝
Տամթէ՛ն բոցիմ ես կը մեռնեմ,
Գերեզմանեց կը մեռնեմ ես
Գուրեման՝ որ ա՛յնքան ժամանակ սիրեցի:

Եւ դեռ, սրտառուչ տիպար մըն է Վարուժանի իտնդազատներին եւ կարեկցութեան առարկան դարձած դեռատի բանուորուհին, որ ազրուատի համար իր կուսադեզ երիտասարդութիւնը կը սպառէ գործատան մը տատանակիւր աշխատանքին մէջ, միշտ հայածանքին ենթակայ փողոցին մէջ թափառող ճթուրք անուպայ սրիկաներու:

Ազգային բարեքրու պահպանման դժով հայ կնոջ պատիւը առաջնա-
հերթ մտահոգութիւն կը թելադրէ բանաստեղծին, որուն սամարացիական եւ
անսակարկ վերաբերումը հանդէպ աղքատ եւ անպաշտպան բանուորուհիին՝
կը հասնի առաջնապալի համեմատութիւններու :

Հայ կիներու առնչութեամբ Վարուժանի իտէլապաշա ըմբռնումը
«Երբէք Բոյնիք»-ու խորհրդանշական կերպարներով կը պարզէ այլ շահեկա-
նութիւն մը եւս : Հո՛ւս եւս, բանաստեղծը խապտուած ապրումի մը կը վե-
րածէ զազափարի վահմութիւնը, ժամանակաւոր եւ ինքնահաճ ցանկութիւն-
ներէ զայն նախամեծար համարելով : Այլաբանական իմաստով ան կը ներ-
կայացնէ երեք քոյրեր, որոնք պարմանութեան իրենց ուխտը կը կատարեն
երեք բազիններու առջեւ : Այսպէս, երէց քոյրը, որ Զեւահն կը ձօնէ իր ոսկի
մագերը, եօթը խոյրերով կը զօրացնէ Արտաշէսի դահլը : Միջինից, որ հը-
րեղէն մատանին կը նուիրէ Հիմենին՝ Հայաստանի համար եօթը չքմաղ հե-
րոտներու ծնունդ կու տայ : Իսկ կրտսեր քոյրը, որ իր կոյսի զօտին կը նը-
սիրէ վաւաշու Աստղիկին՝ կը դառնայ տառապեալ հոգի մը, մառ ծախելով
հանրատան մը մէջ...

Վարուժան կնոջական տիպարներու ընդմէջէն կը յայտնագործէ ազ-
գային եւ համամարդկային ճգնաժամներու հետ միմյեւ իսկ անանձնական խ-
տէլապացած երեւոյթներ :

Այսպէս, ան խոր ակնածութեամբ կը նկարագրէ հողեղէն հաղորդակ-
ցութեամբ կատարուած Աստուածամօր զուլթիւնը՝ ցաւի եւ հանութեան,
պակտցումի եւ վերացման մարդկայնօրէն ըմբռնելի ապրումներով : Վա-
րուժան սաղմնագործման այդ հողեղէն արարքը կը կենդանացնէ իր բացա-
յայտ իրապաշտութեամբ, որով Մարիամ, բաժնուերով իր կուսութենէն եւ
կրեւով իր արգանդին խորը «Աստուածատիպ Մարդը»՝ կը դառնայ անհար-
նացեալ եւ օրհնեալ մայր մը :

Ահա թէ ինչու անխառն զեղումով բանաստեղծը կը նուիրաբերէ իր
հոճմէքրուն նախնական Աստուածամօր սեղանին, խնդրելով, որ օրհնէ իր
յոյսերուն հետ հիւսուած այդ խաչքուրը եւ իբրեւ զտուրք պաշտպան հայ-
րենական հողերուն»՝ արգասաւորէ հայրենի դաշտերը՝ ցորենաբոյր բերկ-
րութեամբ :

Անանձնական իմացումներ անձնականացնելու ճգնումին մէկ ակներև
օրինակն է նաև Լալաչէն, որ կը ներկայանայ իբրև հողի աւելնելով ծոց-
ւորած մարմնակերպ յայտնութիւնը աշնանային մրդահասի :

Վարուժան յարակցութիւն մը կը գոյացնէ Լալաչէին ծանր յղութեան
եւ այգեկութեի միջեւ եւ, շնորհիւ այդ յարակցութեան՝ աշնան եղանակը
յդի Լալաչէի մը կերպարին ընդմէջէն կը փոխանցէ հողի եւ աշխատանքի
զուգահեցութեամբ պտղաբերուած մրդահասի մը խնդութիւնը, որ կը հաս-
տատուի հետեւեալ տողերով .

Արդ յիշեցի՞ր դու այն օրն, ո՛վ Լալաչէ :
Ակօսներուն եւ կողերուդ քնդմէջէն,
Այն ծամր ամիսն յղութեանդ,
Կ'անցնէր ալիքն հողին յորդոզ ուժերում :
Արեգակի արիւմին մաւռն էր՝ ծոցիդ
Խէչ հասունցած : Բուններն ի վար ծառերում
Սը ծորէին շիթ առ շիթ
Հոյզերը՝ մամ արցունքի :
Քու համբարուած մարմինիդ պէս ծանրակիր
Հողն էր քրքրուած, էր կայուն

Փաղցուններով եւ մեղրով :
 Անուշաբոյր իր բեռին սակ կը կըքէր
 Դեղձեմին բն'զ նըմանակ,
 Քաւ ծիծերով նըմանակ
 Ողիւններն այն լեցուն էին՝ ազագայ
 Ծիծաղներով, ցրնծալիւնով եւ կայծով :

Արդարեւ, այս դատուն կիները իրենց համապատասխան խոչալով կը զրոհւորեն ցաւի եւ բերկրանքի պահերով ընդելուզուած հողեխառնութիւն մը, որ կը ծնի մարդկային ըմբռնումին բարոյական վճիռ վարքագիծ մը բերած ըլլալու դիտակցութենէն :

Ինչ կը վերաբերի միւս դասակարգի կիներուն, զո՛ւն են անոնք իրենց մեղանյական քնազդին եւ կ'ազդին այդ բնազդին ցաւատանջ անդրադարձումով, իբրեւ խորհրդանիշը խաթարուած բարոյականութեան :

Այս կապակցութեամբ, ուշադրաւ է «Աւազին մեղքը» խորագրեալ բանաստեղծութիւնը, ուր Վարուժան վեպապաշա զոյներով կը նկարագրէ ուշ արածող այն դեռատի աղջիկը, որ որ մը, լեռներու խորհուրդին մէջ, աղբիւրի մը քով, կ'իմանայ ձայնը Արու Ողիին : Ի յուր այդ ձայնին՝ պարմանուէին կը պարուրուի հեշտազդիւս զգայնութեամբ, որուն կախարդանքէն թելազրուած՝ կը մորթէ իր միակ ուլը, որպէսզի Արու Ողիին խոստումներուն համաձայն իրազործուի ծաղիկներով եւ թիթեռնիկներով զեղուն դիւթական աշխարհ՝ մը : Բայց երբ զոհուած ուլին արիւնէն նոր երազ մը չի ծնիր եւ ինք չի դառնար «թիթեռներու հովուէի»՝ պարմանուէին, տխրաբեկ՝ իր ճանուշ Մեղքը կու լայ : Այն դրուագը այլաբանական պատկերացումն է այն գործութեան, որուն եղբրական քնազդին զոհ կ'երթայ դեռատի աղջկան մը կուտութիւնը :

Այլ տխրայուշ կացութիւն մը կը բնորոշէ Վարուժան՝ անդրադառնալով այն շխարհուած կոյտերուն, որոնք, ապրուստի մտահոգութենէն թելազրուած՝ ակամայ կը յանձնուին հեշտանքներուն զիրկը եւ ակ'անցին քիւրաւոր սուգանքներուն ընդմէջէն», ցեխին մէջ նետելով բարոյական ամէն արժանիք :

Յոփութիւնը արհեստագիտական շնորհի՛ մը վերածած այն տիպարն է «Ո Տալիդայի Տալիդա հերոսուէին, որ բարոյագէտ զգայազուրկ հանդիսութեամբ մը կ'որոնէ կեանքի իմաստը իր կապելային մէջ, ուր ազախնի իր մերկութիւնը կը բաշխէ նստատիներուն՝ արհեստավարժ փորձառութեամբ...»

Իրողութիւն է, թէ ամէն դրոզ առաւել կամ նուազ շափով ըմբռնեա՞ծ է սիրոյ տառապանքը եւ զայն քնարեպան խոսնուած ջային յատուկ ըզգայնութեամբ :

Եթէ ոմանք վերածած են զայն աղեխարշ եղերերգութեան, ուրիշներ հոգեհամ զգացումներ վերազրած են անոր :

Սակայն իբրեւ քնարերգակ բանաստեղծ, Վարուժան չի բացայայտեր իր տառապանքին մութ ծալքերը սրտաց խոստովանութեամբ, այլ զանոնք կը զգացնէ համոտաակի եւ այլաբանական ակնարկութիւններով : Այս երեւոյթէն կը զատուի «Սիրոս Է յոգնած» բանաստեղծութիւնը, ուր կը տրուի խոցուած զգացումի մը պատկերացումը, հետեւեալ ենթակայական պարզութեամբ եւ անկեղծութեամբ :

Սիրոս Է յոգնած, վիրաւոր .
 Ո՛չ մէկ գարնան ծաղիկներում կը սպասէ .

կիմ մը ապուշ մայուցքով
 Զայն բըզկտեց. սրդ տաքը լոյս մատերեմ
 Արիւններս եմ, որ հատերս պէս նուրի,
 Կարի կարի կը ծորիմ...
 Սիրտս է յոգնած,
 Ու սէրս կը մէջ վիրաւոր:

Այս վշտախոց տառապանքը եղերական հանգամանք մը կը ստանայ, երբ բանաստեղծը պարագայական այլ առիթով մը զայն կը շփոթայտնէ դիմելով օձի այլաբանական կերպարին:

Այսպէս, ուսանողութեան շրջանին, կնոջ մը հետ իր ցաւառիթ մէկ հանդիպումը կը զուգակցէ լեռնային ճամբու մը վրայ, Օգոստոսի արեւուն տակ ա՛յն պատահարին, երբ օձ մը, դահլիճ ընթացքով, մոլեգնօրէն կը սրկէ իր մահացու թոյնը բանաստեղծին շուրթերուն...:

Օձի կերպարին մէջ Վարուժան կը վերստեղծէ հարազատ դիմապատկերը այդ կնոջ, որ յարեցնէ ետք վերջին հրայրքը իր սուփանքին եւ, գոհացած իր դո՛հին արիւնով՝ տակաւ կը լուծէ օղակածեւ իր պայտուածները բանաստեղծին իրանէն՝ ձգելով ախտածէս յիշատակ մը իր ետին...:

Արդարեւ, ուշագրտու է նկարագրային ա՛յն դիժը, որով՝ իր դիմապատկերած կնոջական պատկերին ընդմէջէն, ան կը նայի ի՛ր իսկ սեփական ցաւին անապշաւ զգացողութեամբ, հպարտ արհամարհանքով եւ կը դիմապատկէ զինք զգեստնէլ փորձող դեմնաքարէ ամէն սողոսկում՝ աղնուստիպ խոհականութեամբ:

Վարուժան բարոյագիտական օկղբունքներով չբանաձեւեց վերջին կիւնիբու ապաշնորհ կենցաղը: Միտալ պիտի ըլլար փնտտել իր անձին մէջ մաքրակրօն բորոյագէտը:

Եթէ յառեցաւ հայոց հեթանոսական անցեալին եւ ներկայացուց կնոջական ժամանակակից թէ հնօրեայ տիպարներ իրենց հեթանոս մերկութեամբ, այս ձգտումը ի յայտ կու գար գեղապաշտական ա՛յն ըմբռումէն, որուն միակ տալիստիանքը կը հիմնաւորուի կեանքը դեղեցկօրէն վերարտադրելու իրողութեամբ:

Վերածննդեան իրադրժումներուն ծանօթ բանաստեղծն է ան, որ գեղապաշտ գոյներով մարմնաւորեց իր յղացումները, հետեւելով հանճարեղ գեղանկարչներու՝ Ռաֆայէլի, Ռիւզէնսի, Թիցիանի, Վան-Տեքի եւ օրնշակից այլ վարպետներու օրինակին, որոնք իրապաշտ մերկութիւններու օգտագործումով հետամուտ ժղան արուեստի օրբազան պաշտամունքին: Ահա թէ ինչու Վարուժանի կիմերը, ի՛նչ իսկալ ալ կերպարեն, կը պահեն իրենց մշտանորոգ դեղեցկութիւնը:

Կը գոյակցին մեր առօրեային, կը շնչեն իւրայատուկ այժմէութեամբ: Մեր տաղնապններուն եւ տեսլապաշտ սեւեռումներուն մէջ կը գտնենք յատկանշական ապրում մը իրենց էութենէն:

Կ'առինքնն մեզ իրենց մարմնաւորած տեսակարար ստորագիւծներով՝ կը տպաւորեն մեզ հոռմէական աստուածուհիներու կերճագեղ հանդիսութեամբ եւ կը գործեն մեր կեանքէն ներս իրրեւ շնչաւոր յայտնակերպումը մարդկային անյգիի բնութեան:

Կը քաշեն անոնք սերունդներուն հետ եւ կը գոյատեւեն ժամանակի գիտակցութեան մէջ, դասական դորժերու վերապահուած «Պոստապոստ» վայելչութեամբ:

ՅԱՆՈՐ ՄԱՆՈՒԿԵԱՆ

Վ Ա Ր Ո Ւ Ժ Ա Ն Ի Ն

Ընդ եղեգան փող լոյս ելաներ...

Քն կտրած փողից, եղեգան փողից
Եւ լոյս էր ելնում, եւ բոց էր ելնում,
Թախիծն էր ելնում հնաւանդ հողից՝
Արշալոյսներէ խաւար գնդանում:

Եւ փողը ջարդուեց շուրթերիդ շահել,
Եղեգան փողից արիւն էր ելնում,
Որ արծուի նման վեհ էիր պահել՝
Վրէժի ծարաւ հայոց լեռներում:

Սակայն այն հողից, որ դու կտրեցիր
Եղեգան փողը աստեղաշառաչ,
Հզոր եղեգանի կանգնեցին նորից՝
Գալիւթ օրերի հողմերի առաջ:

Ին այդ եղեգան փողը հասաչեց
Զարեհի շրթին խեղճ ու ցնծագին,
Սեւակի շրթին Կամրուսա կանչեց,
Շիրազի շրթին՝ մանչաց երկինք:

Եւ այդ եղեգան փողը դեռ պիտի
Նուագի հայոց լեռների վրայ,
Յանուն այն վսեմ, մեծ առաւօտի,
Որի հակատին վրէժ չի գրուած...

Վ Ա Ղ Ա Վ Ն Կ Ա Ր Ե Ն Ճ



Փիւս Եւսէ և Գ. Վարսման,

1912, Յունիսի 17, Յոստան

ՍԻՐՈՆԻ ԳԻՆՈՒ

Ինչպէս տեսնուած է, այժմ տեղափոխուել եմ Քոչաւ փողոց՝ շատ գեղեցիկ մի քաղաք, որը շքեղապատուած է որթատունկերով ու մրգատառներով: Այստեղ գինին սառնա է: Գամախ, զետիք խմելով չի բաժակոյ բարձրացնում եմ երկտաւարդութեան, մուսաների եւ Բեղլիայում ապրող իմ բարեկամները կենացը: Եւ այստեղ ուսուցիչ եմ նշանակուած եւ ստանում եմ ամսական ութ օսմանան օսկի: Դա ինձ համար բաւական է, կարենեմ, արդէպի Արեւելքում հարուստ մարդ լինեմ:

Սիրելի Գինու, արդէն երկու տարի է, ինչ ամուսնացել եմ: Կինս կոչուած է Արաքսիա, մի գեղանի խարտիչուհի, որին սիրում եմ ուսմանով սիրով: Աւելին, եւ ունեմ մէկ աստղական աղջկան, որն օժտուած է վաղահաս իմաստութեամբ: Նա արդէն գիտէ զգալապէս սակ եւ այդ բանն ինձ յիշուած է անկասում հրեաներով: Եւ նրան մունել եմ մի բանաստեղծութիւն՝ «Ապրումնային» վերնագրով, դա տեսնել է այդ փողոցի հրեատակին, որին խանդապառու եմ ամբողջ արտաջ:

...Եւ նրան անմուսկո չեմ ճանաչում, բայց ստացան տեղեկութիւնների համաձայն՝ բաւականը զարգացած մի հարուստ է: Հանելի է, չէ՞. թէ՛ սիրուել, թէ՛ վարձատրուել:

Իմ ամբողջ ուզանն այդ էր: Երկար լինի պատերազմն ինձ չի հետաքրքրում, պայմանով, որ դա չվերջանայ Քոչաւի մասնատումով, որովհետեւ մենք հիմա համերայեւ ենք ապրում մասնակցականների հետ, իսկ Քոչաւի մասնատումը ազդեաւոր կը լինի Հայաստանի ազգային հասարակութեան համար: Եւ այսպէս եմ գրան:

Աժէն պարագայի տակ, կինս ցանկանում է Եւրոպան տեսնել, եւ յուսով եմ, որ վաղ կամ ուշ այս հարցը կ'որոշուի ըստ իմ սիրելի խարտիչուհու ցանկութեան:

ԴԱՆԻՆՎ ԿԱՐՈՒԺԱՆ

digitized by A.R.A.R.®

1906ին, Գոհար Աղաւորեանի պատրաստութեամբ, Հայաստանի մէջ լոյս տեսաւ Դանիել Վարսմանի «Նամակներ», ուր մէկտեղուած էին բանաստեղծին կողմէ ստորագրուած 102 եւ իրեն յղուած 66 նամակներ, եօթնասուն էջերու վերայ տուալող ծանօթագրութեամբ մը:

Փիւս Եւսէի ուղղուած Վարսմանի արեւ համակը արտագրած ենք այդ հատրիչն:

Առաջին անգամ անկէս հայ իրականութեան ներկայացուցչու Վարսմանին նուիրուած փարիզեան ծանօթ գծաւարձանակներն էլէրէն, 1906ին, մեծ բանաստեղծին յիշատակին արտասանած պերհիզացի մաստրակներն իւտրին մէջ, Փրահայի հինով:

Մեզի ծանօթ չէ տնոր արեւմտահայերէնի վերածուած պատմելը, իսկ արեւելահայերէն Քարգանութեան ընթացողը հանդիպած է քանի մը անգամ, նախ՝ «Արմենակամ» գրականագիրին ամսագրի 1904ի սպրիլին համարի էջերում, Հայի Գաղարեանի մէկ յօդուածին մէջ, Հատուածաբար, եւ երկրորդ անգամ՝ Առաքել Գառնիկի յուշերուն յանդիպման զրայ, զարմաւ հատուածաբար: Գոհար Աղաւորեանի ծանօթագրութեան կ'իմացուի, որ «Նամակներ» մէջ անցած ամբողջութեան Քարգանութեանը հասարած է նորէն Հայի Գաղարեան:

«Սիրելի Գինու, ինչպէս տեսնուած է, այժմ տեղափոխուել եմ Քոչաւ... Եւսէն:

Մենք լինք դիտեր, թէ Փրահայիցի ինչպէս կը հնչէր Վարսմանի չրթերուն, բայց «Ճեղք» սիրտը, «Էկոլման» երգերն եւ «Էլիան» երգը տեսն հատարներով արեւմտահայերէնը նախանձին մակարդակներու բարձրացուցած բանաստեղծին զայն տակ՝ Չարիցի (Էլիան երգը բարեհունչ չէ եւ ինչորոյ աւարկայ) համակը միւս 1911ին մէջ յուրորդին անհարապատ բան մը կը թուի:

Այնքան զժողար էր արեւմտահայերէնի վերածնել այդ քանի մը տողը, որ հայրենի մեր մշտաւարականները թուլ կու սան իրենք իրենց զորքերին: Վարսմանի ստորագրութեանը՝ անուր լիզուական փարթած ժառանգութեան յուրորդին անյարիւր առկերու տակ:

Հնչելով մը լիզուական իր աշխարհին դուքս բերելու Հայի Գաղարեանի աննախնամախնդիր վերադարձին եւ նոյն խորթութեան հանդէպ Գոհար Աղաւորեանի մատնած անզուարտութեան նոյն անկէ զարմանալի է Վարսմանի Փրահայիցի նոյն անակը արեւմտահայերէնով ներկայացնելու Առաքել Գառնիկի պարագան, որ իրեն ալակերտ ուղղակիորէն եւ երկարորէն Վարսմանը իր լիզ-

չական Հարսպատ Կարսիցի մէջ ունկնդրած ըր-
չալով հանգրծ, կը մզէ, որ իր կողման հասո-
րին մէջ Վարուժանի անունով կարգանք զերկու
ստարաց ի վեր անուստացի եւ: Կիմս կուտու է
Արաբիս: մի յարստաց գեղեցկանի, որին սի-
բուս հնչ:

Առաջի Պատրիկ, իբրև աշակերտ՝ իրազու-
նութեան մէջ, եւ իբրև երախտագէտ հոգի՝ Ե-
րևանի թատրոնի մէջ միշտ արեւմտաստեղծին
ունկնդրած է Վարուժանը, նոյնիսկ արեւելա-
տայինով զրի տասն իր յուշերուն մէջ հիշ ը-
բած է հասարակ մտալ յեզրին ու լեզուական
տեսութեան: Բնորոշ օրինակ մը:

«Իմ համար բաւեր տարւոյ Կանկեր են, —
պատասխանց վարուժանը, — ունիմ իրենց ու-
րաց զինագծաւորինը, արժէր ու, մահուանդ՝
խորհրդաւոր ինտուքիսնիքը: Երբ կը ժողոված
տեսնեց՝ իմ մեծագոյն մտանդաւորինս գանձի ի-
րենց մշտնադպրոց տունով եւ ստաղդուքեանը
զեռանդին է: Իմ մտին մէջ տեսնուէ իրաւուն-
չիւրք իր երանցն ունի, կշիռը, սմայանաւորի-
նը, կնիկանաւորինը, բայցը, ճայնիկ հասը...
Բանաստեղծի պարտականութեան է ուրիշն ժո-
ղովան անոնց կնքագիտակցական ճուրք գգայու-
քեանը եւ արտայայտի զարձակ անոնց բախում
գեղեցկութիւններն ու արժէքը:

Իսկ, պիտի քաշինք մենք, յաշտութիւններուն,
Քարգանդիչներուն, խմորիչներուն, մահա-
ւանդ խմորիչներուն պարտականութեան է՝ այդ-
քան մեծ պատասխանատուութեամբ զարժանուած
բուռնուն հանգիւյ յարգանք ունենալ, հասարա-
րիկ մտալ անոնց ինքնութեան, խոսերու միւս ու-
րակներու կարգին նախանմանիչութեամբ պա-
հել նաեւ անոնց նշանակութիւնը: Պակ մը զուրո
զայով արեւելաւորիչով ներկայացուած խնդ-
րոց ստարակայ նամակին լրիւմանին՝ պիտի Հար-
ցնէինք տակաւին, թէ Վարուժանի «Նամակա-
նի» մէջ ի՞նչ զորի ունին այլապէս պատուա-
կան օտ մեր անցկացնիչները, գնացիները, կը վա-
խեւանները, մամապարսիսները եւ մնացեալնե-
րը...»

Որքանային ուն է, որ այս անճառ բաները
անցեալին կը պատկանէին: Եսան Եսանուրի Փր-
բաններին գրութիւնները արեւմտաստեղծի
ներկայացնելու Արաւամ Արեւանի նպատակա-
ւայց փորձին հաջ, կը խորհիք, որ հեղինակի
մը լեզուական տարբերուն ու մթնոլորտին հա-
տարարիկ մտալու սկզբունքը մեր Հայրենիքին մէջ
եւս պիտի սկզբ յարգանք վայելի...»



Փիլիս Մաւր, 1958

...Ատիկա եղաւ իմ բարեկամն հասած վեր-
ջին նամակը: Ապա տիրեց երեք տարիներու վրայ
երկարան լուսինն մը, որ յանկարծօրէն խըզ-
ւեցաւ իր եղերական մահուան գործով՝ Համալ-
խարհային Առաջին պատերազմի ընթացքին,
1915ին: Ես այդ գոյժը իմացայ Փարիզի իր բա-
րեկամներին մէկուն, նոյնիսկ «Անանիայ» հայ-
կական հանգէսի նախկին խմբագրական Արշակ
Ծոպանեանի թերթին: Ուղղակի ցնցուեցայ: Մեռ-
նի՛ւ մտաւորական ծաղկման իրութեան մէջ, հա-
զիւ բոլորած 31 տարեք՝ անտիք էր: Եւ ո՛ր
կը գանուէին կինը եւ զուակները: Կ'ապրէին
սակաւին: Այս վերջին Հարցումը ինձի համար
անպատասխան մտց ամբողջ երեսուներեք տա-
րի, որովհետեւ գանի մը շարքից առաջ մտալ
տեղեկացայ, որ անոնք փրկուած էին: Ապա Խ-
մայայ, որ իբրև արգաս փոխհատուցում, Գա-
նիկ Վարուժան յեռ-մահու արժանացած է շարե-
րակից փառքի մը, որ իր գործերը վերհրատա-
րակուած են եւ լայնօրէն տարածուած իր երկրին
զրական նոր սերունդներուն մէջ, եւ նոյնիսկ մա-
սամբ Քարգանուած են Փրանսիէն: Այս իրա-
զուցութեան է, որ ու՛ր կու տայ ինձի հաստատելու
իր անսահման սաղմոյքը, քանտեսողական իր
նշարիրու հանճարը, Չմոնանք, որ Կանտի հա-
մայարանի իր փրոֆեսորներուն դաստիարա-
թիւնները մեծապէս Հարստացնին իր միտքը,
արուեստը եւ պատկանեցին անոր մասնորոշեան
հիանալի փթթումը: Ատոր մէջ կը կայանայ աշ-
տարանան հանդիսութեան եւ Գանիէլ Վարուժանի
հայրենակիցներուն ու բարեկամներուն երախտա-
դիտական մեծարանքի խորունկ խմտալը:

Գանիէլ Վարուժանի հոգին եւ անոր զորե-
րուն մէջ արտայայտուած ամբողջ ժողովուրդի մը
հոգին կը վերապրի իր, ինչպէս նաեւ Հայաստա-
նի մտաւորականութեան նահատակութեան հաջ-
աչի հոգին, զոր Քուրբերը կը կարծէին ուշա-
քուցած ըլլալ...»

Փիլիս ՄԱՎԻ



Տեղ մը կարգացած էինք, այս
առիթով փնտռեցինք տեղը, կըր-
կին ու կրկին պրպոնեցինք մեր
արմատադուրբեան առկ դանուող
համապատասխան Թուղթիքը,
բայց անկարելի եղաւ մեզի դըս-
տնէլ այն համակող յուրքը, ըստ
որում՝ յետ զէացին նրզքը հա-
տարին ապաղրութեան, Պոլտոյ
մէջ տեղի ունեցած է վարստա-
նին նուէրուած գրական երեկոյ
մը, սուր նշեքարախա բանաստեղ-
ծին առջնակը, ասանածեայ վե-
րանիլը արտասանած է հօրը մէկ
գերթուածը՝ աշկոնեւոյ՛ բոլոր
ներկաները:

Վերանիլը, ամէն ժարդ գիտէ,
Վարստանի վարստանն է, հա-
մանուն բանաստեղծութեան վե-
ցամտեայ հերտուհին, բանաս-
տեղծին Գարունքին ազուտ՛ր, ազ-
աւ՛ր, ազուտ՛ր վարդը, որուն
կենտախալտ բոլըը հողիւ շորս
տարի վայելից հայրը, իր Գա-
րունքին բողբոջած երկրորդ ծա-
ղիկը՝ երեք ասրիէն պակաս ծա-
մանակով մը, իսկ երբորքը՝ ըը-
նաւ, երբորքը՝ իր մանուան օ-
րը նկատ Հայիկը...

Մենք աւելի բան մը չենք գի-
տել վարստանի գաւակներուն
մասին, թէ՛ մը առաջ նշուած ա-
նոնց մօրը զնկուցումէն դիտենք
միտն, որ երեքն ալ ապրեցան
հայրենն ու բաղձողուցին իրենց
տեսակները, իրբեւ տեսակ մը
վրէժիներութիւն իրենց նահա-
տակ հօր ու մողովուրդին...

ՎԱՐՈՒԺՆԱԿԻՄ

Ազուտ՛ր, ազուտ՛ր, ազուտ՛ր վարդն իմ Գարունքիս,
Որ սըրտիս վրայ բացուեցար,
Եւ քեզի հետ բացիր հոգիս վշտանեղձ
Նոր երայի մը պայծառ:

Հին օրօրանն, որ, թաղարի պէս լցուած,
Վ՛րլաթ խըշտեակը սարդին,
Կենդանացա՛ւ ճըրտուղիւնով, բոյնի պէս
Պաճուճուեցաւ վերջասին:

Արեւ մը նօր, շողերուն հետ աչքերուդ,
Հեմիս վըրայ ցաթեցաւ,
Եւ վաւրակին մէջ կաքաւ իմ վիրաւոր
Կարկաչեց երգ մը անկաւ:

Դու՛ն սենեակէ սենեակ քըռար դեղեւուն
Բոյնէն ինկած ծիտի պէս,
Չայնէդ դիպուած՝ այցելեցին տընակիս
Սերոբէներ լուսազէս:

Ազուտ՛ր, ազուտ՛ր, ազուտ՛ր վարդն իմ Գարունքիս,
Եկուր նստէ՛ ծունկերուս,
Թող լուսնակի պէս՝ մըռայլ ծոցս ողողեն
Ոսկի վարսերդ սընդուս:

Հղբայէ վիպս այդ քեներովդ քնքուշ
Նըման ծաղկէ մանեակի.

Ժղպտէ՛ ինձի, որ ցուրտ անդունդը սրտիս
Արշալոյսով բըրնկի:

(Հատուած)

Գ. ՎԱՐՈՒԺԱՆ

Վ. Թ Ե Ք Ե Ա Ն

== Ի Բ Ի Ե Ի Ո Ր Դ Ի Ե Ի Ն Ա Խ Ա Հ Ա Յ Ի ==

Կան քերթողներ, որոնք վարարուն թախիծով մը իրենց ծածկագոթքը կը մըմնջեն, եւ բարութեան, ջնջութեան, դեղեցկութեան դուռ մը կը բանան մարդկութեան համար: Կան՝ որ կեանքէն մեծ աշխարհ մը վրայ կ'արձակեն իրենց դիրենք եւ հրաշահիւս շողապսակ մը կը դնեն մարդկութեան դիմուն: Անոնք կեանքէն մեծ են: Մարդկութեան եւ իրենց ժողովուրդին համար չեն տատամսիր հաշիւ պահանջելէ ըտլար աստուածներէն եւ սասանաներէն: Անոնք հանճարներ են, որոնք աստղակայակ իրենց խօսքը կ'ըսեն եւ իրենց հմայքին տակ կը պահեն դարերը: Ասոնցմէ էր, այս դարուն սկիզբը, հայ բանաստեղծութեան կամարին վրայ իր շքեղ հոգեքանդակը դրած քերթողը՝ Դանիէլ Վարուժան:

Վայրը Պոլիսն էր, ուր լուսնահաւաչ, էթերածուփ եւ քնարեր մեղեգիներ մեր ժողովուրդը կ'որբէին: Երբ 1880էն ի վեր վենետիկեան դասականութիւնը եւ պոյսական դասականութիւնը արուեստի տենդաւար թուրքերուն սանձ կը դնէին: Ի՞նչ պատահեցաւ, ի՞նչ ուժի զարթում էր յանկարծ դարասկիզբին, երբ բաղձույթ ձայնարձակութիւն մը սկսաւ՝ անցեալի յարութեան, հերոսներու սքեկոյժման: Նոր աշխարհ մը բացուած էր, Վարուժան երբ կը գրէր:

Հաննա՛րդ Հայկեամ, Աուսարդեանն օս տօներուն
Արեւափառ,
Ա՛յ վերածնէ փլատակներէն եւ փառագոյ
Քրնարդ ա՛ռ:

Թաւա՛ւն Ուժիմ, յանուս Գեղիմ մտիր մեհեանն
Աստուածներուն,
Ձանդ ձեռքիդ՝ բազմէ բազմ համասփաւ՝
Հուր ու արիւմ:

Ձի մեծք յանուս Սէրիմ, Սերմիմ, Էօւ եիմ Յեղիմ
Մարմարէն կոյս,
Մե՛նք, Ձաւակներդ օգոստափառ, պիտի կերտենք
Նա՛ր Արշալոյս:

Կը տեսէք, որ հետադարձեանէ անդին ճառագուտոյ իմաստութիւն մը կայ: Իր քերթողութեան շեղքը կ'իջնէր, իր բառերով չպարզալուսն, մերկ եւ digitised by A.R.A.R.®

արու: Պատեանէն դուրս քաշուած սուրի շողարձակութեամբ, եւ մեծ սիրոյ խոստովանանքի մը պէս՝ յաւիտենական լուսակրութեամբ:

Ինչպէս կը յայտնուի իր նամակներէն՝ ինքնածրագրուած բանաստեղծութեան մը մէջ կ'ընթանար: Սակայն ինչ էին իր մտայղացքին ներգոյ բաւիղները, ինչ կը փնտռէր մեր հին դարերէն, ո՞ւր պիտի հասցնէր մեզ իր շինած այս հողի եւ հեթանոսութեան շաղախը: Իր բոնկման զիծերը այլատարր են, որոնցմէ՝ ես պիտի ուզէի առանձնացնել երկու զիծերը՝ մարդկայնապաշտութիւնը եւ հայկականութիւնը:

Իր ծննդավայր Բրզնիկէն Պոլիս, Պոլիսէն Վենետիկ, Եւրոպայի այլազան երկիրներ, յետոյ՝ դարձեալ զաւատ, դարձեալ Պոլիս, այս քնարակիրին քերթողութեան ամէնէն տոկուն լարը՝ մարդկային հողիին տառապանքէն կը ձայնանայ: Տրուած էր ան մարդկութեան արիւնլուայ խորհուրդին: Լսեց հասաչակուլ ձայնը մարդկութեան այն խաւին, որուն ազազակը անոր հողիէն կը փրթի, եւ զայն լսող մը հազիւ թէ կը գտնուի: Գրեց մեռնող բանասերներուն մասին, տապահեղձ աշխատաւորներու, երբ մեքենաներու թաթերը անոնց մարմիններուն եւ օրերուն լոյսը կը ճզմեն, հայ դեռատի լուսցարարուհիին հասակին դաւող վարդերուն մասին զրեց. երգեց խաբուած կոշտերուն, թխապարտներուն մասին, բանուորուհիին խօսեցաւ դարձեալ:

Եւ ես կ'ուզեմ անխփել քեզ սրտի՛ս վրայ
Տատրակի պէս տարագիր,
Տալ ուժս քեզ, մրցանակներս փառքի
Եւ ազգամուգն անբասիր:

Միայն թէ դուն չըլլաս սոգոյն ու քաղցած.
Արեւուն տակ չիագաս.
Մօրդ վերեւ չմարի ճրագն ու, ո՛վ քայր,
Դուն գործատուն ա՛լ չերթաս:

Վարուժան՝ զրկուածներու տառապանքին դիմաց ո՛չ աղերսարկու էր, ո՛չ մեղամաղձիկ: Իր կշտապինդ բառերով խաբանեց որդնուած քաղաքակրթութեան մը բոլոր տարբերը. «Եւ ես մեղով կ'ամիծեմ դարուս կաւատ մարդկութեան / Ոսկի ետրքերը բոլոր»:

Մայրացած պարմանուհիները եւ մահաչուկ նորածինները պարուրեց իր բառերու մեղրակաթով: Հեղզ պոռնիկներու կարմրաշառայլ խաւարը, եւ տունը՝ որուն ձեզմալոյսին տակ, գինով բանուորին կնոջ առջեւ ապուրը կը պաղէր՝ իր գգուանուշ բառերով խանձարուրեց: Վարուժան միամիտ չէ՝ կարծելու չափ, որ պիտի յանկարծ արդարութիւնը գոյութիւն ունենայ եւ առօք փառօք հանգչի աշխարհի մէջ: Բայց իր բաց ու ծնրադիր սրտով՝ ուրիշ բարութիւն կը քամուէր, անոնց տառապանքին — եւ ի՞ր տառապանքին — յե նացուլ ըբաւ: Ամբողջ մարդկութիւնը բաղեղող գերազոյն սիրոյ եւ ուժի մշտնջենաւոր թրթուումը կայ իր քերթողութեան արմատէն մինչեւ դազաթը: Ի՞նչ էր իր խիղճին ուզածը: Բանաստեղծ էր. ծնած օրէն զինք պիտի հալածէր ճշմարտի, բարբի, գեղեցիկի եւ արդարի ֆեթիլը: Առաջին օրէն իր բառերու խօփով պիտի հերկէր քառին, արեւուն եւ հողին ուժը:

Երբ օտար գրողներու կամար անցեալը ներշնչման եւ վերանորոգման

համբարել այն քորը տեղերը ուր նախապես մը ինկաւ կամ հերոս մը կոխեց : Մեծ ալմաստ մեծ ենք , որքան որ հազիւ կը խմեմք մեր զգացումները : Ամէն ինչ հող է : Դէպի մեր պայծարում : Որ է՝ դէպի աստուածները» : *Նւրուպայէ մէկ տխուր ոտայնը ինկած օրերէն ի վեր արջայարագծ կտրօտ մը ունէր՝ Մեծն Տիգրանի մասին դիւցազնիւթիւն մը դրելու :*

Բանաստեղծ մը , որ բանտէ անորոշութիւն , եւ ներքին եղեւնէ արտաքին եղեւն կը պարտցնէ իր Հացին երգը , անոր՝ այսինքն քերթողութեան զօրութեան կը Հաւատար տւելի , թէ իր մեծազոյն սիրոյ մարմինն էր , որ իր Հեռ կը պարտցնէր իրրեւ միջթարութիւն , իրրեւ գեղեցկութեան յուշամատանան , իրրեւ տանգոնովի յաւերժական կնիք : Կը գրէր . «Ապագային համար այժման աշխատանքներ ունիւք . քերթողական այժման գեղեցիկ ծրագիր : Սիրտս օրէ օր կը սկարաբայ . ան հարիւր տարեկան ջութակի մը պէս օր մը պիտի փրուի եւ իր վերջին երգը ոչ ոք պիտի լսէ» :



Անցեալ շաբաթ , երբ Վարուժանի «Նամականիչն կը կարդայի , Հայկը , չորսուկէն տարեկան տղաս , տեսաւ ձեռքս գիրքը՝ Հարցուց քունն գիրքն է , ըսի՝ Դանիէլ Վարուժանին . ըսաւ՝ Դանիէլ Վարուժանը ով է . ըսի՝ մեծ բանաստեղծ մըն է : Հայկիկը իր ասմազուն աշուկներով նախ միջոցը չափեց , նայուածքը սենեակին բոլոր պատերուն վրայ պարտցուց , եւ յետոյ ամէնէն ճիշդ Հարցումը Հարցուց՝ մինչեւ երկէնք :

Պիտի մեծնաս , տղաս , եւ պիտի տեսնես , որ Հայերը անՀուն , կապոյտ երկինք մը ունին , ուր Հերոսներ կան անեղծ նարօտներով , որոնք կը խօսին Հեռով . եւ ասոնցմէ մէկը կը կոչուի Դանիէլ Վարուժան , որ մոռցած իր սեփական ցաւը , իր ներաշխարհը , եղբայրացաւ մարդկութեան աստապանքին Հեռ , որ մեր ցեղի ցաւի շիկազոյն միջօրէին՝ իր առաջին բանաստեղծութեան մէջ իսկ գրեց . «Հա՛յր , ես կ'երթամ այն մամբայլե՛մ՝ որ Յիրմակ մագնիւղ զիս կը սամի» : Եւ քուրմի մը պէս իր քերթողութեան թակոյկէն ուժի եւ անմահութեան զինին խմցուց իր ժողովուրդին , որ չողբերգեց իր ժողովուրդին ցաւը . եթէ իր քնարակից Սեանանթոն ցնցեց , սթափեցուց ժողովուրդը , Վարուժան ողբերգեց մեզ , դարձաւ պայքարի որդի եւ բառերու կայլակներու յաղթանակով ոռոգելով՝ իր Հրաշահիւս քերթողութեան ճրգնազգեստը մեզի ժառանգ թողած՝ զնաց Հայերուս երկինքին մէջ տեղ մը . եւ թէպէտ նախատակուեցաւ երեսունմէկ տարեկանին , սակայն կը մնայ Արեւաճառակայ արդէ քերթողութեան ուժին , արուեստին եւ տեսիլքին նախահայրը :

ՎԵՀԱՆՈՅԵ ԹԵՔԵԱՆ

Հոկտ. 7, 1984
Նիւ Եորք

ԱՌԱՋԻՆ

ՍԻՆԱԿԱԿՆԵՐԷՆ

«Մրկակաթն առ հրաշուի» բանաստեղծին ամօթն ու գործին շուրջ ստեղծուած մրմուռարտը վերաբարձեցանք Վոհալ՝ ամեր կենացարտ- րեան ճարտարած բոժիթի գուգանե սրվակնորում տալիճ ժառանգա- կիցնրէն սարացրուած շարակած քիւղ յուշեր ու վիտյութիւններ:

Յիշեալ բոժիթին համար քաղուած էին ձառն կենացայ կաստա- սաւմերը, գարս ճամպատատիւն էլ իրան սնդարիւլ աննարինե- րեան հետեւումբ՝ կը ներկայացնենք սոյն կէին:

•

Գ. Վարուժան մեր ժողովուրդի սուրբ սարածուող նոր գա- րայութիւն ղանաստեղծն է, որ անցեալ ժամանակներու կեթա- նասական հրապարակող աւելան, կու գայ ներկայի անոց հայե- րանութեան մէջ կաթնցնելու այն՝ ինչ որ չէ շուտեմ մինչեւ հիմա, այն՝ ինչ որ նախերգը- ւած իսկ չէ մինչեւ հիմա մեր օրերը... Արդ, առանց վարանու մի Գանիէլ Վարուժանը կրնանք զասել համաշխարհային գրա- կանութեան մեծագոյն զէմբը- րուն քով, որովհետեւ անիկա այնքան յարգարէն, այնքան ներդարար երգած է ուժի գեղեց- կութիւնը, կեանքի գեղեցկու- թիւնը, մէկ խաւով՝ զորանոր, լինթիարի սակայ կեանք տիկե- րական սրբանք մը: Իր քերթը- ւածներէն աւազին մասով կի՛ն հարգարկան արեւէ լեզուի թարգ- մանուի, կի՛ն ոչ առաջին, զի՛ն երկրորդ վերնան մը պիտի ող- ղունեն մեր մեծ բանաստեղծ Գանիէլ Վարուժանին մէջ: Այս է համարումս եւ վերջին խօսքս («Հայ գրականութիւն», 1 Հոկ- տեմբեր 1913):

ՋԱՐԻՆԻ ԳԱՅՈՒՅՆՆԵՆ

•

Յազականցութիւն մը չէ ըսել, թէ տարեկան հրատարակութիւն- ներու մէջ ամենէն ուշադրուած է ճնաւաստրոգ պրական եւ զեղար- լեստական տարեկերթը Գանիէլ Վարուժանի եւ Յ. ձ. Սէրու- նիի, որ այս օրերս հրատարակ կու («Բիւզանդիոն», 11 Նոյեմ- բեր 1913):

ԵՐԻՆՈՒՆԻՆՈՒՆ

•

Երիտասարդութեան, զերդան- ջազէս երիտասարդութեան գերբն

է «Հեքամեոս երգերը: կեանքը կը բարտիւն Ընծ Ծայրէ Ծայր: Հոն սէր կայ, խանդ կայ, զորով կայ, զգլխանք կայ եւ արշուտնք կայ եւ անոց քով կայ նաեւ զար- բոյթ, կիրք, վրդովանք, յուսա- հատութիւն ու յափանք, այս, որովհետեւ այդ բոլորը կան կեանքին մէջ եւ բանաստեղծին ժառանգը բոլոր լարերը կը հըն- չեցնեն («ՇԱՌՔ», 1 Յունիս 1913):

ՓԱՅԼԱԿ (ԺԱՄ ՍԱՅՈՒՅՆՆԵՆ)

•

Երէկ Գուրեանն էր մտաւորա- րը հայ բանաստեղծին, իսկ այ- սօր Վարուժանն է ու պիտի մը- նայ սրտով ասին որ հայ ցեղին սիրուը կը արտփէ իր պաշտնի գանկին մշակուած զորին վրայ («Արարատ», 25 Մայիս 1911):

ԼԵՆԻՆ ԵԱԼԱՐԻՆՆԵՆ

•

Պ. Գ. Վարուժան, ու ամբիւս մեր ամենայնոր համարումն է, հայ մեծագոյն եւ կատարելագոյն քերթողն է. ան մեր շիւթն, մեր Պրատնիկն է, զերթարութեան արունատը, ունի եւ լեզուի կա- տարունութեան, ինչպէս նաեւ բովանդակութեան ու յազարմի խորութեան տեսակէտէն ոչ մէկ քերթող համաշխարհային գրա- կանութեան մէջ չէ կրցած դերա- ղանցել պիտի: Վարուժանի գե- րազանդները մարդկութիւնը մա- տի վրայ կը հաշուէ... Պէտք է առանց չափազանցութեան եր- ճիւղն ունենալու, առանց սպա- ժուլ եւ ինքնախար շլլալու վրե՛ն ունենալու կրկնել թէ Վարուժան տիտան քերթող մըն է («Հայ գրականութիւն», 1 Մայիս 1913):

Յ. Հ. ԳԱԼՈՒՆՃԵՆՆԵՆ

Հ Ի Ն Ե Ր Ը

Գաղափարի օրերէն միմեծ ճիւղակեան տարիները, հետեւելով օգտակար սկզբունքներու, արեւելանայ մեր գրողներն ու մտաւարկողները, հազուադէպօրէն փորձած են իրենց միտքն ու լինելը քանակ մար օպտիմիստներու և արեւեստի յանդուգն ճիւղակներու: Աւանդու- բեան այդ բաներ պատուարը, ինչպէս Յրատ հնէ տարբեր ատիքներու, կրցան քանակ միայն վերջին բառերը դարուն համար նկատ դեմքերը և, օգտակարուն անդին անցնելով՝ ողբշուով նաև զուտ ցեղեցկու- րեան ու մար ճիւղակ փայտակարաններով:

Ձիւրնու հորդքան և սրծնչախերու բարեշքիւնն այս հոլովայքը զգալի դարձու նաև վարուժանի ատիքով, որուն հեր-տակարանն օղ- զումներուն և յայտնաբերած շա՛ի և զեղեցկութեան ճառագայտաւիտ մերքիններուն զիմաց կիները անհանգիստ զգացն իրենք զիրենք միշտ, իսկ հորերը երբեք չկրցան զազնի իրենց հրացումը:

Կամօղ էլերուն վրայ տրուած քրքրեցնելուն հետ՝ բարուն է կարգալ քան մը մնայ ևս, որդեկի ունի շոշոփելի դառնամ վարու- ժանը իր բուն սեփն մէջ գնահատելու հար զեմքերուն անայտակարար յայտնելները:

● *զեղեցիկ ու ճշակուած ձեռք բե- րադարձը զհզի հայկական շին րիւղի: Գրախոսականին եղ- կրեալ, Հեթանոսութիւնը: Դա ներք բանաստեղծութեան արժ- Միւսմանթա ևս որոնք զնուծ են բովանդակութիւնն ուրիշ է: Դա ման նեւթը, մարմին՝ կրգի հա- նրանց շաղցում, իրիւն են իրենց նոյն սնամէջ ազգամտութեան մար, արգիւնքի ու հեշտանքի կարգերը հայ ժողովրդի կեանք... արեան է, դա նոյն զարհուրելի համար, մարմին՝ նայու, մար- նրանք իտէպիները որոնուծ են բառերի սքըն է, դա նոյն անի- մին՝ շոշոփած, մարմին՝ ալլան- անցեալի մէջ ևս իրական կեանք- մասս բառերի կոչան է, որը ծա- զու... Մեր բանաստեղծները զի միտուածները թարգմանուած են նոթ է մեզ վաղուց ու վաղուց աչքերը զնու կրգի գերին են, ա- անհարազատ ու մթին պատկեր- (հերկերի մագլմանք, Բ. հա- կանքները՝ հեշտանքի կարտա ու ներքով՝ միանգամայն խորթ հայ տար, Երեւան, 1901):*

ՎԱՀԱՆ ՏԵՐՅԱՆ

● (էնվիտա, 23 Մարտ 1914):

ՆԻՊՈՒ ԱՂԲԱՆՆՆ

Pessimist (ԻՍՍԼԱԿ ՏԵՐ-ՎԱՀԱՆՏԵՆՆ)

● *Վարուժանի շինքանու երգի- քի կենտրոնը միմիայն հեշ- անքն ու տոփանքն է... Սեռա- կան հրատաղը մտապրիւ է նրան իրական աշխարհը, պարտաբեկ աստանիկ պարտաբանքի մէջ ևս միանգամայն իւնի նրանից զե-*

● *Վնասաբողբանք բանաստեղծու- թեան մասին... Է՛նչու՞ն բուն- քի կուտակուածներ, որոնք չեն արտայայտուած ոչ մի պայտառ միտք կամ զգացում և ուրեմն ծուռութիւնները, որ անուծ են, չեն կարող ընթերցողի մթին զգ- թեպէտեւ գուցէ շատ շնորհալի բարուժները և միտքը պարզել գորտներ, անուանելով այդ վե-*

● ՅԱՐՈՒԹԻՒՆ ՍՈՒՐԻՆԱԹԵՆՆ

ԵՒ ՆՈՐԵՐԸ...

...Ինչ խօսք, ա-նւ-մաս-նա-լ բախտակցիները, հակասակ վա-հան Տէրեանի սեպւ, աւելի ճիշդ միակողմանի յարձակման ընդ-դէմ Հեթանոսական թեմայի, ինչ-որ շափով հասարակական պարտք էին կատարում զայնքի առաջ, սերունդներին ներարկելով ա-րեւ-թեան ոգի: Հեթանոսական թեման՝ ժողովրդական աստիճանի գեղեցկութիւններէ խոր բնորոշ-մունքով գեղեցիկ մարմնի եւ ո-գու խոր պաշտամունքով, ար-դիականութեան որոշ երանգաւո-րումներով, դրամատիքական հա-տարակութեան քննադատութեամբ Հեթանոսական էր արդային-գա-ղաքական լուրջ նպատակ, սե-րունդներին հայտնելով կենսա-կան զրգոյններ, ապրելու եւ պար-գարելու եւանդ, նորագոյն կրո-նականութեան նկատմամբ ծնունդ ու-րունդի շահագրգռութիւններ... Հեթանոսարար, այդ թեման ծը-նանդ էր առել արդային հիմքի վրայ, որով խնայում կատարում էր հայկական նորագոյն դեմոկ-րատական դաշափարարականութեան Հետ (գոյնզիման պատմութեամբ Զառուկիներում, Երեւան, 1971):

ՀՐԱՆՑ ԹԱՄԱՐԱՅԵԱՆ

...Վարուժանի յղացածը ժո-նուհեմալ է: Նրա հայտնողը մարդկութեան պատմութիւնն ընդգրկում է խոշոր ժամանակա-հատուածներով, երևոյթները ոճ ու պատկերով, զենչ այն եւ-զիտում է մեն մասնագիտներէ խօսող բարձր մէջ, զանեւ վեհ-մէջ: Վերջումս երգիքի էութե-անի վերջին կատարողան է Հերոսականի, ուժի, գեղեցիկ կենդանու շրջանակներով: Այս տեսակէտից զրգի երկու բաժին-ները որքան հակադրուած, նոյն-քան էլ լրացնում են իրար: Հե-թանոս դարերի ճիշտագոր կեն-ցաղի ստորագիծները՝ կամքի ազատութիւնը, քնակներ, ներ-գայանակ, Հերոսականի պաշա-մունքը նաեւ 20րդ դարի, ինչ-



Գործ՝ Էդուարդ Մարգարեանի

պէս նաեւ բոլոր ժամանակներէ մարդկութեան նպատակն է... (Լեւոնտովյան գրականութիւն, 1984, թիւ 6):

ՎԱՆՏԱՄԻՐ ԿԻՐԱՎՈՍԵԱՆ

...Վերջումս երգիքը շարքի կան դարերը, զենչ այդ զարե-նի-թը՝ գեղեցիկ հոգու, գեղեցիկ ընթացիկներն ու զմեան ասա-մարմնի, գեղեցիկ սիրու, նուր-ամենակրք, զենչ այդ դարերին բուժի ու ներգայանակ կենքի բնորոշ ուժի, կրճի, անասն՝ պատկերները քանասանցիկ թա-արատութեան, վայելչի, մարմ-նազրում էին կենսակց այդ նախնի գեղեցկութեան խորհրդ-ները:

ՎԱՐԳԵՆ ԳԱՐԻԿԵԼԵԱՆ

...Վերջումս երգիքը շարքի կան դարերը, զենչ այդ զարե-նի-թը՝ գեղեցիկ հոգու, գեղեցիկ ընթացիկներն ու զմեան ասա-մարմնի, գեղեցիկ սիրու, նուր-ամենակրք, զենչ այդ դարերին բուժի ու ներգայանակ կենքի բնորոշ ուժի, կրճի, անասն՝ պատկերները քանասանցիկ թա-արատութեան, վայելչի, մարմ-նազրում էին կենսակց այդ նախնի գեղեցկութեան խորհրդ-ները:

Իսկ Վերջումս կան դարերը, զենչ այդ զարե-նի-թը՝ գեղեցիկ հոգու, գեղեցիկ ընթացիկներն ու զմեան ասա-մարմնի, գեղեցիկ սիրու, նուր-ամենակրք, զենչ այդ դարերին բուժի ու ներգայանակ կենքի բնորոշ ուժի, կրճի, անասն՝ պատկերները քանասանցիկ թա-արատութեան, վայելչի, մարմ-նազրում էին կենսակց այդ նախնի գեղեցկութեան խորհրդ-ները:

...Վերջումս երգիքը շարքի կան դարերը, զենչ այդ զարե-նի-թը՝ գեղեցիկ հոգու, գեղեցիկ ընթացիկներն ու զմեան ասա-մարմնի, գեղեցիկ սիրու, նուր-ամենակրք, զենչ այդ դարերին բուժի ու ներգայանակ կենքի բնորոշ ուժի, կրճի, անասն՝ պատկերները քանասանցիկ թա-արատութեան, վայելչի, մարմ-նազրում էին կենսակց այդ նախնի գեղեցկութեան խորհրդ-ները:

Այս երկու զերթուածները Վարուժանը կ'առաջնորդեն հոն՝ ուր աստեղծ մը ի վեր կը ձգտէր, այսինքն՝ բանաստեղծական աշխարհի՝ ըմբռնողութեան մը ու աշխարհի՝ լեզուի մը, որ իր ժողովուրդին արթնցող դիտակցութեան եւ լինելութեան պայքարին համապատասխան ըլլար:

Երբ քանի մը տարի ետք՝ 1911ին, «Հայ լեզուի ինդիք» հարցումին կը

պատասխանէ երիտասարդ բանաստեղծը, այնտեղ հետեւեալ կարծիքը կը յայտնէ.

«Ամէնէն աւելի ուռնացած կը գտնուի քերթագական լեզուն, որ ազգակի գարգացաւ հայ ժողովուրդին շունչին տակ՝ ջանալով պատկերել հայրենիքին ցաւերը, բմբուսացումները եւ հեռանկարը իր քաղաքային յուսատուերով: Ժողովուրդին ջգագրգիւ, գերագայնիկ եւ արիւնայեղջ ծոցին մէջ սաղմնարուեցաւ այդ լեզուն, եւ ան ամէնէն աւելի հարստատ կերպարաններ կը մերկայացնէ Եղիշէի քարբառին: Վարդամանց դարը եւ փետայինբռու դարը՝ որքան եղբակաւն եղան՝ այնքան ալ հերոսական են: Այն երկու դարերն ալ տաւին իրենց մեծ ու պզտիկ դիւցազներգութիւնները»:

Սակայն պէտք է աւելի մօտէն հասկնայ Վարուժանի հոգեկան աշխարհը: Տուեալ հատորին մէջ «Հօրս բանտին մէջ» բանաստեղծութիւնը կը բացուի այսպէս.

Դեռ փաֆր էի, եկայ քեզի մեմուար,
Մուք զընդամին մէջ այցի:
Մայրս հիւանդ էր - կը շրջէի ե՛ս ազատ .
Մէջտեղ բանտի եւ մահե՛ծի (էջ 66):

Ահաւոր փորձառութիւն մը պէտք է ըլլայ այս մէկը հայրը փնտրող պատանին համար: Եթէ 1895-96ի կոտորածները, հաւաքական խմաստով, կը դրսեւորուին իր «Ջարդը» բանաստեղծութեան մէջ, անոնց անհատական առջնադարձը կ'երևի վերոյիշեալ մէջբերումին մէջ, որ ուղղակի արձագանքն է Թէոփիլին ուղղուած 1 Նոյեմբեր 1908 թուակի նամակի հետեւեալ տրամադրութիւններուն. «...գիւ տարած են Պալիս 1896ի կոտորածի օրերում, ուր հայրս արեւմտ ստրապիին մէջ փնտրել յուսահատ՝ գտած եմ բանտին մէջ այն տխուր օրերում ստորէն ամբաստանուած»(12):

Պարզ է, որ այս անհատական թէ հաւաքական փորձառութիւնները խոր հետք կը ձգեն երիտասարդ բանաստեղծին հոգեմիտակին վրայ, երբեմն «Հայնոյանէջին նման բիրտ հակադրեցութիւններ ստեղծելով, երբեմն ալ տեսնելով «Ցիւտսներ քըմընրած», եւ սրբութիւններ՝ ցեխի մէջ: Ինք պիտի փորձէ պատկերացնել այս ողբերգութիւնը, ապա երգել «Ինքնագնի մը սուրին» կամ շեփորէլ եղեղնեայ զրչէն փող-բոց ժայթքող պայքարը:

Եւ մտասահարբ այս է պատմաւոր նաեւ այն իրողութեան, որ երբ ազգային հարցը կը յուզէ զինք, բոլոր այլ նկատառումներ երկրորդական կամ երրորդական փլանի վրայ կ'երթան, կը նահանջեն, կը նահանջէ նոյնիսկ ընկերավարական գիծը, որ «Սարսուռներուն» կամ «Հեթանոս երգերուն» մէջ յատկ ձեւ ունի: Այս խմաստով, բանաստեղծին կողմէ «խոստովանութիւն» կարելի է նկատել Արշակ Զօպանեանին ուղղուած իր մէկ նամակին հետեւեալ պարբերութիւնը.

«Դարերով բնդիւստուած տռնմային փառանդ քաղաքակրթութեան թեւը ճեպ առնելու է եւ շարունակելու (...)

Համայնարանին մէջ ընկերվարական գիտակցական հաստեմ մը կը շրջապատէ զիս, բայց — ի՛նչ կ'ուզէ ըսէք — հագիւ մեր հին փառքը երեւակայութեան թօնչեմ կը հրահրեմ՝ իմքիրմէս բոլորովին դուրս կ'ելլեմ»(13):

Եւ Վարուժանի ազգայնականութիւնը յաճախ որեւէ սահման չի ճանչնար:

«Սարսուռներու ծանօթ բովանդակութեամբ հրատարակութիւնը պատճառ կ'ըլլայ, որ Վարուժան անմիջապէս խորհի իր ճաղային» բանաստեղծ-

ծուծութիւնները խմբելու այլ հատորի մը մէջ, ինչ որ «Յեղիմ սիրտը» դործին ինքնուրոյն նկարագիր կու տայ: Իր առաջին հատորին հրատարակումէն ետք, կը տեսնենք, որ Վարուժան յստակօրէն դիտէ, թէ ինչի կը միտի կամ ուր կ'երթայ: 1906ին արդէն, տոգթ. Ռաֆայէլ Պազարճեանին դրած նամակի մը մէջ, կը խօսի «Հայրենասիրական» քերթուածները խմբելու մասին(14): Երկու տարի ետք, Արշակ Զօպանեանին յղուած այլ նամակի մը մէջ, կը խորհի «քաղաքովիմ մտնումակամ եւ ասրուած» բանաստեղծութիւններէ կազմուած այլ հատոր մը կազմել(15), որ, ինչպէս պիտի տեսնենք Հետագայ նամակներուն մէջ, «Հեքիմնոս երգեր» պիտի կոչուի եւ լոյս տեսնէ... 1912ին, Իսկ 1909ին, Գառնիկ Գլըճեանի գրուած երկտողի մը մէջ, Վարուժան կ'ըսէ, թէ «Հացիմ երգը» պիտի սկսի յատկապէս գարնան(16):

Եւ Հաւանաբար այստեղ կը կայանայ Վարուժանի ստեղծագործական հարուստ արտադրութեան գաղտնիքը: Ան ոչ մէկ կէտի վրայ կը մնայ գտնուած. շատ լաւ դիտէ, թէ ուր կ'երթայ եւ այդ ուղղութեամբ ալ շարունակ կ'աշխատի: Իսկ երբ ստեղծագործական ուղղութիւնը ճշդուած է եւ գործական արտաբերի գիտակից է բանաստեղծը, մնացեալը բնականաբար կը յաշտօղչէ:

«Յեղիմ սիրտը» հատորին հրատարակման յաջորդող Ե-Յ տարիները Հաւանաբար ամէնէն շահեկաններն են Վարուժանի ստեղծագործութեան Հոմար: Սակայն, ի՞ր իսկ խոստովանութեամբ, Վենետիկն ու Պելիքան կարեւոր ազդեցութիւն ունեցած են իր ստեղծագործութեան Հոլովոյթին վրայ: Իսկ «Ինչպիսիք» իր մշակութային, ընկերային, նոյնիսկ աշխարհագրական րուտայնեցում կարեւոր ազդակ է գրողի մը Հետաքրքրութիւններուն, ճշտաշահիչներուն ու մտածողութեան Հոլովոյթին կապակցութեամբ:

Ներուպական շրջապատին մէջ է, որ անկախ ազգային հարցին արծարծած տազանայէն, Վարուժանի մէջ կը զարգանայ պատկերային մտածողութիւն մը, որ, իր արեւելեան երեւակայութեան խառնուած՝ շփոյ կառուցումներու եւ պերճակեղ պատասաններու իրագործման կը միտի: Այդ վարդերուն մէջ է նաեւ, որ մարմին կ'առնեն իրապաշտ նկարագրի եւ ընկերային բնութեամբ բանաստեղծութիւնները, որոնք ապագային պիտի կոչուին «Գողգոթայի ծաղիկներ»: Զարմանալի՞ կը թուի այս երկու տարբեր Հոսանքներուն մէկտեղումը մէկ բանաստեղծի, կամ նոյնիսկ մէկ հատորի մէջ...: Պէտք չէ մոռնալ, որ շատ մը բանաստեղծներու, մանաւանդ տազանդաւորներու դործին մէջ մէկէ աւելի երակներ կան, ձայներ կան, որոնք զուգահեռաբար կը զարգանան եւ, երբեմն ալ, խաչաձեւումներ ու նոր համագրումներ կ'իրականացնեն: Իսկ Վարուժանի արագ զարգացումը՝ վիպապաշտութենէն մինչեւ իրապաշտութիւն, հարուստ ենթակող պատրաստած է այս առընչութեամբ:

Բանաստեղծին պատկերային մտածողութեան առնչուած մէկէ աւելի ակնարկութիւններ կը գտնենք իր նամակներուն մէջ: Օրինակ, Քէրդիկին ուղղուած իր այդքան ծանօթ նամակ-ինքնակենսագրականի մէջ ան կ'ըսէ.

«Երկու միգավայր ազգած են վրաս — Վենետիկը իր Թիցիանակ եւ Ֆլաուրը իր Վամ-Տեգնիսով: Առաջինիմ գայմերը եւ վերջեւոյն բարբառա իրապաշտութիւնը յօրինած են վրինս՝ գոր սնախառութիւնս ունիմ բարբառը բլլտու միսիայն հայրենի եզիմ որչամ կարմիրիմ մէջ եւ ծովածուփ արեանը»(17):

Շահեկան չէ՞ այն պարզան, որ բանաստեղծը իր Համեմատութիւնները կը գերցնէ արուեստի այլ մարզէ մը եւ իր ստեղծագործութիւնները կը նմանցնէ երկու ինքնուրոյն նկարագրով գեղանկարչներու ստեղծագոր-

ծուխեանց, Աւելի՛ն. Վարժաւն կը զատորոյն Թիցիանի զոյներն ու Վան-
Տեքի պատաստներուն բարբարոս իրապաշտութիւնը, եւ այս երկու յատկա-
նիշները Հարազատ են ճշմարտութեան երգիչներու հեթանոս միջավայրին:

Իսկ 1911ին, երբ Բրզնիկէն կը գրէ Մերուժան Պարսմեանին եւ ակ-
նարկութիւն կը կատարէ իր ուսանողական տարիներու եւրոպական միջա-
վայրին, հետեւեալ պերճախոս խոստովանութիւնը կը կատարէ. «Ճնն առանց
պատկերի անկարելի կ'ըլլայ իմծի խորհիլ իսկ»(18):

Պատկերներով մտածելու վարժութիւնը, հակառակ Եւրոպայի մէջ
կազմուած ըլլալուն, հետը պիտի մնայ, միշտ: Սակայն ինք դիտակից է նաեւ
այն հանգամանքին, որ անհաստական ու հաւաքական ապրումներուն նկատ-
մամբ որոշ տարկաշահանութիւն պէտք է ցուցարարէ, ինչ որ կը մղէ զինք
փնտռելու՝ «...անհաստական հոգիիս հետ [առընչուող] բնոր objectif գե-
ղեցկութիւնները»(19):

Պատկերային մտածողութեան այս գիծը ամէնէն աւելի ճշմարտութեան եր-
գիչներու հեթանոսական շարքերուն մէջ կը գրեւորուի, ուր «Վեմետիկներէն
մինչեւ Նեղոսի վրայ ծփացող «Կղզապատար»ները, եւ Վերնիկան քաղա-
նիքներէն մինչեւ ճշմարտութեան կը տողանցեն: Այնտեղ պիտի փորձէ իր նե-
քաշարհին մտերիմ յոյզերը հասկնալ, ինչպէս եւ՝ «արտի ծիրանը, զիզե-
րու կծկումը», առաւել՝ կ'ուզէ ճշմարտութեան հետ զինք գրել(20): Սակայն հոն
գոյութիւն ունի նաեւ վերակենդանացումը անցեալի արժէքներուն, հեթա-
նոս ընկերութիւն մը՝ իր կիրքերով ու կենցաղով: Եւ այդ անցեալը միմիայն
հայկականը չէ, այլեւ յունա-հռոմէականը եւ արեւելեանը:

«Ճարմը» բանաստեղծութեան երկրորդ բաժնին մէջ Վարժաւն կը փոք-
մէ սահմանել այն աշխարհը, որ զինք այնքան առիւթած է.

Փա՛ռք մեծագոր կենցաղիմ ապետական դարերում՝
Որ պաշտուեցաւ Գեղեցիկիմ ու Զօրութիւնը արքում,
Եւ խորհրդամիջը անմահ Գեղեցիկիմ, Զօրութեամ՝
Փրփուրներու Գիցուիմ բարեմիջերով ուղեւորում:
Փա՛ռք ձեզի միշտ, գանգրեմեր ա՛վ տապալեալ արդիւնից,
Որոնց գրեւոր վերաբերում լանջերում տակ բարախեց
Սիրտ մը յաւէտ անձնուէր՝ տղկարներում, ընկճուածիմ,
Եւ Գեղամի կիներում, առանց մարմնայն բիւր գանձիմ:
...Փա՛ռք ձեզի միշտ, ա՛վ դարեր ապետական կենցաղիմ,
Որ մարդիկ հօգր եւ անկեղծ էիմ նման գիմիմիմ:
...Բայց այսօր չե՛մ բանգակեր սուսերներով կարավի
Գեղեցկութեան սուրբ Բագիմն՝ ուր իգութիւնը խղճկուի:
Բաւական է լի գաւաթ մը Միւսիթի գարեջուր
Որ աճարդի հանուած սերը գնեմ մարդիկ էրէիմուր,
Սէր վաճառուած, ոչ նախաբան՝ ինչպէս պտակ սարդեմի
Զօր հերոսիմ համար սուրմ աստուածներէմ կ'ընդունի (էջ 147-149):

Անկախ հոս եւ ընդհանրապէս գործածուած բառապաշարէն, որ, իր
կարգին, որոշ ժամանակաշրջան մը կենդանացնելու կը ծառայէ, կը տես-
նենք ճշմարտութեան մարդ արարածը կրկին այնպիսի կենցաղի մը մէջ տեսնե-
լու, ուր կը տիրապետեն դեղեցիկը, ուժը, անկեղծութիւնը, կարեկցութիւ-
նը, եւայլն, որոնք կը հակադրուին ներկայի կենցաղին, ուր մարդու հերո-
սական ձգտումներէն ոչինչ մնացած է, իսկ սէրը կարելի է գնել գարեջուրի
բաժակով մը: Սէրը եւ սեռը՝ իրենց լրացուցիչ երկու երեսներով, անբռն-

բուժիչները կը նշեն այդ դիցարանական-հեթանոս անցեալին ու միապաշար ներկային:

Փաստորէն, դիւցազնական շունչով դրուած այս վիպերգին մէջ, Բագրատունեաց Տրդատը կրնայ կենթ մը համար ամէն ինչ վտանգել, նոյնիսկ սեփական կեանքը: Նոյնն է պարագան հեթանոս կնկան: Մեն կիրքերու, խորունկ ապրումներու եւ ձգտումներու դարաշրջանն է, ուր ամէն ինչ կեանքէն մեծ, դիւցազնական եզր մը կ'առնէ:

- Մարդու եւ կենթ այդ ապուշ, բնական, ու կեղծ բարոյախոտութենէ հեռու յարարներու թիւերը կը դռնենք այլ բանաստեղծութիւններու մէջ եւս, ինչպէս՝ «Օրհնեալ ես դու ի կանայս...»-ին, «Գրգամէճ»-ին, եւ, մա'նաւանդ՝ Հ. Ռ. Ռ'վ կալագէտին մէջ, ուր բնութեան վերանորոգումն ու կենթ արարչագործութիւնը զուգահեռաբար կը պարզանան:

Հակադրաբար՝ համակրելի ոչինչ կայ «Փողգոթա»-ի ծաղիկներուն մէջ, ուր բարոյական եւ ընկերային արժէքներու անկումին իսկ պատճառով՝ մարդը կորսնցուցած է իր աստուածային արողութիւնը, վերածուած է շահագործողի եւ շահագործուողի, իսկ մեքենաները կու գան աւելի եւս դիւրացնելու անոր շահագործումը: Այս պատճառով ալ, աշխատանքի դացող բանաստեղծին որքան ալ պաշտելի ըլլայ բանաստեղծին համար, խանդարեալ ատողութեամբ, սնունդի եւ սիրոյ կարօտ արարած է:

Անուշա ծարարարունեստական Յեղափոխութիւնը, Վարուժանի նշաբազբած ձեւով, ասիական Հայաստան կամ Օսմանեան կայսրութիւն չէր ժըտան, առաւելաբար ծնունդն էր բանաստեղծին եւրոպական փորձառութեան (21), սակայն մ'չ Պոլսոյ մէջ, ոչ ալ գաւառի մէջ Վարուժան դուած էր այն արժէքները, որոնց կը ձգտէր: Դարերու գերութեան լուծին առկ' իր ազգակիցները եւս կորսնցուցած էին կեանքի այն հերոսական պատկերացումը, զնդիցիկ ու ազնիւ արժէքներու ձգտումը, զորս բանաստեղծը կը փնտռէր: Անուշա նման արժէքներու եւ ժամանակաշրջանի մը վերակենդանացումը՝ նոր հորիզոններ ու նոր ձգտումներ ստեղծելու ճիշդ մըն է ինքնին:

Եւ երբեք պարագայական չէ, որ «Հեքմառն Երգեր»ուն մէջ առնուած են երկու քերթուածներ՝ «Փատգամաւորներ» ու «Նիքրմն խոսողներ»ով, որոնք ներկայէն վերցուած կերպարներ կը բերեն...: Որովհետեւ անոնք տիրպարներ են, որոնք կը պայքարին անցեալի դիւցազնական բարոյութեամբ: Անոնցմէ մէկը՝ զերբի եւ յեղափոխութեան սպասարկու մը, բանաստեղծուած է Մետեիսի բանտին մէջ, իսկ միւսը նահատակուած՝ դրացի ժողովուրդի մը ազատագրման համար, եւ դադարին մէջ կը ննջէ աստուծոյ մը պէս:

7 Գագազմ արդէմ փակուեցաւ... վերամ վարդիբ Եիրագի,
Սուր մը երկայ, դեռ ընդմիկ, ուրիշ արիւմ կը ետսի:
Կախարչիմ սակ կը ճրքիէ, ամմանութեամբ սրբարբած,
Շանթն Աստուծայ՝ խորտակուած (էջ 321):

Այս իմաստով ալ կը անենք, թէ «Հեքմառն Երգեր»ու առաջին բաժինին մէջ գիտնելու անցեալի դունազեղ պատասանները, սիրոյ զնարական երգերը, ընկերային անարգաբութիւնը պատկերացնող քերթուածներն ու հերոսներու նուիրուած բանաստեղծութիւնները հարուստ ամբողջութիւն մը կը ներկայացնեն:

Եւ երբ Վարուժան կ'ըսէ. «Անցեալը կը պաշտմ եւ ի հեճուկս ապագայազարմներուն»՝ անցեալապաշտ դարացը պիտի հիմնեն (22), պարզ է, որ

արտայայտութիւնը բառացիօրէն պէտք չէ առնել: Ժիշդ է, որ Վարուժան Հեռու է ապագայապաշտներու դրական հանդանակէն, սակայն զանցեւայալատութիւնը իրեն համար արժէքներու համակարգի մը փնտտուքն է եւ «Ցեղիմ սիրտը» հատորով մարմնաւորուած ազգային-հասարակական ապրումներու շարունակութիւնը:

«Էնքանոս երգեր»ը Նոյն ատեն կը բերեն մեր օրերու առաջին բանաստեղծութիւնները, որոնք կը դրադին Գաղափայիմ, քաղաքարեակ մարդու կենցաղով, հակառակ անոր, որ հիմնականօրէն կը կեդրոնանան մարդու շահալործման եւ մարդ-մէքենայ յարաբերութիւններու նրեւոյթներուն վրայ:

Աւելին՝ այս հատորը գրական հասունութեան մը լաւագոյն դրաւականն է:

Վարկեան մը կանգ առնենք վերի մէջքերումին վրայ: Տուեալ եւ յաջորդող տուններուն մէջ վիպապաշտ նկարագիրով կամ ապրումներով սրտակերներ կամ արտայայտութիւններ չեն պակսիր, սակայն այնպիսի՝ դուստր կեցուածք մը կայ ամբողջութեան նկատմամբ, այնպիսի հակակշիռ մը զգաստմանը հեղեղին եւ բանաստեղծութեան հասարակութեան վրայ, այնպիսի թելադրականութիւն մը կը բխի սողերէն, որ եթէ «Սիրտը» (կամ «Պատգամաւորներ») բաղդասանք նախորդող հատորին նոյն նկարագիրի քերթուածներուն հետ, կը տեսնենք, թէ որքան զարգացում արձանագրուած է լուսին մը տարուան ընթացքին:

Գալով յաճախ հորովուած Վարուժանի իրազատութեան, որ գլխաւորաբար ընկերային բանաստեղծութիւններու կարգ մը նկարագրութիւններուն կամ սրտակերներուն մէջ կ'երեւի, եթէ իր նեղ սահմանումին մէջ առնենք, կը տեսնենք, որ այդ գործերուն մէջ իսկ, քանի-քանի ատիթներով տեղի տուած է զգացական, փաթեթիւ պատկերներու, օրինակ, «Սպասումներն վերջին տունը»:

Իրազատութեան այն միւս՝ ընդհանրական հասկացութիւնը, որ Վարուժանինն է, զոր անգամ մը մէջբերեցինք, ուր իրապայտութիւնը կը ներկայանայ իրբեւ համադրութիւնը զայն նախորդող շարժումներուն, առանց վարդապետական հանդանակներու կամ կաշկանդումներու, իր դրսեւորումը կը գտնէ «Էնքանոս երգեր»ու էջերուն: Երբեմն այս կամ այն լարը աւելի ուժեղ կը հնչէ, սակայն գործին ամբողջութիւնը նուրբ հուսարակչութեան մը իրականացումը կը մնայ:

Այս շրջադիմին մէջ հետաքրքրական են, որ խոհական կամ անձնական մեւի քերթուածներ, «Տրտումը»-ին եւ «Էլուսին» նման, ինչպէս կը զարթոյնան:

«Տրտումը»-ը երկար զրոյցի մը մեւով զարգացող բանաստեղծութիւն մըն է, որ ինքնազննումի կը միտի եւ խոստովանական շեշտ մը կ'առնէ եւ, Նոյն ատեն, մտածումներու ու խորունկ ապրումներու յաջորդական թլիգներ կը բերէ: Ոտքը Եղիա Տէմիրճիպաշեանի ուղղելով՝ բանաստեղծը պիտի ըսէ:

Գուց ար օր մը, ո՛վ Հընդիկ, բռնուած ցուէն համաքիզ
յոյսիկիմ մէջ Մրտայի, բայումներով առլըցուն,
Անյայտամալ ուզեցիր բուստերում տակ լուսաշիթ,
Բնաւ երբեք չըսեսար՝ քէ ինչպէս շուրջ փարթամ
Կը ծիծաղէր բռնութիւն, ախարսեքն եզբքիմ
Կը ձիւնիմ ծաղիկներ անգունդներում վրայ ծղաւծ:

Միծառք դում չըլեցիր՝ բեւն ալիքին քաթիկով՝
Երբ տարփագինն կը կանչէր քեզ վիհերու քովանէն
Արեւուն սակ փայլակող աստուածային խրճնոյտին.
Զոխորհեցար դում բնաւ՝ թէ կ'արժէ՛ կեանքը ապրիլ (էջ 180) :

*Մասնումի եւ, երբեմն, յուսախարութեան ծայրագոյն սահմաններուն
հասնող այս բանաստեղծութեան մէջ, ուր անհատական ու հասարակական փո-
ճառութիւններ կ'արձանագրուին նաեւ, Վարուժան բառերուն ու ապրումնե-
րուն վրայ հաստատած զասական ժուճկալութեամբ մը, երբեմն նուրբ զնա-
րականութեամբ եւ երբեմն ալ վիպապաշտ շունչով մը, Մ. Պէշիկիսիւսի մեծ
մինչեւ Գուրեան ու Տէմիրճիպաշեան, եւ կարողացած միջազգային վարպետ-
ներուն ժառանգութիւնը իւրացուցած կը ներկայանայ: Եւ «Տրտուեցէ՛ք, որ
արդէ հայ գեղթողութեան լուսազոյն շերտը բանաստեղծութեան» նոյննե-
րէն մէկն է, ժառ կը կազմէ այն նոյն հատորին, ուր զիւցազնական շունչով
մը պատմուած է «Լարն»...*

Կարծէք «Տրտուեցէ՛քին անձնական ապրումներու բաժինը կը կազմէ
«Լարն» գերթուածը, մանաւանդ երբ կ'ըսէ՛.

Կանուխ է դեռ, — իմ ձեռքերս իմ արեան մէջ
Թաթիկու դեռ կանուխ է (էջ 302) :

*Բանաստեղծութեան վերջին տողերուն մէջ շրճորին զիմաց աւելցը-
նելու.*

Եւ Լարնկան (որ պիտ' փշրի անկումէս
Մընուկ տալով հագարատը աստղերու),
Յետոյ դարձեալ, խաղաղիկ,
Պիտի անէ՛ ձեռն իր նայիկին, պիտ' ըլլայ
Զուրեմուզ վրայ՝ իմ անձնատգան հոգիէս
Բողբոջած մեծ արիւնիլայ ճանաչաբար
Մ'որուն արմատն ոչ ոք գիտէ թէ ո՛ր է (էջ 304) :

*Եւ խորհիլ, որ «Հեքիազի Երզնկայի մէջ «Տրտուեցէ՛քին կը յաջորդէ
«Առկայծ ճրագ»ը, որ էր 12 տողերով, կառուցումի եղանակով, տարբեր նը-
կարտիք ու տարբեր աշխարհ կը բերէ: Տակաւին նոյն հատորին մէջ տեղ
դրուած են «Արեւիկան բաղաճիք»ը, «Օրինակ եւ դու...»-ն, «...Ո՛վ Լայա-
գէն», «Գեղեցկութեան արձանիմ», «Բեգաս»ը, «Պատգամաւորներ»ը եւ նման
այլազան բանաստեղծութիւններու շարք մը, ինչ որ, կրկին, Վարուժանի իրա-
պաշտութիւնը պայմանական հասկացութեան մը կը վերածէ...*

*Իր նամակներէն մէկուն մէջ, ուղղուած երեսուսարդ բանաստեղծ Վաւ-
րամ Երէցեանի, Վարուժան կը թելադրէ ինքնուրոյն ըլլալ, աւելցնելով՝
«Մանաւանդ լաւ է կարգալ հելլէն ու հռովմէական դասականները եւ յետոյ
Եւրոպայի գրականութեան կոթողները» (23), այսինքն՝ հետեւիլ ի՛ր իսկ գար-
գացումի եղանակին:*

*Վարուժանի մէկ այլ նիղը, շմուշու արեւմտեան վարպետներու, ար-
ժէքներու կամ նաշակներու ծիրին մէջ միայն, իր սրտին այնքան մօտ Գու-
լակով կամ արեւելեան աւանդներով ստեղծագործելու նաեւ՝ կը գտնենք
«Հացին երգը» բանաստեղծաշարին մէջ: Այս մէկը չի նշանակիր, թէ արեւ-*

մըտնանք մերժուած է հաս, այլ՝ նոր տարբերու հետ սահղծած է տարբեր համարում մը, ուր ժողովրդային երգերու հետեւողութեամբ տաղեր, խօսակցական ձեւի տողեր ու բացազանչութիւններ, իրենց պարզութեամբ, թեթեւութեամբ, խառութեամբ կամ չափերու այլազանութեամբ կրկին նոր ուղղութիւն կը նշեն:

Եթէ Օշականի իսկ «Վկայութեամբ» Վարուժանի զլխուսը առանձնայայտնութիւններէն մէկը ամբողջ ժամանակաշրջան մը (ի՛ր ժամանակաշրջանը) բերելու յատկանիշն է (24), այս զի՞ծը բացակայ է տուեալ հատորին մէջ: Ինչպէս «Էնքամու» երգերու հեթանոսական շարքը ամբողջ անցեալ մը կը վերակենդանացնէր, ուր բանաստեղծը կը ներկայացնէր սեփական պատկերացումը մարդէ կակին եւ մարդկային յարաբերութեանց, աոյն հատորին մէջ Վարուժան կը նկարագրէ իտէալական կացութիւնը մշակին, հայ մշակին, որ իր հողին վրայ կ'աշխատի: «Վազուամ քաղաքներու խոր ողբերգութիւնը չկայ այստեղ, համիտեան խժողովութիւններու հետեւանքներն ալ չենք տեսներ, այլ՝ համամարդկային մակարդակի մը վրայ, մշակին աշխատանքը հողին հետ:

Նոյն Օշականը, բացի քանի մը քերթուածներէ («Վայերու գիշեր»), պիտի դատապարտէր տուեալ հատորին բանաստեղծութիւններուն «նկարագրողական» բնոյթը, ինչպէս Հ. Ռչտունի եւ հայրենի քննադատները կը զովարանեն այս բանաստեղծութիւններուն... պարզութիւնը: Մինչդեռ Վարուժանի «Մշակական» բանաստեղծութիւններուն հիմնական իրազօրծումը քերթողական մտահոգութիւններու ծիրին մէջ կ'իյնայ:

«Հումնձ կը ժողովեմ...»ը կարծէք ժողովրդային երգ մըն է, կրճիտասեան ձեւով վերցուած ժողովրդային բանահիւտութիւնէն, անոր արագ ու թեթեւ տողերը:

- Հումնձ կը ժողովեմ մանգաղով,
- Լուսնակը ետքս է —
- Ակոս սկոս մամ գալով
- Սիրածս հարս է: — (էջ 43):

Կրնան խոր աղղեցութիւն չձգել իբրեւ բանաստեղծութիւն, սակայն տարբեր շունչ մը կը բերեն վստահարար: Նոյն օրինակին մէջ կը տեսնենք, որ ինչպէս երկու տարբեր չափեր (4-3 / 5 / 4-3 / 5) նոյն տունին մէջ կը խաչածեւուն: Իսկ «Մշակին երգը» հատորին բանաստեղծութիւններուն կէսը մտաւորապէս տարբեր չափերով կազմուած է, որոնք հետեւողականօրէն կը կիրարկուին, եւ այս հետեւողականութիւնն իսկ առանձին նկարագիր կու տայ քերթուածներուն:

Չափի, կլասիքի փոփոխութիւնը երբեմն կու դայ խօսակցական արտայայտութիւններէն, ինչպէս «Վամներգ»ի քոսատողին յաջորդող երկու տողերը:

- «Ետրձի՛ր, կամբս, արագ շարձիր, հիւ, հիւ.
- Նուանէ դէգերը հումնձերուս, ժիր, ժիր»: — (էջ 67):

Սակայն խօսակցական ձեւի տողերը, նոյնիսկ մշակներուն «Հօ՛, հո՛, հո՛, հո՛» բացազանչութիւնները, որոնք հարազատ են քերթուածներու մթնոլորտին, թարմացնող տարր կը դառնան: Պէտք չէ մտնել ժողովրդային ասացուածքներու, հաւատարմութիւններու ներառումը, որոնք նաեւ այս առումով կարեւոր նպաստ կը բերեն:

Այլուք՝ անանգական ձեւեր նոր շունչ կը ստանան Վարուժանի կիրարկած շրջադրձին մէջ եւ փնտառուք մը կը մատենն իր կողմէ, սեփական ջերասթողութեան ընդհանուր մարմնին մէջ ալլազանութիւն մտցնելու իմաստով Երինակ, զոչ տողերով ու կից յանգերով բանաստեղծութիւն զրելը զիւտ չէ, սակայն Վարուժան «Անդապան» զործին մէջ կը փորձէ զայն, սակաւին առաջին տողին մէջ բացազանութիւններով խառն խօսակցական լեզու մը զործածելով:

— «Եեկ՝, եեկ՝ արսերում մէր մարդ մարդաձայն չը մըտնէ» (էջ 35):

Եթէ վերադիւնալ տարբերը ինքնայատուկ կենդանութիւն եւ շարժունակութիւն կու տան որոշ բանաստեղծութիւններու, քերթուածներու, այլ շարք մը տարբեր ձեւի, զասական հանդարտութեան մը տակ, այլ աշխարհութիւն եւ ուժակնութիւն կը ցուցադրէ: Այս շարքին լուսազոյն օրինակներէն մէկը «Ճարնամի ծովեր» բանաստեղծութիւնը կը մնայ: Լայք մտքիւ պէտ կրկնուող, տուները բացող եւ փակող «Հովեր կ'անցնի / Ծովեր կ'անցնի» ներքին միջին, բանաստեղծական տարբեր չափի մը վրայ կը բացուի պատասա մը, որ առանց տուն զարդացում կ'արձանագրէ, նոր երանդներով կը հարստանայ:

Առաջին տունին մէջ կը սկի ներքին շարժումը: Անցնող հովերուն հետ ցորեանները կ'արթնան եւ անոնցմէ հասնող անսահման զոռը կը վարակէ եսեւ մեզ: Երկրորդ տունին մէջ հովին շարժումը կը ծաւալի:

Այնքան կ'յարդի, կը կատարի դաշտը յուսքի՝

Որ պիտի եմ արածող ուլը յոյզի (էջ 29):

Փոթորկած ցորեաններուն եւ կարծէք խեղդուող ուլին պատկերը այնքան իրական է, անակնկալ, որ վարկեան մը կը մոռնանք, որ բնութեան մէջ սովորական պատասաին հետ զործ ունինք: Յաջորդող փոխարեութիւնը՝ պատասաուղ եւ կարուող ցորեանի պատճառներով, որոնք լույսի եւ օտուերի խաղեր կը ստեղծեն, նոր նրբերանգներով կը հարստացնեն բանաստեղծութիւնը... Եւ այսպէս, հովին անցքին հետ, ցորեանի գաշաը, առանց տուն, մայրով հանդերձ «անփոփոխ», կը կերպարանափոխուի, նոր մանրամասնութիւններով ու նրբերանգներով կը հարստանայ, ինչ որ ներքին ու ժակնութիւն եւ ընչառութիւն կու տայ բանաստեղծութեան: Եւ միմիայն արտաքինապէս տեսնող, սակայն հանդարտօրէն հակադրուած լեզուի տիրապետուն է, որ նման արդիւնք կրնայ արձանագրել:

Իսկ երբ «Կալերու գիշեր»ը կը կարդանք, կը զգանք, որ այս աշխարհը որքան մտքիւ կ'զսած է հեղինակին համար, ինչպէս ներքինփորձառական աշխարհին մէջ բիւրեղացած է ժամանակի ընթացքին եւ ինչ զէր ունեցած է իր կազմաւորումին մէջ:

Եւ այսպէս՝ օր մը պատկած՝ փոփոխուիմ տակ երկնի,
Իմ ծնունդերու մըշակ՝ զիս յղացա՞մ կաքոզիմ,
Ձիս յըզացա՞մ սեւեռած իրենց աշէրը բարի
Վերմ ամէնէմ մեծ Ատողին, ամենավաա Հըրալըքիմ (էջ 65)՝

Բնութեան եւ այս աշխարհին հետ մտերմութիւնն է, որ գրողին թուի կու տայ լսելու միջոցին ընչառութիւնը, անհնելու ծիրանի դօտին տակ ծընող եղնիկն ու լուսնի նման եղնորդը, եւ կամ զգալու՝ զուրք լեցուած արցունքովը աստղերուն: Տակաւին բանաստեղծաշարին մէջ կը հանդիպինք այն

պիտի մտերիմ մանրամասնութիւններու, որոնք հաղորդակից կը դարձնեն այս գաշտերը եւ կը պիտակցինք, որ զարարչական ի՞նչ կորովս կը դանուժ այս անգամ Վարուժանի՛ մատուցած սրբազան հացին ետին...

Վարուժանի «մշակական»ներէն, Սիրունիի «Նաւասարդ»ին մէջ տպագրուած անտիպներու փունջէ մը մեկնած, հայրենի քննադատները երբեմն այն կարծիքը կը յայտնեն, որ բանաստեղծը իր շորթորդ հատորով հասած էր որոշ պարզութեան: Բառապաշարի առումով ճշմարտութիւն մը կընայ ըլլալ այստեղ: «Էնթանոս Երզնթուն» քննարկման ատեն, կազմակերպուած ինստիտուտի սանուց միութեան կողմէ, իրենց ուղղուած քննադատութեանց հիմնական մասը կ'երթար Վարուժանի բառապաշարին: Սակայն այդ ձեւի բանաստեղծութիւնները Վարուժանի քերթողութեան մէկ երակն են միայն, իսկ պարզացում է նման հարուստ երանդապնակով բանաստեղծին գոյները սահմանափակել մէկ քանիով միայն...: Պարզ է, որ երբ Վարուժան օգտորէն Հոմերոսի «Իլիական»ը կը խնդրէր, տարիներով փայփայած հոյակապ դիւցազնավէպը երկնելու համար, նման «տոնով» մը պիտի չդրէր զոյն, հաւանարար «Նարնք» պոեմին լեզուով ու շունչով դործ մը պիտի արտադրէր...

Այս իսկ պատճառով՝ Վարուժան կը մնայ Եղեռնի մեր ամենամեծ կորուստը, որովհետեւ Յ1 տարեկանին արդէն երեք կարեւոր դիրքեր ունի եւ ուժերու ծաղկումին մէջ է: Աւելի՛ն. ան քաղաքային կենցաղի մեր առաջին բանաստեղծն է, չարտարապետականացած, մեքենական կեանքի ամառլին տակ ճգնուած մարդուն մտերիմը, նոյն ատեն՝ քնարական յոյզերու բանաստեղծը, Հեթանոսական աշխարհի բանաստեղծը, ազգային-հաւաքական տաղանակներու ու ձգտումներու բանաստեղծը եւ մշակներու աշխատանքին երբ դիչը:

Վարուժանի ամբողջական աշխարհի մը պատկերացումը, Հեթանոս կամ այլ, կրնայ շատ բան չըսել մեզի այսօր, եւ կամ՝ վիպապաշտ երազ մը նըկատուիլ: Կատարելութեան հասնելու ձգտումը նոյնպէս, ստեղծագործական ու անհատական մակարդակներու վրայ, կրնայ տարբեր ժամանակաշրջանի մը երազը կամ հեռանկարը թուիլ, սակայն Վարուժան այն մեծ թոխչքի բանաստեղծն է, որ շարաքերաբար իր ստեղծագործական կարճ տարիքին ընթացքին, ո՛չ միայն տարբեր դարաշրջաններու դասականները ուսումնասիրած է եւ առանձին բանաստեղծական յղացք կազմած, այլեւ, միաժամանակ, ան այլեւս մեր արդի քերթողութեան պայծառ դիմադիրներով դասականը դարձած է, եւ մի՛շտ կը մնայ... յորդող աղբիւրը լոյսի:

ՅԱՐՈՒԹԻՒՆ ՊԵՐՊԵՐԵԱՆ

ՕԳՏԱԳՈՐԾՈՒԱԾ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ ԵՒ ԱՂԲԻՐՆԵՐ

- 1.- Վարուժան, Գ. «Մարտունեք», Սրբապետ, 1880:
- 2.- Վարուժան, Գ. «Յեղի սիրտ», Սրբապետ, 1883:
- 3.- Վարուժան, Գ. «Էնթանոս Երզնթ», Պոլիս, 1912:
- 4.- Վարուժան, Գ. «Հացին երգը», Պոլիս, 1921:
- 5.- Ճիզմեման, Գիբրիկ. «Գանիէլ Վարուժան — Դպրոցական կեանքը, անտիպ նամակները, զբոսականութիւնը», Գանիլի, 1935:
- 6.- Մառչյան, Գ. Ա. «Գանիէլ Վարուժան — Նամակներ», Սրբապետ, 1906: Յաղորդող Յարութիւն մէջ պիտի յիշատակուի իրեն ղեկավարները:

- 7.- Գրուպին, Ա. Ս. *Երանիէլ վարուժանի կենտրոնի և ստեղծագործութեան աստիճանը*, Երևան, 1984: Նախընտանիքի մասին հետազոտություններ
- 8.- Ռշտուհի, Հ. *Երանիէլ վարուժանը*, Հայաստան, 1961:
- 9.- Օշական, Յ. *Համապատասխան արհեստանոցի գրականութեան*, Խառն Զ., Պէրմուք, 1968: Նախընտանիքի մասին հետազոտություններ
- 10.- Երանիէլ վարուժան — *Երկիր*, խմբ. վարչի Գաբրիելյան. Երևան, 1984:

ՆՈՒՅԵՐ

- 1.- *Հեռագրակիր*, էջ 63:
- 2.- Նոյն, էջ 177-178:
- 3.- *Ճարտարագրություն*, էջ 21-22:
- 4.- Նոյն, էջ 38-39:
- 5.- *Երանիէլ վարուժան — Երկիր*, խմբ. վարչի Գաբրիելյան, Երևան, 1984: Սակայն ինչպես վարուժանի երկրում գիտական հետազոտություններ:
- 6.- *Հեռագրակիր*, էջ 56:
- 7.- Հիկոսթ Ռշտուհի բառական լայն ձևով էջ վերջում տակալ մտքաբանք, էջ 117-123:
- 8.- *Համապատասխան*, էջ 210-214: Օշական այլու ևս կ'անդրադառնա վարուժանի վիզուալացության, գրանցվածքային վերադրելով Միխայիլիանի ազդեցության:
- 9.- Կենտրոն *Վարուժան* կամ տակալին վարուժանի ամսական հարկերի մասին, *Հեռագրակիր* մէջ լայն տեսած բանաստեղծին պատասխանում կարգ մը փոփոխելու յետոյ գրադարանը մը կը տան վարուժանի վիզուալացու հնրանգին մասին: *Հեռագրակիր*, 1986, Օգոստոս-Նոյեմբեր, էջ 26-27:
- 10.- Տարածքի գրախոսականը լայն տեսած է Գ. ձիզվեանի հետաքննիչ մէջ:
- 11.- Ռշտուհի, Հ. *Երանիէլ վարուժանը*, էջ 141:
- 12.- *Հեռագրակիր*, էջ 157:
- 13.- Նոյն, էջ 151:
- 14.- Նոյն, էջ 66-70:
- 15.- Նոյն, էջ 138, ապա՝ 178:
- 16.- Նոյն, էջ 160:
- 17.- Նոյն, էջ 158:
- 18.- Նոյն, էջ 194:
- 19.- Նոյն, էջ 128:
- 20.- Նոյն, էջ 178:
- 21.- Օշական, հայր Արհեստակերպարանի Գրանցումների մը մէջ կ'ըսէ՝ *«...այս ձևով ու միտքով արագորէն ինքզինքն օր մ'առաջ գործն հետեւում [մեկնում]»*: *Հեռագրակիր*, էջ 114:
- 22.- Յ. Ռ. Սիբուհի. *Երանիէլ վարուժանի կենտրոնը*, վերջում Գ. ձիզվեանի հետաքննիչ, էջ 159:
- 23.- *Հեռագրակիր*, էջ 189:
- 24.- Օշական կ'ըսէ՝ *«Ռշտուհի գրականութեան գրականութեանը պատմութեան է ժողովուրդի մը անկէն տարածան, իւր, բարեբաղու ազդեցութեան, Համապատասխանը*, էջ 184:

Ներկայ բացառիկն էջ Գ. Վարուժանին նշ-
 արած գրութիւններ տարաբար մեր բանաս-
 անկներէն երկուքը, Յ. Գեղարք եւ Յակոբ Մա-
 նուկեան, անշուշտ ասանց իրարմէ լուր ունենա-
 ւաւ, «Օձը» խորհրդապատկերին խորհուրդը բա-
 րակրով՝ անոր խորհին փորձած են տեսնել բանաս-
 անկին սէրը մերձած պիտեցայի կերպը:

Անդրադանայով առ այդ ծաւալած ու խո-
 րացած ստանապակեներուն, Յ. Գեղարք կը գրէ,
 որ բանաստեղծը «էլզեման այս փետիլուսիմ
 դառնա՞ծով յիշատակը կը փնտնոցէ զՕձը, զՏըր-
 սուսէջը (եղիս Տեմիրիզաշեանի հուիրում) եւ
 կտրց մը այլ փրթուածներու» (էջ 38):

Իսկ Յակոբ Մանուկեան, ասորեան մը ան-
 լի մտանայով «Օձ»ին՝ կ'ըսէ.

«Էլզեմ, ուսանալուքեան շրջանիմ, կնոջ մը
 հետ քուտոխք մէկ համդիզուրը կը զուգակցէ
 յեմայիմ հատուր մը վրայ, Օգոստոսի արեւուն
 սակ այն պտասանսիմ, կրք օձ մը, գտնալի՞ծ ըն-
 քաջեմ, մայիցօրեմ կը արսիլ իր մանուցու թոյ-
 նը բանաստեղծիմ շտրթերում...»

«Օձի կերպարին մէջ վարուման կը վերքու-
 անդիլ ետքալատս զիմազատկերը այց կնոջ,
 որ...», Էւսյն, (էջ 39):

Գրականութիւնը ճշգրիտ գիտութիւններու
 մաս չի կազմեր ու արդէն չ'ո՞ր է իր անապատիկ
 խորհուրդը, որ ասիք կ'ընծայէ մտեցումք եւ
 մեկնաբանութեան այլազան հարստութիւններ
 յայտնաբերելու: Այս առումով՝ օձը, ըստ ինք-
 եան փորձանուտ արտած, զարձան է բազմաթիւ
 երկուցիներու ու գործններու խորհրդանշան, ու
 ամէնէն առաջ՝ կին արարածին: Հասկնարաք այս
 հանգամանքն է, որ պատմուս զարձան է Վարու-
 ժանի «Օձը» կցորդելու անոր սէրը մերձած կնոջ
 հետ:

Նման զուգանձեմ մը դիմաց անխուսափելի
 կը դառնայ սակայն ընթերցողին վերապաշտութիւ-
 նը, արուած բլլլով, որ օձային քնատրութիւն-
 ներէ ոչ գերէ այն միւս օձը սիրական բան մը
 ունի ի վերջոյ եւ անպայման թոյն հեղելու հա-
 մար է, որ կը փաթթէ փնձգիմ մտազոյ իր-

22

միւ իրրիւ բազկը», միեւնո Վարուժանի այս օ-
 մը բացարձակապէս յարտազ արարած մըն է,
 մարդ էակին արցունքով յաղեցող, արեան ծա-
 րաւի, արփուտն ներհակը, արփային ամէն բանի
 թնամի կենդանի մը...

Մնաց որ, «Օձը» գրուած է շաւղիմիմի շա-
 վիմ» (27 Յունուար 1907) եւ շաւղիմիմի (4
 Ապրիլ) խորագրեալ բանաստեղծութիւններուն մի-
 չիւ ինկոյ մամանակաշրջանի մը՝ 20 Փետրուա-
 շին, այն պահուծ, կը բանաստեղծը բարբոզին
 կրանուած էր հայրենական տարերային արուս-
 ներով եւ անհատական վիճակը լուսներ, իսկ կի՞ն
 պիտեցայի անմասն կնոջ հետ կ'ույ անզմ ու-
 նէմ, կրանական պէտք է ըլլար այդ կապը, զե-
 դուծ, ընդուն, որովհետեւ նոյն տարուին ամբող-
 շերէ միայն Վարուժանի զգաց, որ «Կիմը լինց
 զիս յաւնոյ», այսինքն՝ Կամրոզ տարի մը անոր
 քիչերում խորք ընկզմիւնէ ծագ, շէտանայ գրած
 օրերուն, 16 Օգոստոս:

Հասկնական է, որ Յ. Գեղարք մեկնած է
 շաւղիմիմի տարեդրեքին (1900) մէջ իր կողմէ հրա-
 տարակութեան արուած Յակոբ Արստանի վա-
 րուածական յուրէն, որ, ոչ պայման տարիքի մը
 դրսուած ըլլալու էր հանգամանքով՝ բնու հիմք
 չի տար ի զէմս «Օձ»ին տեսնել պիտեցայի օձը:
 Յետոյ՝ պիտի լմտանայ, որ Վարուժանի «Օձը»
 անգաւարած է «Տեղիմ սիրոյց» հատորին մէջ ու
 զայն չէ վերապաշտ արորդի, ինչ՝ որ ըրու
 նոյն շրջանին ու «Տեղիմ սիրոյցին հազմութեան
 լուս առաջ գրուած վնասիմ մեղքը», շէտան,
 «Օրինեմալ ես դու ի կամուս», շաւղիմ եւ կանո-
 սան ալլ զերթուաններու պարագային:

Ներկայ բացառիկն էջ Գ. մեր երիտասարդ
 աշխատակիցներին ուրիշ մը, Ն. Դիմաքեան, Յ.
 Գեղարքին եւ Յ. Մանուկեանին բարբոզին տար-
 բեր հենքի մը վրայ վերջումն է «Օձը», մտե-
 նայով անոր խորհրդական գիտակիւնէ մը:

«Այս շրջագիծիմ մէջ, կ'արծի հոմանքեան
 երկը քաջի վարումամի համեմատաբար էիլ աւ-
 շտարութեան արծախաղած «Օձը» բանաստեղծու-
 քեան եւ երապակեմ երկիրներու վերաբերումիմ
 մէջ դրսեւորուած անամուքեան միջիւն» (էջ 67):

Անպայման հետաքրքրական այս մտեցումնե-
 րուն հետ, զիմացի էլին կ'արտադրեմ նոյն բա-
 նաստեղծութեան վերաբերող հայրենի մտաւորա-
 կաններէն երեքին ընկալումները, յուսալով ու,
 բազմալիմ, որ մեր երեք աշխատակիցները կամ
 ուրիշներ յաւելեալ հիմնաւորումներով կը հոխա-
 ցենն «Օձ»ին թղթածարը...

... Ե Ի Օ Ձ Ը

Մինչ ժամից սուրբի ու ինքնաթիռ պետական թռչի մեկնում այդ ամենը պատկերազարդ Վարսմանը իր «Օձը» քանդակագործական մեջ, որը խորհրդանշան է սուլթանական թուրքիայի, ցայց է սուլայ, թէ ինչպէս հայի շարժումը ու արեւմտի անուղ անը ինչպան էլ մշտն վրասն էր կարծիք նամբով զնպի ստաղամտ բարձունքը քայլով պարժանում, միևնոյնն է՝ չպիտի կարգանայ կանցնել ժողովուրդական զարգացման անհրաժեշտութիւնը վեր բարձրացող հայրենու ընթացքը, ինչպէս մ'լ մի ուր չի կարող կանցնել արեւմտ ու արցունքով անուղ հայի այդ զարգացման անհրաժեշտութիւնը վայր դիրքուող սօր անկումը (ս'նանիլ Վարսման, Երևան, 1901, էջ 96):

ՅՈՒԼԱՆՆԵՍ ՂԱՆԱԼԱՆՆԵՍ



«Օձը» չեղթուստում պատանին, որ լիբան կողմն լայն վերջի պէս բացուած կարծիք նամբով բարձրանում է զնպի վեր, զնպի սպաս, ընդարձակ դաշտերը, զնպի սուրբ, խորհրդանշան է պատարժանն ու լայնի նամբար ժողովուրդ Արեւմտահայաստանը, որ ստաղամտում է լինի սակ: Գիծայից այդ արեւմտ նամբով վայր է իջնում սօր և նանդիկով պատանան, կանգնում նրա զիծայ: Մի պակ նրանք չափում են միեւնոյն ուժերը.....:

Արփույն Յերեսի, միշտ այդ կարմիր մամբային՝
 Աձ կ'իջնէր, ես կ'իլլայի'....

Չեաք է սանչ, որ մինչ օրս չէի չի բացարձայունել Վարսմանի նման սիմվոլիկ պատկերների զարգացման համբունը:
 Այս պատկերները զարուար ճիշտն ու հարստահարան, պատարժան պայթուի և պարժան շաւտանութան խաղաղութիւնը են, արեւի ուղին չիրցնող ժողովուրդի ցեղաց պատարժանը (ս'նանիլ Վարսման, Երևան, 1901, էջ 129-130):

ՀՅՅՅՈՐ ՌԵՏՈՒՆԻ



Համբունն անուշիտի ժողովուրդներին և յսակապէս նայ ժողովուրդին սկզբում էր իր ճիւղաններէ մէջ: «Օձը» այդ անուշիտի սիմվոլիկ պատկերն է: Բանաստեղծը պատմում է պատանան մի օր հայրենի կանգնում զպատանան մի զնկարի մասին: Ինչը բարձրանում է լինի ի վեր, զիծայից իջնում է մի հոկայ սօր:
 Սիմվոլիկ պատկերը անիւն զան պարզ է: Օձը թուրքական բանաստեղծութիւնն է, շարտարան թայնով լինան, պատարժան մակ բերելու իր նամբին պատանան սօրն մէկին, նամբար ինչով նրան խաղաղութիւնը էր նամբին: Օձը՝ վայրենի, անանանան, թաւար: Գառանի՝ անուշիտ, թուրքամբ չի և կանգնում խոնարհու, որ նիւում է զնպի լինը և իր զարձանը ընդարձակ, — հայ ժողովուրդն է՝ նպարժում և կրազով:
 Եւ նրանց կանգնում են զիծ զիծայ, մէկը՝ թայնով զիծան, միւրը՝ կեանքի զպատարժան: Մայնիցն ստիւնով սօր փաթարժում է պատանու մատաղ իրանին:
 Նրա թայնի զիծայ սօրին պատանին իր անխաղաղ կանում է զթովանքի հոկարտ մատաղի, զիծաստեղծինք ժողովուրդ, ընդին լայն: արանց թնկնում կամ սանում են զիծայը ևնչ կենդանութիւն:

Ելստացած էր իմ արցունքով, արիւնով,
 Ա՛լ, զերթ սօրի կենդանի,
 Արփույն Յերեսի, միշտ այդ կարմիր մամբային՝
 Աձ կ'իջնէր, ես կ'իլլայի'....

Այստեղ ամեն բան իմաստաստուած է, ամեն բան խորհուրդ անիւն: Մինչ թիւում է, միւրը՝ նիւում: Վայրենի, յնաստեղծական թուրքիային բանաստեղծը անխաղաղ է վեր բարձրացող, մշակութային առաջնութեան պարզ նայ ժողովուրդին (ս'նանիլ Վարսման, Երևան, 1978, էջ 181):

ՎԱՅՅԵՆ ԳԱՐԻԵԼԱՆ

Հ Ա Յ Հ Ո Յ Ա Ն Ք



Լերան վրայ, լուսին տակ,
 Հայածուածները նայենիւրէն կու լան
 Պառաւ մշակարծ անոնց մէջտեղ կանգնեցաւ,
 Ու մէկ ձեռքով յենացուպին կրօքընած՝
 Միւսը՝ ջգուտ բռունցքով՝ ցըցեց դէպ՝ երկինք . —
 Յետոյ սառնի ըսկբաւ .

— «Աստուած, Աստուած Լուսաւորչի, Ներսէսի,
 Աստուած մենգա՛ղ, Աստուած արեա՛մբ մարմնաբայծ՝
 Ինչպէս Պիւթոն մանուպատին մէջ պառկած . . .
 Այսօր սեա կ'ընդվզիւմ
 Ու բռունցանայ հաւատքիս մէջ ջերմեռանդ,
 Եւ մայրութիւնս ու հայութիւնս՝ որոնց յար
 Մըրտիս մէջ թո՛յն ջամբեցիր
 Իբրեւ երկու խայթ խզնի
 Կայծակնախիս կողերուդ մէջ կը մըխեմ .
 Դու որ մատղաշ տարիքիս
 Հարսանկամ քոզս արիւնով մերկեցիր,
 Եւ թռչոյ տրիր՝ որ թռեւորուս վրայ ջարդեմ
 Լուրթ փոզէմքոքս բնիկ հողով քըրծըւած,
 Դու որ այս ծեր տարիքիս մէջ տակաւին
 Երկիւմունքիս լակ քաղցով լեցուցիր
 Եւ սրբազան ցուպը մեկնող հասակիս
 Թաթախեցիր արեամ մէջ,
 Դու որ Որդւոյդ հայն աղբայէն բըլշակեմած
 Իմ այժերս այս սահմանեցիր դեռ լազու
 Մորթըւած եօթն գաւակ,
 Դու՛ գերդ վիշապ երկնածին
 Երկու թաթերդ երկու անգլի վրայ դրած,
 Ծրակ՝ եւ տե՛ս . — Ողորմութեանդ սրտութիւնն
 Համ վարը, տե՛ս . — Գիւղե՛ր, գիւղե՛ր եւ գիւղե՛ր
 Կը իբրդեռիս, եւ բոցն իրենց կը հասնի
 Արարատէն բարձր եւ բա՛րձր բեզմէ .
 Ահաւսիկ գաշտերում մէջ խամօտած .
 Հագարատը խոցուածներ
 Իրենց ջարդուած կողերն ընդհարչ կը տանին .
 Մեր ոսկըրմերը կրակին մէջ մերմըկցած
 Կը պատրաստեն ալիւրն սեա մըշխարփոյ,
 Եւ մեր արիւնն յորդարուխ
 Կու գայ միջիւ եւ ըսկիւնեբրդ լեցնել .



Գ. Վարուժան, գործ՝ Աստիղ Պատրիկի

Համբաներուն վերայ
 Կը լըսուի մօտի՛նը Քըշնամի սայլերուն՝
 Որունց մէջ մեզըն ու կաթը մեր կը կըրեն,
 Արիւնը մեր արեգակին, կեանքն հողին
 Եւ արծաթները Սեղանիդ նըսիրում :
 Վար նայէ, հո՛ն. — Մեր թոնիրները բոլոր
 Իրենց զբարթ բոցին վրայ կը փըլչին,
 Եւ կը մարի ծովն հայրենի ծըխանին,
 Եւ կը լըռէ մըշակներուն երգն համդարտ.
 Ուրէն հասկ իր քիտտերէն վար կը կաթէ
 Արիւն, ամէն ազրիւր անցած ճամբուն վրայ
 Կը լուսոյ վէրք մ'աւ ամէն
 Յուլագ դիակ մը դէպ' որչն իր կը բռչէ.
 Իսկ կիներն հոս իրենց ծումկին վրայ կու լան
 Երիտասարդ գրուխներ.
 Եւ մանուկներն անարեկ,
 Երեխաներն անօթի
 Զը գըտնելով մօր ծիծերուն մէջը կաթ՝
 Զերդ նըշենոյ ծաղկած միւղեր կիսաբեկ՝
 Կը մեռնին չոր ըստիմենքէ վար կախում :

Աստուած, Աստուած Լուսաւորչի, Ներսէսի,
Ռաբմն ա՞յս էր, փոխարեմն ա՞յս էր միքէ
Մեր ազօքֆին, մեղքաւանին, կընդունկին...
Արդ ունկնդրէ՛. — Բնութեան հագար փապերէն,
Սեղաններէն գոհորու
Ջինջ աստղերէն կամ սրտերէն մանկական՝
Ուր քեզ դողով կը պահեն՝
Ինձ ունկնդրէ՛. — Յանձն այն
ժողովուրդին՝ որ քեզ սիրեց եւ սասնց
Քու օգնութեանդ խայտեցաւ,
Յանձն անար՝ որ ողջակէզ ըրաւ քեզ
Ոչխարներէն ամէնէն կոշտն, ամէնէն
Լքծրնկէցն իր ցուրտուն,
Եւ իր գինին խմորած
Սափորներու մէջ պարփիւր
Քու արիւնիդ սահմանեց.
Յանուն անար՝ որուն սրտին վրայ, գարեր,
Իբր աղամանդ կըտուանի
Կայծակեցաւ ստօղոյ գրիւր, ուզեցիր
Որ կրունկիդ տակ փըշընով
Յոյիւրներն իր դիմամարտ՝
Սրբարանիդ մարմարներուն վրայ միայն
Յոյսի՞ն անքերը վառէ՛.
Եւ յետոյ ա՛յ իր պաշտումէն՝ կըշտապինդ՝
Ջայն, իր Յիսուս Բամայերու մէջ թողլըքած,
Էլի՛ լա՛ճա... ըրիր քաջտիսն իր՝ թունտ,
Կողին նիզակն՝ հաստաբուն,
Յամուն այդ հէջ ժողովուրդին կըծեմ ես
Սա մրթընշաղ ժամուն մէջ ո՛ր որ ըլլատ,
Ո՛ր աստղին մէջ եւ կամ ո՛ր
Թուրս ամպին վրայ շանթ իր թո՛ղն.
Իմ կրունքս թո՛ղեզ կը գրառէ՛
Եւ բերանս ի՛նչ կ'եայեղէ՛...»—

Ըստ : — Իր շուրջը սրղաններն սեպրեկ՝
Գուլիսին ծածկած թեւերուն տակ իրենց մօր
Ըսկըսան լալ, եւ կիներն ալ ազօքեւլ.
Իսկ գագանները հեռաւոր լեռներէն՝
Արարչին սուրբ Անուան համար վրէժխընդիր՝
Լուսինն ի վեր երկա՛ր, երկա՛ր ոռնացին...
Ձը լըտեց ան, կամ չուզեց
Ոչինչ ըսել : Մօտեմազով դիւանաբ
Լայն անդունդի մ'առլեփին,
Մըրթմըրթալով, յուսահատ,
Ինձգիմէր վազ արձակեց...

Գ. ՎԱՐՈՒԺԱՆ

7. ՎԱՐՈՒԹԱՆ՝

ՀԻԱՆԱԼԻ ՀԱՅՅՈՑԻՑ

ԵՒ

ՎԱՐԱՐՈՒՆ ՕՐՀՆԵՐԳՈՒ...

Մեծերը, յաճախի աշակերտները ըն-
զուսակ ընտրեցրը, և ընտրեցողներէն Վա-
րուժան՝ էրնն ճիկ երգով յանախ աշգան բան
կ'ըսեն ու կ'ըսեն ախարի գորութեամբ, կամ
հրարութեամբ, որ էրնն ընծայուած աւազ տխ-
րածներուն հետ կը սասանն ոչ նուազ շշտակա-
լի ուրիշ պատկեր կ'ու:

Ընդհանուր ձևով մը ամէնք ալ գիտենք,
որ ցեղին բազմաարտի սրտին երգին է Վարու-
ժան, Հեթանոսական բազմապետ Հրապոյրներու
երգիչն ու երգիչը հայնի երգին, թայց նաև լոյ-
սի երգիչ է ալ, ՎՅՅՅՅՅ թանտանգութեան Ե-
րաշխարհութեամբ, հայնի երգին է, Վարսիք
նազնի Հրապոյր, կարտի երգիչը՝ Վարսիք Ե-
մանայնի զոգոյն ապրումով, սիրոյ երգիչը՝ ՎԳԵ-
զանէին կենսախայ ընտանութեամբ, բնշուա-
րութեան երգիչը՝ Վալազնի խոսիչ խորհուր-
զով:

Շարժը երկուք է, թայց վերոյիշեցնելուն վը-
րայ ճեղք պիտի ուզինք անչինել երկու ուրիշ-
ներ միայն ու շակ, որ Վարուժան հայտնայեղ
երգի է ու հայտնայեղն հակադիր բեւեռն Վը-
րայ ճեղքիցս ոչ արհեստն երգիչը:

Վարուժանն Վալազնիցը՝ արհեստն
մը շահ գեղեցիկ, վարուժանն ՎՅՅՅՅՅ
միջնագրու սուրբի մը հոգին աչքերացող ա-
զբեք մը շահ յանկուզի:

Սգուժ է արհեստ բանաստեղծ մը, որ ամէնի
իր ցաւը պոսթիկանտ սանն աչքան աչիւ բա-
ներ պատմի մտրոց, ու եզուժ է բանաստեղծ
մը, որ ցարեանով կատարէ արհեստն իր Ե-
րաշխարհութեամբ:

Մէր հակառակին երկու երեսները, ցախն
աւագութիւնը և շատանութեան անլոյսի կար-
կալը. առաջինը՝ արտաքին ստեղծու ճշտումով,
երկրորդը՝ բնական թեւով:

Թայց Վարուժանի հոգին ճիկ ու աղետիկն
զինաց ինչ հրապոյրներ ստացած են անոնք, որ-
քան վարարած, մարդկայնացած, այն աստիճան՝
որ ընթերցողը կը հաւատայ իրաբանչիք բա-
սին, յարժամին, պատկերին, նոյնիսկ ծաղկած
ցուպին, նոյնիսկ մահուան թեթևութեան, հար-
կոյց ու օրհնող ճերտներուն թոյր թեւանե-
րուն:

Մեն ցախ տէր՝ մեն հայտնի, մեն կենս-
քով կենսախայ՝ վարարուն արհեստը: Մեն...

ՕՐՀՆՈՒԹԻՒՆ

Ափ մը ցորեան ափերուդ մէջ
Թող լեցունմ, կրտիճ Ռոզիս.
Կրտիճ Ռոզիս, գօսի՛ն մէջքիս,
Թող մաճակալ բալուկներդ
Քրսան ցույի արին անցնի,
Եւ եղեւի քու հասակդ
Քրսան տունի սինը կանգնի.
Ու երբ թիւղ մասնեբուդ
Սերմանն քու սերմնցուն՝
Հընձն թիւղ՝ սաստիբուն:

Ափ մը ցորեան գրուիդ ի վար
Թող որ քափեմ, Թոռնի՛կ սիրուած,
Թոռնիկ սիրուած, ցուպս ծաղկած,
Թող ճակատիդ վրայ գրուի
Հարիւր սաղմոս իմաստութեան,
Եւ սուերուդ վրայ գրուի
Տասանակը ըզաստութեան.
Ու երբ հօտիդ օր մ'այցիկես՝
Թող քու ափիդ գարինն
Հապար սչխա՛ր երկարին:

Ափ մը ցորեան մապերուդ մէջ
Թող որ տեղամ, վա՛րդ Թոռնուիս,
Վարդ թոռնուիս պրսակ շիրմիս.
Թող այտերուդ վրայ շողան
Ամէն գարուն նո՛ր կակաչներ,
Եւ աչքերուդ մէջ լողան
Ամէն ամառ նո՛ր ճաճաններ.
Ու երբ տրեկես ճիւղ մ'ուզի՛
Ամէն ապրիլ դուն տեսնես
Ի՛ր շուքին տակ կանա՛նչ քեզ:

Ափ մը ցորեան ծոցերուդ մէջ
Թող որ ցանեմ, Հարսըս աղուոր,
Հարսըս աղուոր, ս՛րս հեռաւոր.
Թող անկողնիդ ակօսին մէջ
Հասկ մը ծրի՛ լրման շարքով,
Եւ օրօրած օրօցքիդ մէջ
Արշալոյսնե՛ր ննչն փառքով,
Ու երբ կրթես քառուն երկն՝
Դոյլերուդ մէջ մակրդի
Կարը՝ արծաթ, դա՛կն՝ ոսկի:

Ափ մը ցորեան, ափ մը ցորեան,
Ս՛յ իմ պատաւ, ա՛յ իմ Աննա,
Մեր դրիմուն աչ քող որ տեղայ.—
Թող չքստի՛ արեն աշնան
Մեր մապերուն ձիւներուն մէջ,
Չը մարի՛ մեր մումն իրիկուան
Փամուն մարմար սիւներուն մէջ.
Ու երբ դրուինք ա՛յ գերեզման՝
Մեր ներքե հողը, Աննա՛,
Քիչ մը կակո՛ւղ քող ըլլայ:

7. ՎԱՐՈՒԹԱՆ

ԼԻԲԱՆԱՆ

Հատավաճառ 25 Լ. Ո.
Տարեկան բաժնեգին 125 Լ. Ո.

ՍՈՒՐԻԱ

Հատավաճառ 25 Ս. Ո.

ԱՐՏԱՍԱՀՄԱՆ

Տարեկան բաժնեգին 40 Ամերիկեան տոլար

بَاكِينُ
مجلة شهرية ، ادبية وفنية علمية
المدير المسؤول
السيد اوتين كارنيك قرانجيان
PAKINE
REVUE MENSUELLE
LITTERAIRE & ARTISTIQUE
Propriétaire
Dr. A. KAZANDJIAN
•
Բ Ա Գ Ի Ն
ԱՄՍԱԳԻՐ
ԳՐԱԿԱՆՈՒԹԵԱՆ
ԵՒ ԱՐՈՒԵՍԻ
Խմբագիր
ԳՕՂՈՍ ՄՆԱԳԵԱՆ
Խմբագրութեան անդամներ
ՅԱՐՈՒԹԻՆ ՊԷՐՊԷՐԵԱՆ
ԱՄԳԻՍ ԿԻՐԱԿՈՍԵԱՆ
Վարչական պատասխանատու
Ս. ՏԵՐ ԽԱՉԱՏՈՒՐԵԱՆ
B. P. 11-8404 - Beyrouth - LIBAN
Tel. 296898

نيسان - أيار ١٩٨٥

digitised by A.R.A.R.@